«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

ՆԱԽԱԲԱՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ ՇՊՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (այսուհետ՝ ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Սույն զեկույցը պարունակում է համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՇՊՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 19

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՇՊՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 23

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 25

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 25

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 29

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 36

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 44

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 50

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 57

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 63

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 69

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 72

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 77

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 84

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 85

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 85

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 87

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 90

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 92

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 93

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 94

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ հանդիսանալով բարձրագույն ուսումնական հաստատություն, որն իրականացնում է կրթական ծրագրեր ՀՀ ՈԱԾ-ի 6-րդ, 7-րդ, 8-րդ մակարդակներում, Համալսարանի գործունեությունը միտված է տարածաշրջանում (մասնավորապես՝ Շիրակի մարզ, Ջավախք) ուսումնագիտական, մարզամշակութային կարիքների բավարարմանն ուղղված, փոփոխվող արտաքին միջավայրի և ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համահունչ՝ կրթական ծրագրերի և գիտական հետազոտությունների իրականացման միջոցով որակյալ ու մրցունակ մասնագետների պատրաստմանը:

ՇՊՀ-ն հավակնում է լինել Հանրապետությունում մրցունակ հաստատություն, որը պատրաստում է ժամանակի պահանջները բավարարող բարձրորակ մասնագետներ՝ համադրելով ուսուցման ավանդական և արդի մեթոդներն ու կրթական նորարարական տեխնոլոգիաները: Բուհն իր գործունեության բոլոր ոլորտներում կարևորում է շարունակաբար սովորելու միջավայրի առկայությունը և որակի մշակույթի շարունակական զարգացման անհրաժեշտությունը:

Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ համալսարանը 2022 թվականին երկրորդ անգամ անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում բուհին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի ժամկետով: ՇՊՀ-ը, փորձագիտական զեկույցում նշված թերությունների և խորհրդատվությունների հիման վրա կազմել է թերությունների վերացման ծրագիր և ժամանակացույց: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 13-ի նիստում հաստատված ՇՊՀ զարգացման նոր ռազմավարական ծրագրում (2023-2027թթ.) արտացոլում են ստացել նախորդ հավատարմագրման խնդիրները:

Նախորդ հավատարմագրումից հետո և ՇՊՀ զարգացման նոր ռազմավարական ծրագրի (2023-2027թթ.) հաստատման արդյունքում՝ վերանայվել և փոփոխությունների են ենթարկվել կազմակերպական, ծրագրային և բովանդակային բազմաթիվ ուղղություններ: Այսպես, համալսարանն իրականացրել է կազմակերպության կառուցվածքային էական փոփոխություն, որի արդյունքում ձևավորվել են ըստ ռազմավարական նպատակների պատասխանատու կառույցներ՝ Կենտրոններ: Կառուցվածքային փոփոխություններն առնչվել են գրեթե բոլոր ստորաբաժանումներին, միաժամանակ՝ հստակեցվել են դրանց նպատակներն ու խնդիրները, գործառույթները, պատասխանատվության շրջանակը: Որդեգրելով կառավարման նոր մոտեցում Հիմնադրամի կազմում գործող քոլեջի և դպրոցի վերաբերյալ՝ այս կառույցների զարգացման ուղղությունները դուրս են մնացել զարգացման ռազմավարական ծրագրից:

Անդրադառնալով կառավարման համակարգի գործունեությանը՝ փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ բուհն իր սահմանած նպատակների իրագործման համար

դեռևս չի տրամադրում համապատասխան ֆինանսական ռեսուրսներ, առկա ցուցիչներն անհստակ են, պլանների մշտադիտարկման մեխանիզմները դեռևս կիրառելի չեն: Կառավարման համակարգի արդյունավետության տեսանկյունից բուհն անհրաժեշտություն ունի կիրառելու որակի ապահովման համակարգի կողմից հավաքագրված տվյալները: Հաշվի առնելով, որ բուհը գտնվում է ակտիվ փոփոխությունների շրջափուլում՝ փորձագիտական խումբը շեշտադրում է իրականացվող բարելավումների շարունակաբար մշտադիտարկումը, շահակիցների կարիքների հենքով բարելավումների իրականացումը, ինչը էապես կնպաստի կառավարման արդյունավետության բարձրացմանը ու բուհի կայուն երկարաժամկետ զարգացմանը:

Կարևոր է նշել, որ համալսարանի ներքին շահակիցների շրջանում տեսանելի է կրթության որակի ապահովման մշակույթի ձևավորման գիտակցումը: Հստակեցված են որակի ներքին ապահովման կառուցվածքի նպատակներն ու գործառույթները: Այդուհանդերձ, որակի ապահովման ստորաբաժանումը դեռևս չի կարողանում լիարժեք վերլուծական տվյալներ ստանալ և դրանք ներկայացնել որպես կառավարչական որոշումներ կայացնելու հիմքեր, ինչն էլ խնդիրներ է առաջացնում գործընթացների պլանավորման համար կամ պլանավորածը գնահատելու ժամանակ: ՇՊՀ-ն կարիք ունի շարունակաբար զարգացնելու պլանավորման արդյունքի գնահատման ցուցիչները, հաշվետվողականության համակարգի վերլուծական բաղադրիչը: Թեև որակի ապահովման կառույցի քաղաքականությամբ և գործող գործիքակազմով ապահովվում է համալսարանի առաքելության իրականացումը, սակայն ուսումնական հաստատությունն անելիքներ ունի որակի մշակույթի նպատակները բոլոր շահակիցների շրջանում պատշաճ ներկայացնելու՝ շեշտադրելով առաջնահերթությունները, ակնկալիքներն ու կարիքները կառավարչական կարողություններն ու մշակույթը զարգացնելու նպատակով:

Ծավալուն աշխատանք է իրականացվել մասնագիտությունների կրթական ծրագրերի մասնագրերի լրամշակման ուղղությամբ: Կազմվել են բակալավրի կրթական բոլոր գործող ծրագրերով նորացված փաթեթներ: Մասնագրերում, ի թիվս այլ անհրաժեշտ տվյալների, նկարագրված են ծրագրերի նպատակներն ու խնդիրները, գնահատման մեթոդները, դասավանդման և ուսումնառության մեթոդները, կրթական վերջնարդյունքները՝ ՀՀ ՈԱՇ-ի կամ ՈՈՇ-ի դրույթներին համապատասխան, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ: Քարտեզագրված են ծրագրի վերջնարդյունքներն՝ ըստ դասընթացների: Մշակված են դասընթացների նկարագրիչները, որոնց վերջնարդյունքները համապատասխանեցված են կրթական ծրագրի վերջնարդյունքներին և այլն: Այս ամենը կարող է նպաստել ՄԿԾ-երի մրցունակությանը և ճանաչելիությանը, ինչպես նաև ակտիվացնել միջազգային համագործակցությունն ու շարժունությունը: Արդյունքում, 2023-2024 ուսումնական տարում բակալավրի կրթական ծրագրով բոլոր մասնագիտությունների համար կիրառության մեջ են դրվել նորացված կրթական ծրագրերի մասնագրերը: Պլանավորված են և ընթանում են մագիստրոսական ծրագրերի բարեփոխման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել մինչև նոր՝ 2024-2025 ուսումնական տարվա սկիզբը: ՇՊՀ-ն կարիք ունի առաջիկայում գնահատել կրթական ծրագրերի ուղղությամբ իրականացված փոփոխությունները, չափել դրանց արդյունավետությունը՝ աշխատաշուկայի պահանջների հիման վրա բարելավումներ իրականացնելու նպատակով:

ՇՊՀ-ի ուժեղ կողմերից է համապատասխան որակավորում և մասնագիտական փորձառություն ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի առկայությունը:

Համալսարանում աշխատում են բարձր որակավորում և փորձառություն ունեցող մասնագետներ, սակայն խնդիր կա երիտասարդացնելու դասախոսական համակազմը: Փորձագիտական խմբի դիտարկումները փաստում են, որ չնայած վերջին տարիներին բուհը համալրել է իր դասախոսական կազմը հիմնականում իր շրջանավարտ հանդիսացող երիտասարդ մասնագետներով, այդ թվում՝ գործատու-դասավանդողներով, այս ուղղությամբ իրականացվող քաղաքականությունն ամբողջովին արդյունավետ չէ: Լինելով տարածաշրջանային ինքնատիպ ավանդույթներ ունեցող համալսարան՝ բուհը պետք է լրացուցիչ ռեսուրսներ տրամադրի դասախոսներին մոտիվացնելու, մասնագիտական, մանկավարժական վերապատրաստումներ իրականացնելու նպատակով: Հավելյալ խրախուսումները (ոչ միայն ֆինանսական) կանդրադառնան նաև հետազոտության ոլորտում դասախոսների կողմից իրականացվող աշխատանքների թե՛ քանակական, թե՛ որակական պատկերի վրա՝ հնարավորություն տալով համալսարանին իր դասախոսներին առավել ներկայանալի դարձնել միջազգային հարթակներում՝ փոխանակման ծրագրերի, բուհի մասնակցությամբ իրականացվող միջազգային նախագծերի շնորհիվ:

ՇՊՀ-ն ունի լսարանային, լաբորատոր, գրադարանային և այլ անհրաժեշտ ենթակառուցվածք: Թեև առկա վիճակում ենթակառուցվածքներն ու ռեսուրսները բավարար են կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերման համար, կրթական ծրագրերի որակը բարձրացնելու, միջազգայնորեն մրցունակ դարձնելու նպատակով համալսարանը կարիք ունի իրականացնելու ենթակառուցվածքի, հատկապես՝ լաբորատորիաների ընդլայնման, բարեկարգման, արդիականացման միջոցառումներ:

ՇՊՀ-ին դեռևս չի հաջողվում անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրել իր գործունեության բոլոր ուղղությունների՝ ռազմավարական նպատակների համաչափ իրականացման և նախատեսված ծրագրերի լիարժեք զարգացման համար, ինչի հետևանքով որոշ խնդիրների լուծումը դանդաղում է: Հաշվի առնելով ռեսուրսների սահմանափակությունը՝ այս խնդրին լուծում տալու համար բուհը կարող է դիտարկել նաև ֆինանսական աղբյուրների բազմազանեցման հնարավորությունները:

Հաշվի առնելով, որ ՇՊՀ-ն ընդունում է փոփոխությունների անհրաժեշտությունը, կարողացել է կարճ ժամկետում առաջարկել կրթական ծրագրերի բարելավման պլանավորում, ունի դրա իրականացման և կազմակերպման համար մարդկային ներուժ՝ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք շարունակաբար զարգացնում է, և նյութական ռեսուրսներ, կարելի է եզրակացնել, որ ուսումնական հաստատությունն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհումը:

ՇՊՀ-ն, որպես ռազմավարական նպատակ, տեսանելիորեն շեշտադրում է արդիական և նորարար գիտական հետազոտությունների կարևորությունը: Նախորդ հավատարմագրումից հետո բուհը տեսանելի քայլեր է իրականացրել հետազոտության ոլորտում բուհի քաղաքականության սահմանման, ուսանողների և դասախոսների կողմից մարզի կարիքներին առնչվող հետազոտությունների իրականացման ուղղությամբ: Դասախոսներն ընդգրկված են հետազոտական նախագծերում, սակայն նրանց թիվը դեռ փոքր է: Համալսարանն ունի ներբուհական դրամաշնորհային մրցույթի իրականացման փորձ, սակայն հետազոտության ոլորտում մեծ հավակնություններ ունենալու պարագայում և առկա ռեսուրսների սահմանափակ լինելու պատճառով դրանք հաճախ դառնում են ոչ իրատեսական: Միևնույն ժամանակ, հետազոտության ոլորտում համալսարանի կողմից

իրականացվող քաղաքականությունը կարող է առավել արդյունավետ դառնալ կրթական ծրագրերի մասնագրերում և դասընթացների նկարագրերում արտացոլված հետազոտական բաղադրիչի, դասախոսների հետազոտական գործունեության, հետազոտություն-կրթություն կապի համատեքստում համակողմանի գնահատման արդյունքում՝ աշխատաշուկայի վրա դրանց ազդեցությունը ուսումնասիրելու և չափելու միջոցով:

ՇՊՀ-ում թեև կանոնակարգված է միջազգային համագործակցության գործընթացը, սակայն այս գործընթացներն առավելապես նպաստել են բուհի ռեսուրսների համալրմանը: Արտաքին կապերի և միջազգային ծրագրերի միջոցով բուհը հնարավորություններ է ստեղծում նաև դասավանդող և վարչական կազմերի փորձի փոխանակման ու կարողությունների զարգացման համար: Առավել քիչ է դրանց ազդեցությունը կրթական ծրագրերի լավարկման վրա: Օտար լեզուների, մասնավորապես՝ անգլերենի իմացության ցածր մակարդակն ազդում է շարժունության ցուցանիշների վրա և որոշ դեպքերում խոչընդոտ հանդիսանում ներքին շահակիցների համար: Համալսարանն արձանագրել է այս խնդիրը և միջոցներ է ձեռնարկում այն լուծելու համար:

ՇՊՀ-ն, իր ռազմավարական նպատակին համապատասխան, իրականացնում է հանրությանը գիտելիքի ու արժեքների փոխանցման միջոցառումներ՝ կարճաժամկետ ծրագրերի, կրթամշակութային նախագծերի, դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացվող քաղաքականությամբ, համայնքային միջոցառումներին ուսանողների և դասախոսների ներգրավման շնորհիվ: Ակտիվ են գործում համալսարանի էլեկտրոնային հարթակները՝ նպաստելով ուսումնական հաստատության ճանաչելիության ու հեղինակության բարձրացմանը: Հարկ է նշել, որ ՇՊՀ-ի պաշտոնական կայքը բավականին հագեցած է տեղեկատվությամբ, որի արդյունքում ապահովվում է հաստատության գործունեության թափանցիկությունը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Շիրակի մարզի զարգացմանը միտված ռազմավարությունը, համալսարանի կրթամշակութային և սոցիալական դերն ու նշանակությունը տարածաշրջանի համար,
2) ռազմավարական պլանավորման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների կարիքների արտացոլումը,
3) գործատուների հետ քննարկումների հիմքով բարելավված կրթական ծրագրերը,
4) կրթական ծրագրերի նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական կազմի առկայությունը,
5) կրթական ծրագրերի վերջնարդյունքներն ապահովելու համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի, ենթակառուցվածքների ու ռեսուրսների առկայությունը,
6) հաշվետվողականության մոտեցումները՝ գործունեության թափանցիկության սահմանված մեխանիզմներով,
7) միջազգային ծրագրերին մասնակցվության ընդլայնման արդյունքում ռեսուրսների շարունակական համալրումը և ենթակառուցվածքների վերազինումը,
8) որակի ապահովման վերաձևավորվող համակարգը, որը հիմքեր է ստեղծում որակի մշակույթի տարածման համար՝ ապահովելով իրականացվող գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը շահակիցներին:

Հաստատության թույլ կողմերն են.

1) կառավարման ու վարչարարության գործընթացներում որակի կառավարման շրջափուլի անկատարությունը,
2) ռազմավարական նպատակների իրագործման համար ֆինանսական ռեսուրսների բաշխման անհամաչափությունը,
3) ներքին և արտաքին շահակիցների ոչ ակտիվ ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում,
4) կառավարչական որոշումների կայացումը ոչ լիարժեք կամ ոչ ամբողջապես հավաստի տվյալների հիմքով,
5) դասախոսական կազմի սերնդափոխության իրականացվող քաղաքականության անարդյունավետությունը,
6) համատեղ կրթական ծրագրերի բացակայությունը,
7) շարժունության ծրագրերի բացակայությունը և փորձի փոխանակման հնարավորությունների սահմանափակ լինելը,
8) ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացության ցածր մակարդակը:

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) Խթանել արտաքին շահակիցների ներգրավվածությունը ռազմավարության մշակման և բուհի տեսլականի ձևավորման գործընթացներում:
2) Հստակեցնել ՌԾ-ի կատարողականի ցուցիչները՝ սահմանելով չափելի քանակական և որակական արդյունքներ:

Կառավարումն ու վարչարարությունը

3) Խթանել կառավարման հորիզոնական համագործակցությունները՝ նպաստելով լավագույն փորձի վերհանմանն ու տարածմանը:
4) Քայլեր իրականացնել ՄԿԾ-ների կառավարման համակարգի գործառույթների հստակեցման և դրանց լիարժեք գործարկման ուղղությամբ՝ բարձրացնելու ՄԿԾ պլանավորման և իրականացման արդյունավետությունը:
5) Համալսարանի կողմից սահմանված ԳԱՑ-երի ապահովման համար հստակ պլանավորել ֆինանսական ռեսուրսները՝ ապահովելով ֆինանսների արդյունավետ կառավարում:
6) Բարելավել երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի մշտադիտարկման ու բոլոր գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացումը:
7) Շարունակաբար գնահատել կատարվող փոփոխությունների արդյունավետությունը՝ կառավարչական որոշումների հիմքում դնելով հավաստի տվյալներ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

8) Պարբերաբար ուսումնասիրել աշխատաշուկան և արդյունքները կիրառել նոր կրթական ծրագրերի ներդրման, ինչպես նաև իրականացվող կրթական ծրագրերի ռիսկերի կառավարման համատեքստում:

9) Լավարկել ՄԿԾ-ներում կրեդիտների որոշման և բաշխման քաղաքականությունը՝ սահմանելով ուսանողների լսարանային և արտալսարանային ծանրաբեռնվածության հաշվարկի հստակ մոտեցումներ։
10) Մշտադիտարկել ուսումնառության և դասավանդման մեթոդների կիրառումը բուհում դրական փորձի վերհանման ու տարածման նպատակով։
11) Ընդլայնել ուսանողների փափուկ հմտությունների զարգացման ուղղությամբ կատարվող աշխատանքները՝ դիտարկելով լրացուցիչ պրակտիկաների, լրացական, ոչ ֆորմալ դասընթացների իրականացման հնարավորությունները։
12) Հստակեցնել ձևավորող գնահատման գործիքակազմը և կիրառությունները՝ ապահովելով հետադարձ կապն ուսանողներին՝ նրանց աստիճանական մասնագիտական զարգացումն ապահովելու համար։
13) Ներդնել ՄԿԾ-ների գնահատման հստակ ցուցիչներ և դրանց հիման վրա իրականացնել թիրախային մշտադիտարկումներ կրթական ծրագրերի բարելավման համար։

Ուսանողները

14) Ներդնել մագիստրատուրայի և բակալավրիատի հեռակա կրթաձևի ուսանողների ներգրավման ու կրթական ծրագրերի մասին իրազեկվածության բարձրացման մեխանիզմներ։
15) Քայլեր ձեռնարկել Ուսանողական խորհրդի՝ որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմնի դերի բարձրացման ու իրականացվող աշխատանքներում ուսանողների առավել լայն շրջանակի ներգրավման ուղղությամբ։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16) Վերանայել դասախոսական, ուսումնաօժանդակ կազմի ընտրության մեխանիզմները և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի տրամաբանությունը՝ ապահովելու աշխատակազմի կայունությունը։
17) Ընդլայնել դասախոսական կազմի մասնագիտական զարգացման հնարավորությունները՝ հիմնվելով նրանց կարիքների գնահատման վրա, ըստ դրա համապատասխան ֆինանսական ռեսուրսներ հատկացնելով և հստակ ժամանակացույց սահմանելով։
18) Խթանել գործատու դասավանդողների ներգրավումը կրթական ծրագրերում՝ ապահովելու, որ ուսանողները ստանան գործնական հմտություններ և համապատասխան պատրաստվածություն աշխատաշուկայի պահանջներին։
19) Շարունակել խրախուսել երիտասարդ դասախոսների ներգրավումը՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ և հնարավորություններ նրանց համար, այդ թվում՝ շարունակաբար զարգացնելով մենթորության մշակույթը բուհում։

Հետազոտությունը և զարգացումը

20) Լավարկել հետազոտական ոլորտում կատարողական ցուցիչների համակարգը՝ առանձնացնելով որակական արդյունքային ցուցիչներ և ըստ դրա մշտադիտարկել բուհի հետազոտական գործունեությունը։
21) Խթանել ՇՊՀ դասախոսների մասնակցությունը միջազգային կոնֆերանսներին և սեմինարներին՝ արդի հետազոտական միտումներին իրազեկվելու և տարբեր երկրների գիտնականների և գիտական կազմակերպությունների հետ համագործակցության ձևավորման նպատակով։
22) Ներդնել միջգիտակարգային հետազոտությունների իրականացման խթանման մեխանիզմներ ներբուհական և միջբուհական մակարդակներում։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

23) Շարունակաբար օգտագործել միջազգային ծրագրերի հնարավորությունները, դիմել դրամաշնորհային ծրագրերի ենթակառուցվածքների լավարկման նպատակով։
24) Քայլեր ձեռնարկել ֆինանսական մուտքերի բազմազանեցման ուղղությամբ՝ զարգացման բյուջե ձևավորելու և բուհի երկարաժամկետ կայուն զարգացումն ապահովելու համար։
25) Գնահատել կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ծավալը և իրականացված գնահատումը դնել ֆինանսական ռեսուրսների բաշխման հիմքում։

Հասարակական պատասխանատվությունը

26) Ընդլայնել հասարակությանը գիտելիքների փոխանցման հնարավորությունները՝ բազմազանեցնելով տրամադրվող կրթական ծառայությունները և ընդգրկելով արտաքին շահակիցների նոր խմբեր։
27) Պարբերական դարձնել ամառային դպրոցների պրակտիկան՝ ՇՊՀ մասնագիտական ուղղությունների շրջանակում։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

28) Գործուն քայլեր ձեռնարկել միջազգային ծրագրերում մագիստրոսներին և ասպիրանտներին ներգրավելու համար՝ նպաստելու հետազոտողների և դասավանդողների կարողությունների զարգացմանը։
29) Ներդնել համատեղ կրթական ծրագրեր օտար լեզվով դասավանդվող դասընթացների ներառմամբ՝ հաշվի առնելով ՌԾ առաջնահերթությունները։
30) Խորացնել Սփյուռքի հետ կապերը՝ հաշվի առնելով հայապահպանության հետազոտական ուղղության առկայությունը։
31) Կազմակերպել օտար լեզվի կանոնավոր դասընթացներ ուսանողների և դասախոսների լեզվաիմացության մակարդակի բարձրացման և շարժունության ծրագրերում ներգրավվածության ընդլայնման նպատակով։

Որակի ներքին ապահովման համակարգը

32) Օգտագործելով որակի ապահովման աջակիցների ցանցը աշխատանք տանել դասախոսների և ուսանողների շրջանում ինքնավերլուծությունների և գործընկերային գնահատումների կարողությունները զարգացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով վերապատրաստումներ, փոքրածավալ թիրախավորված ուսուցողական միջոցառումներ։

33) Լավարկել բուհի կարիքների վերհանման մեխանիզմները և հավաստի տվյալներ հավաքագրել բուհում տեղի ունեցող բոլոր գործընթացների վերաբերյալ։

Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

15-ը օգոստոսի, 2024 թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՇՊՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՇՊՀ-ն փոքր համալսարան է (ունի մոտ 2082 ուսանող և 234 անձից բաղկացած պրոֆեսորադասախոսական անձնակազմ) դասավանդման երկարամյա ավանդույթներով: Ուսանողների մեծ մասը բնակվում է Շիրակի մարզում և Գյումրի քաղաքում: Հետևաբար, համալսարանի առաքելությունն ընդգծում է կրթության կարևորությունն այս տարածաշրջանի կարիքների համար: Համալսարանի տեսլականի համաձայն՝ կրթական և հետազոտական գործընթացները պետք է ինտեգրվեն Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) և Եվրոպական հետազոտական տարածքի հետ: 2023-2027 թվականների ռազմավարական ծրագիրը սահմանում է միջազգայնացման նպատակներն ու խնդիրները երեք հիմնական ոլորտներից յուրաքանչյուրում (կրթություն, հետազոտություն և հանրային ներգրավվածություն): Կարելի է հաստատել, որ եվրոպական այլ բուհերում հայտնի բազմաթիվ լուծումներ արդեն իսկ իրականացվել են բուհում: ՇՊՀ-ն ապահովում է կրթություն Եվրոպական որակավորումների շրջանակի երեք մակարդակներում (6-8, նաև 4-րդ մակարդակում), ուսումնառության արդյունքները սահմանվում են ըստ ՈԱԾ-ի, կիրառվում է բենչմարքինգ, տրվում են ECTS կրեդիտներ և դիպլոմի միջուկ: Որակի ապահովման համակարգը որոշակիորեն համապատասխանում է ESG (Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ) պահանջներին: Արտաքին դիտորդի տեսանկյունից ՇՊՀ-ի կողմից 2022 թվականից ի վեր արձանագրված առաջընթացն ակնհայտ է իր աշխատանքի բոլոր ոլորտներում: Այնուամենայնիվ, դեռևս կան որոշ անհամապատասխանություններ, որոնք հիմնականում կապված են պետական կարգավորման, այլ ոչ թե բացառապես ՇՊՀ քաղաքականության հետ:

Շրջանավարտների՝ աշխատաշուկայում իրացվելը ԵԲԿՏ-ի հիմնական նպատակներից է և բուհական ուսումնական գործընթացի արդյունավետությունը գնահատելու առանցքային ցուցանիշ: Այսօր ակնկալվում է, որ եվրոպական համալսարանները կապահովեն շրջանավարտների որակավորումների համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին: ՇՊՀ-ի գնահատականն այս տեսանկյունից պարզ չէ: Աշխատաշուկայում շրջանավարտների հաջողությունը բարելավելու նպատակով համալսարանը հարցումներ է անցկացրել ավագ դպրոցի աշակերտների շրջանում, սկսել է աշխատանքի վրա հիմնված ուսուցման ծրագիր և երկարացրել ուսանողների պրակտիկայի տևողությունը և ավելացրել ուսումնական ծրագրի գործնական բաղադրիչը: Այնուամենայնիվ, առկա է անհամապատասխանություն տեղական աշխատաշուկայի կարիքների և առաջարկվող կրթական ծրագրերի միջև: Հարցված շրջանավարտների միայն մոտ կեսն է աշխատանք գտել, իսկ նրանցից զգալի մասը դեռ գործազուրկ է: Որոշ ոլորտներում ընդգրկվածությունը ցածր է, և ՇՊՀ ավագ դպրոցն ավարտած և ՇՊՀ-ում սովորողների թիվը նվազել է: Բացի այդ, համալսարանը վերջին երեք տարիների ընթացքում փակել է բակալավրիատի ինը և մագիստրատուրայի երեք ծրագիր՝ միաժամանակ հաստատելով երեք նոր ծրագիր: Հեռակա բաժնի ուսանողների մագիստրատուրայի ծրագրերը հետաքրքրության բացակայության պատճառով չեն մեկնարկել: Հարկ է նաև նշել, որ այլ երկրներում հաջողված որոշ կրթական ծրագրեր, ինչպիսիք են՝ «Համակարգչային գրաֆիկա», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ»,

«Համակարգչային գիտություն» և «Համակարգչային գիտություն և կիրառական մաթեմատիկա», փակվել են ՇՊՀ-ում: Ղեկավարությունը դա պայմանավորում է մրցակից հաստատությունների կողմից տրամադրվող կրթության ավելի բարձր որակով:

Կա երկու հիմնական պատճառ՝ ինչու են սահմանափակ ՇՊՀ շրջանավարտների աշխատունակությունը բարելավելու հնարավորությունները: Նախ, ուսումնական ծրագրերը բավականաչափ չեն հարմարվում իրենց շրջանավարտների զբաղվածության փոփոխվող միտումներին: Դրա օրինակն է «Անգլերեն լեզու և գրականություն» ծրագիրը: Ըստ ներկայացված տեղեկատվության՝ շրջանավարտների մեծ մասը դպրոցներում չեն դասավանդում: Այնուամենայնիվ, բոլոր ուսանողները պարտավոր են պրակտիկա անցնել դպրոցներում: Հայաստանում առաջնային գործատուն պետական հատվածն է: Զարգացած արդյունաբերական և մասնավոր բիզնես հատվածի բացակայությունը սահմանափակում է մատչելի աշխատատեղերի քանակը: Հետևաբար, հիմնական մարտահրավերը նոր աշխատատեղերի ստեղծումն է: Ուսումնական ծրագրերի դիտարկումը ցույց է տալիս, որ համալսարանն այս ոլորտում ուսանողների համար քիչ հնարավորություններ է առաջարկում: Բացակայում է դասընթացը, թե ինչպես սկսել ձեր սեփական բիզնեսը, ինչպես նաև ծրագրեր՝ աջակցելու նորաստեղծ ձեռնարկություններին (օրինակ՝ բիզնես ինկուբատորներին): Համալսարանը պետք է մտածի այս տեսակի կառույցների ստեղծման մասին և փնտրի դրանց արտաքին ֆինանսավորումը: Երկրորդ խնդիրը երկարաժամկետ հեռանկարում աշխատաշուկայում գործատուների կարիքների և շրջանավարտների կարիերայի համակարգված հետազոտությունների բացակայությունն է: Հետևաբար, համալսարանը չունի հավաստի տվյալներ իր շրջանավարտների նպատակակետերի, անբավարար հմտությունների տեսակների, պահանջվող ծրագրերի և այլնի վերաբերյալ: Ըստ երևույթին, նոր ուսանողների թվի վրա ազդող առաջնային գործոնը միջնակարգ դպրոցների շրջանավարտների հարցումների արդյունքներն են՝ աշխատաշուկայի իրական կարիքների վրա ավելի քիչ ազդեցություն ունենալով:

Գործատուները որոշակի ներդրում ունեն ուսումնական պլանի ձևավորման մեջ՝ որպես յուրաքանչյուր ուսումնական բնագավառի փոխկապակցված մեթոդական խորհուրդների անդամներ, ատեստավորման հանձնաժողովներ: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տվել բուհի ինքնավերլուծությունը և այցի ընթացքում անցկացված հանդիպումները, նրանց մասնակցությունն այս մարմիններում բավարար չէ: Համալսարանը տեղական աշխատուժի համար չի առաջարկում որակավորման բարձրացման դասընթացներ (բացի աշխատող ուսուցիչների վերապատրաստումից): Չափազանց կարևոր է, որ համալսարանը գործատուների ներկայացուցիչների հետ համատեղ մշակի ծրագիր՝ այս ոլորտում իրավիճակը բարելավելու համար:

Ավանդական հիերարխիկ կազմակերպական կառուցվածքը և կառավարման համակարգը, ինչպես նկատվում է ՇՊՀ-ում և բնորոշ է խոշոր բուհերին, այսօրվա դինամիկ միջավայրում անարդյունավետ է դառնում: Փոփոխվող պայմաններին հարմարվելու համար ժամանակակից համալսարաններն օգտագործում են միջդիսցիպլինար մոտեցումների և մեթոդաբանությունների բազմազան շրջանակ: Առկա փաստաթղթերի և քննարկումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆակուլտետներն ու ամբիոնները գործում են միմյանցից անկախ՝ նվազագույն համագործակցությամբ: Դրա մասին է վկայում ուսումնասիրության միջդիսցիպլինար ոլորտների կամ հետազոտական նախագծերի բացակայությունը, որոնք համախմբում են տարբեր ոլորտներից հետազոտողներին:

Հորիզոնական համագործակցությունը խթանելու լուծումների բացակայությունը խոչընդոտում է լավ փորձի տարածմանը, որոնք դասավանդման դեպքում մնում են ամբիոնների ներսում: Փորձագիտական այցի հանդիպումները ցույց տվեցին, որ որոշ ակադեմիական մարմիններ սերտ չեն համագործակցում, և միշտ չէ, որ տեղեկատվության լավ հոսք կա: Որոշ դեպքերում առկա է հաղորդակցության պակաս և դանդաղ արձագանք:

Համալսարանի կառավարման համակարգը դրսևորում է երկու առանձնահատկություն, որոնք համեմատաբար հազվադեպ են եվրոպական համալսարաններում: Նախ, համալսարանը չի երաշխավորում պաշտոնավարումը նույնիսկ դասախոսների համար, քանի որ ակադեմիական անձնակազմը միայն մեկ տարվա աշխատանքային պայմանագրեր ունի: Երկրորդ, ակադեմիական ղեկավարների մեծ մասը (բոլոր պրոռեկտորները, երկու դեկանները և ամբիոնի վարիչները) նշանակված կամ ընտրված չեն, այլ պաշտոնակատարներ են: Սա մեծ անորոշություն է առաջացնում և կարող է թուլացնել նորարարական նախագծերին և մոտեցումներին հանձնառությունը: Մյուս ուշագրավ տարբերությունը բուհերի կառավարման ոլորտում օտարերկրյա փորձագետների բացակայությունն է, նույնիսկ խորհրդատվական հանձնաժողովներում մասնակցության տեսքով: Հետևաբար, համալսարանը չի կարողանում օգտագործել այս ալիքն արտասահմանյան բուհերից ակադեմիական գիտելիքի և փորձի փոխանցման համար:

Տվյալների հավաքագրման և վերլուծության համակարգն ուսումնասիրելուց հետո պարզ դարձավ, որ կան էական թույլ կողմեր: Դա ակնհայտ էր այն պարզ փաստից, որ համալսարանը, չնայած ուսանողական հարցումների մեծ փորձին, չունի հավաստի տեղեկատվություն աշխատաշուկայում շրջանավարտների կարգավիճակի մասին: Ավելին, տեղեկատվության հավաքագրման մեթոդաբանության վերաբերյալ քննադատական արտացոլման նկատելի բացակայություն էր առկա: Ըստ ինքնավերլուծության զեկույցի՝ համալսարանը ներկայումս գտնվում է SS գործիքների միջոցով տեղեկատվության համախմբման, մշակման և վերլուծության միասնական համակարգի մշակման սկզբնական փուլերում: Հետևաբար, ESG 1.7-ի պահանջները, որոնք նախատեսում են «համապատասխան տեղեկատվության օգտագործումն իրենց ուսումնական ծրագրերի և այլ գործունեության արդյունավետ կառավարման համար», դեռ ամբողջությամբ չեն համապատասխանեցվել:

Եվրոպայում բուհական համագործակցությունները զարգանում են արագ տեմպերով՝ համատեղ ծրագրերի և միասնական եվրոպական աստիճանի հնարավորության շուրջ քննարկումներով: Սակայն, չնայած այս առաջընթացին, ՇՊՀ-ն կարծես թե չի ձգտում ավելի սերտ համագործակցություն հայաստանյան բուհերի, նույնիսկ տարածաշրջանային բուհերի հետ: Առայժմ հայտարարված միակ նախաձեռնությունը համատեղ ծրագրերի մեկնարկն է:

Ժամանակակից համալսարանները չափազանց կարևոր են համարում ակադեմիական ազնվությունը: ՇՊՀ-ն առաջընթաց է գրանցել այս համակարգի տարրերի ստեղծման հարցում, ինչպիսիք են ակադեմիական արժեքների կատալոգի սահմանումը, էթիկայի կանոնների ընդունումը և այս ոլորտում իրազեկվածության բարձրացումը: Սակայն էթիկայի մշտական հանձնաժողով դեռևս չի ստեղծվել: Ռեկտորը կարող է ստեղծել նման հանձնաժողով ժամանակավոր հիմունքներով, եթե արձանագրվի էթիկայի չափանիշների խախտում: Բացի այդ, չկան փաստաթղթավորված ուսումնասիրություններ այնպիսի վարքագծի վերաբերյալ, ինչպիսիք են գրագողությունը, ահաբեկումը, խտրականությունը, նեպոտիզմը և կոռուպցիան: Հարցաշարի միայն մեկ հարցով շրջանավարտները կարող են հայտնել քննությունների հետ կապված կոռուպցիայի մասին: Ինչ վերաբերում է ուսանողների կողմից քննությունների

արդյունքների գնահատման բողոքարկումներին, ապա վերջին երեք տարում արձանագրվել է ընդամենը երեք դեպք: Ավելին, ատենախոսական աշխատանքների ստուգման հակագրագողության համակարգ դեռ չի ներդրվել:

Եվրոպական համալսարաններում թեժ բանավեճեր են ընթանում արհեստական բանականության գործիքների չարաշահումը կանխելու և ակադեմիական արժեքների պահպանման կարևորության մասին՝ արագ տեխնոլոգիական փոփոխությունների պայմաններում: Ակնհայտ է, որ արհեստական բանականության ազդեցությունն ակադեմիական ամբողջականության, ինչպես նաև դասավանդման, ուսուցման և գնահատման վրա պետք է լինի ակադեմիական առաջնորդների առաջնահերթությունը: Հետևաբար, կարևոր է ներդրումներ կատարել արհեստական բանականության կիրառման դասախոսական անձնակազմի վերապատրաստման համար:

ESG-ները նպաստում են ուսումնական ծրագրերի ճկունությանը և ուսանողակենտրոն ուսուցմանը: Համալսարանը հավատարմություն է ցուցաբերում այս հայեցակարգին: Ուսումնառության վերջնարդյունքները սահմանվել են, և ուսումնական ծրագրերում առկա է դասավանդման և ուսուցման տեխնիկայի լայն շրջանակ: Դասավանդման մեթոդները վերանայվում են, և ուսանողական փոքր խմբերը նպաստում են ուսումնական գործընթացի անհատականացմանը: Ողջունելի է կրթական խորհրդատուների ինստիտուտի ստեղծումը, որոնք համակարգված խորհրդատվություն և աջակցություն են առաջարկում ուսանողներին: Ողջունելի է, որ համալսարանը գնահատականների բարձրացմնան քաղաքականություն է որդեգրել (anti-grade-inflation policy): Առաջարկվում է վերապատրաստում դասախոսներին՝ բարելավելու նրանց մանկավարժական կարողությունները:

Գործնական առումով, ուսուցման ուղիների ճկունությունը և դասավանդման ու ուսուցման գործընթացում ուսանողական կարիքների հաշվի առնելը խիստ սահմանափակված են նաև պետական կանոնակարգերով: Բակալավրիատի ուսուցման տևողությունը զգալի է՝ չորս տարի, և չի կարող կրճատվել: Ընտրովի դասընթացների թիվը սահմանափակ է (մինչ վերջերս բոլոր դասընթացները պարտադիր էին բակալավրիատում): Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգն այլ համալսարաններում ձեռք բերված ուսումնառության արդյունքների ճանաչման հարցում սահմանափակված է ուսումնական պլանային զգալի տարբերություններով:

Հարցազրույցները ցույց տվեցին, որ չկա պարզություն ուսանողակենտրոն ուսուցման հասկացությունների վերաբերյալ, և դասավանդման նորարարական մեթոդների ներդրումը դասախոսների անհատական նախաձեռնությունն է, այլ ոչ թե համակարգի պահանջ: Ուսանողակենտրոն ուսուցման քաղաքականության համար համալսարանական շրջանակի ստեղծումը կարող է զգալիորեն բարելավել իրավիճակը: Այս շրջանակը կարող է օգնել ավելի լավ հասկանալու ուսանողակենտրոն ուսուցման ժամանակակից պահանջները, բացահայտելու ուսուցման մեթոդաբանության փոփոխությունների անհրաժեշտությունը, խրախուսելու մանկավարժական նորարարական մոտեցումների զարգացումը և բարելավելու որակի մշակույթի և կրթական պրակտիկայի միջև փոխհարաբերությունների ըմբռնումը: Դասախոսներին խրախուսելու համար (որպեսզի նրանք որդեգրեն դասավանդման նորարարական մեթոդներ) համալսարանը կարող է դիտարկել պարգևատրումների տրամադրում նրանց համար, ովքեր ցուցադրում են դասավանդման ամենաբարձր չափանիշները:

ՇՊՀ-ի ուսանողական կազմի զգալի մասը բաղկացած է աշխատող ուսանողներից, ովքեր գիտելիք և հմտություններ են ձեռք բերել իրենց աշխատավայրում: Այնուամենայնիվ, համալսարանը պատրաստ չէ ճանաչել այսպես կոչված միկրոորակավորումները: Իրոք, բարձրագույն կրթությունից դուրս (ոչ պաշտոնական և ոչ ֆորմալ կրթություն) ստացված ուսումնառության արդյունքների վավերացման և ճանաչման ընթացակարգ չի ընդունվել:

Հետազոտությունների ոլորտում ՇՊՀ-ի և եվրոպական բուհերի միջև առկա բացը դեռևս զգալի է: Համալսարանն ընդունում է հետազոտությունների կարևորությունը և տարբեր նախաձեռնություններ է իրականացրել՝ խրախուսելու դասախոսներին զբաղվել հետազոտություններով: Սակայն այս ջանքերը ցանկալի արդյունք չեն տվել: Միայն փոքր թվով հետազոտողներ են դիմում դրամաշնորհների համար և իրականացնում անկախ հետազոտություններ, իսկ անձնակազմի շատ ցածր տոկոսն է հրապարակում իր աշխատանքը (մոտ մեկ քառորդը): Ներկայումս այս տարի կա ընդամենը ութ հետազոտական ծրագիր: Արդյունքում, համալսարանի տեսանելիությունը եվրոպական հետազոտական տարածքում սահմանափակ է: Միջազգային ճանաչում ունեցող ամսագրերում վերջին տարիներին հրապարակումների թիվը շատ ցածր է եղել. չի գերազանցում մեկ տասնյակը: Հիրշի ինդեքսի առավելագույն արժեքը ընդամենը 7 էր: Հետազոտության այս արդյունքը զգալիորեն սահմանափակում է ESG-ի կողմից խրախուսված և ՇՊՀ-ում հռչակված հետազոտական կրթության իրականացման հնարավորությունները: Բացի այդ, դա խոչընդոտում է գիտական աստիճանների ձեռքբերմանը և ժամանակին բարձրագույն ակադեմիական պաշտոնների բարձրացմանը: Սա հաստատում է զբաղվածության վիճակագրությունը, որը ցույց է տալիս, որ միայն 14 ասպիրանտ է զբաղեցնում լրիվ դրույքով դասախոսի պաշտոնը:

Դասախոսներն ընդգծել են, որ հետազոտական գործունեությամբ զբաղվելու մոտիվացիայի բացակայությունը բխում է հետազոտության կատարման համար անբավարար ֆինանսական պարգևներից և մեծ ծանրաբեռնվածությունից: Օրինակ, դոկտորական կոչումն ստանալը կարող է հանգեցնել մոտավորապես 400 եվրո ստանալու, մինչդեռ Web of Science-ում թվարկված ամսագրում հոդված հրապարակելը կարող է վաստակել մոտ 190 եվրո: Դասախոսները կարող են ունենալ տարեկան մինչև 1000 ժամ ծանրաբեռնվածություն, մինչդեռ պրոֆեսորները կարող են ունենալ 750 ժամ: Այս մեծ ծանրաբեռնվածությունը հաճախ դասախոսներից պահանջում է դասավանդել իրենց գիտական ոլորտից դուրս:

ESG-ի համաձայն համալսարանից պահանջվում է ուսանողներին տրամադրել բավարար նյութական ռեսուրսներ, ենթակառուցվածքներ, ինչպես նաև համապատասխան աջակցություն: Եվրոպական բուհերի միջև այս առումով ակնհայտ անհամապատասխանություն կա: Ուսանողները և անձնակազմն օգտագործում են ոչ բավարար քանակի սարքավորումներով հագեցած լաբորատորիաներ և նրանց հասանելի չեն մասնագիտացված ծրագրերը, տվյալների բազաները և արտասահմանյան գիտական ամսագրերը: Նման հանգամանքներում դժվար է երաշխավորել, որ հետազոտություններն ու ուսումնասիրությունները թարմացված են ըստ նորարարությունների: Հետազոտական ենթակառուցվածքների բարելավումը և տվյալների բազաներին առցանց հասանելիության ապահովումը պետք է լինի բարձր առաջնահերթություն: Թեև կադրերի ներկայիս թիվը բավարար է գործող ծրագրերի համար, ցածր աշխատավարձերը (ավելի ցածր, քան մյուս մարզերում) և ծանրաբեռնվածությունը դժվարացնում են բարձր որակավորում ունեցող երիտասարդ դասախոսների ներգրավումը, ինչը հանգեցնում է ակադեմիական անձնակազմի

ծերացմանը: Բացի այդ, տարեկան աշխատանքային պայմանագրերի համակարգը չի նպաստում բուհի ներսում երկարաժամկետ կարիերայի հաստատմանը:

ՇՊՀ-ն իրականացրել է միջազգայնացման քաղաքականություն, որի նպատակն է օգտագործել միջազգայնացումը որպես ռազմավարական նպատակներին հասնելու գործիք, քան նպատակ: Հաշվի առնելով համալսարանի տարածաշրջանային բնույթը և հեռակա բաժնի ուսանողների բարձր համամասնությունը, ինչպես նաև համավարակի և շարունակվող հակամարտությունների հետևանքով առաջացած մարտահրավերները՝ վերջին տարիներին միջազգայնացման զգալի առաջընթացը դժվար է կանխատեսել: Համալսարանի միջազգայնացման սանդղակը համեմատաբար համեստ է՝ շարժունության ծրագրերում ուսանողների և անձնակազմի նվազագույն մասնակցությամբ: Արտասահմանյան գործընկերների հետ հետազոտական ծրագրեր չեն իրականացվել, և մինչ օրս ՇՊՀ է այցելել միայն մեկ օտարերկրյա ուսանող: Օտար լեզուներով ոչ մի ծրագիր կամ դասընթաց չկա, բացառությամբ Անգլերեն լեզու և գրականություն ծրագրի: Համալսարանն օտարերկրյա ուսանողներ չունի: Ուսումնական ծրագրում գլոբալ արժեքների ինտեգրման և բազմամշակութային իրազեկության խթանման դեպքերը խիստ սակավ են: Շարժունության ծրագրի մասնակիցների ֆինանսական աջակցության բացակայությունը և ուսանողների ու դասախոսական կազմի շրջանում անգլերենի անբավարար իմացությունը շարժունակության հիմնական խոչընդոտներն են: Թեև միջազգայնացումը հիմնական նպատակն է, սակայն նկատելի է օտար լեզուների ուսուցման վրա ուշադրության պակաս: Համալսարանը նախկինում առաջարկում էր անգլերենի դասեր միայն մեկ կիսամյակի համար, սակայն այժմ այն երկարացվել է երկուսի: Անգլերենի ուսուցման արդյունավետության գնահատումը չափազանց կարևոր է համալսարանի միջազգայնացման և շրջանավարտների մրցունակության բարձրացման համար:

Համալսարանը գովելի ջանքեր է գործադրում այս իրավիճակում փոփոխություն կատարելու համար և որոշակի հաջողությունների է հասել: Վերջին տարիներին համալսարանը կա՛մ թարմացրել է, կա՛մ ստորագրել է պայմանագրեր օտարերկրյա 10 գործընկերների հետ՝ հիմնականում Ռումինիայից, Իսպանիայից և Պորտուգալիայից: Համալսարանը ներգրավված է նաև Էրազմուս+ համալսարանի կարողությունների զարգացման հինգ ծրագրերում, որոնցից մի քանիսը գործում են արդեն մի քանի տարի: Միջազգայնացման համատեքստում պարզ է, որ այս պայմանագրերով իրականացվող աշխատանքների որակն ու քանակն ավելի կարևոր են, քան պայմանագրերի քանակը: Այս տեսանկյունից գնահատականը ցույց է տալիս միջազգայնացման դրական ազդեցությունը: Արտասահմանյան գործընկերների հետ համագործակցությունը հանգեցրել է նոր մասնագիտությունների ներդրմանը, այդ թվում՝ կենսատեխնոլոգիա, սոցիալական աշխատանք և կայուն զբոսաշրջություն: Բացի այդ, ներդրվել են դասավանդման նոր մեթոդներ, ինչպիսիք են աշխատանքի վրա հիմնված ուսուցումը, ինչպես նաև նոր լաբորատորիաների ստեղծումը: Ավելին, ստեղծվել է Օտար լեզուների ուսուցման կենտրոն: Փոխանակման ծրագրերի մասնակիցներն իրենց փորձը կիսում են ակադեմիական լայն հանրության հետ՝ դրանով իսկ նպաստելով ոլորտում գիտելիքի առաջխաղացմանը:

ՇՊՀ-ն սահմանել է որակի ապահովման քաղաքականություն և որակի ապահովման ներքին համակարգ, ինչպես նաև օժանդակ կառույց: Որակի ներքին ապահովման համակարգը կառուցված է՝ հետևելով ESG գլխի առաջին պահանջներին: Ստեղծվել են մի շարք ֆորմալ պայմաններ՝ ապահովելու, որ գործընթացների մեծ մասը գործում է ՊԻԳԲ

շրջափուլով: Այնուամենայնիվ, ՌԱ քաղաքականությունը չի կիրառվում բոլոր գործընթացների վրա՝ ESG 15–ի պահանջներով: Օրինակ, չկա հաստատված ընթացակարգ հետազոտությունների գնահատման, դրանց ինտեգրման ուսուցման, համալսարանի երրորդ առաքելության իրականացման կամ միջազգայնացման համար: Իսկ ԳԱՑ-երը չեն օգտագործվում մատուցվող ծառայությունների որակը գնահատելու համար: Հռչակված նպատակներից շատերը չեն իրականացվել, իսկ պլանավորված քաղաքականությունն ու գործողությունները ամբողջությամբ չեն իրականացվել: Ավելին, համակարգը կազմող փաստաթղթերի զգալի մասի արդյունավետությունը շահակիցների և արտաքին դիտորդների համար սահմանափակ է: Այս փաստաթղթերը հաճախ բաղկացած են հայտարարությունների, մտադրությունների հավաքածուից կամ «Որակի ձեռնարկի» դեպքում՝ ընդամենը ընթացակարգերի ցանկից: Ընդհանուր առմամբ, ՌԱ փաստաթղթերում շեշտը դրվում է այն բանի վրա, թե ինչ պետք է արվի, այլ ոչ թե ինչպես դա անել: Ակադեմիական ղեկավարները փաստաթղթերի փոփոխությունները համարում են դրական առաջընթաց, սակայն դասախոսները մտահոգություններ ունեն գերկարգավորման և բյուրոկրատացման վերաբերյալ:

Դժվար է որոշել՝ ինչպես են ՌՆԱ առանձին մեխանիզմները, միջոցառումները և գործունեությունը արդյունավետ նպաստում համալսարանի նպատակներին կենտրոնացված և համահունչ ձևով: Քիչ ապացույցներ կան, որ այս անհաջողությունները մանրակրկիտ վերլուծվել են, և չկան համապատասխան բարելավման առաջարկների ձևակերպման շատ ապացույցներ: Այն, թե որքանով են վերլուծությունների արդյունքները, ինչպիսիք են տարեկան հաշվետվությունների արդյունքները, օգտագործվում որոշումների կայացման և ռազմավարական պլանավորման, ինչպես նաև որակի ներքին ապահովման համակարգում առկա բացերի հայտնաբերման հարցում, մնում է խնդրահարույց:

ESG-ն նշում է, որ ՌՆԱ-ն նպատակ ունի խրախուսել որակի վրա կենտրոնացած մշակույթի զարգացումը: Այնուամենայնիվ, համալսարանի ներկայացուցիչների հետ հարցազրույցների ժամանակ ընդհանուր արժեքների և նպատակների վրա հիմնված որակյալ մշակույթի միասնական տեսլական չի գտնվել: Քննադատական մտորումների բացակայությունը էական խոչընդոտ է տրանսֆորմացիոն փոփոխությունների իրականացման համար և կարող է խաթարել նորարարական նախաձեռնությունների զարգացումը:

Կարևոր է նշել, որ այս զեկույցում մատնանշված շատ խնդիրներ կարելի է վերագրել նախկինում համալսարանի ոչ արդյունավետ կառավարմանը: Չնայած վերջին մեկ տարում որոշ դրական փոփոխություններ են կատարվել, դրանց երկարաժամկետ ազդեցությունը, հավանաբար, էական կլինի: Համալսարանի կարողությունը բացահայտելու և ապահովելու լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ, վճռորոշ կլինի ակադեմիական կարողությունների հետագա զարգացման համար, հատկապես մարդկային կապիտալում և ֆիզիկական ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու առումով:

Միչեսլավ Սոխա
ՇՊՀ միջազգային փորձագետ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Շիրակի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Արմեն Հարությունյան՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի ղեկավար:

Սամվել Կարաբեկյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի գլխավոր խորհրդական, փորձագիտական խմբի անդամ:

Նարինե Միրականյան՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնի Ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի պետ, փորձագիտական խմբի անդամ:

Միչեսլավ Սոխա՝ տնտեսագիտության դոկտոր, Վարշավայի համալսարանի և Պետական կառավարման դպրոցի պրոֆեսոր, փորձագիտական խմբի միջազգային անդամ:

Արփինե Հակոբյան՝ Վանաձորի պետական համալսարանի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ, և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման բաժնի մասնագետ **Մերի Բաբսեղյանը:**

Թարգմանությունը կատարել են **Աննա Ազարյանը** և **Քրիստինե Օհանյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, թարգմանիչներն ու համակարգողները ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Շիրակի պետական համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Ինքնավերլուծությունը մեկ անգամ վերադարձվել է բուհին ձևաչափային շտկումներ կատարելու և Ինքնավերլուծության ընդունման պահանջներին բավարարելու նպատակով: Վերանայված ինքնավերլուծությունը համապատասխանել է սահմանված միասնական ձևաչափին, առկա են եղել համապատասխան հիմքերը և ձևաչափով պահանջվող հավելվածները: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան ու տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնա-վերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են նաև դասալսումներ, մասնակցել քննություններին: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]:

Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

Նախապատրաստական այց

2024 թվականի մայիսի 16-ին ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարի, փորձագիտական խմբի ղեկավարի և համակարգողի մասնակցությամբ տեղի է ունեցել առցանց հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը[2], ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձա-գիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. մայիսի 27-ից 30-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա է գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպմամբ և ավարտվել հաստատության ղեկավար կազմի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են բուհի կողմից նախապես տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր պարտադիր հանդիպումները: Փորձագիտական խումբը նախատեսված այցի ընթացքում իրականացրել են նաև դասալսումներ, մասնակցություն ավարտական քննություններին, փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և ռեսուրսների դիտարկում[4]:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների ու ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում՝ նախատեսելով գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար** և **անբավարար**:

[3] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[4] Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է համալսարանի լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է համալսարանին:

Հիմք ընդունելով բուհի պատասխանը փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ՝ փորձագիտական խումբը պատրաստել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 2024 թ.-ի օգոստոսի 15-ին:

Մերի Բաբսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

15-ը օգոստոսի, 2024 թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՇՊՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (նախկինում՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ), իր հիմնադրման առաջին իսկ տարվանից՝ 1934թ.-ից, իր առաքելությանը համապատասխան ստանձնելով հանձնառություն ժամանակակից կրթական բարեփոխումների ոգով կրթության կազմակերպումը, մեծ պատասխանատվությամբ իրականացնում է մատուցվող ծառայությունների շարունակական բարելավում: Մասնավորապես, հավակնելով լինել եվրոպական բարձրագույն կրթական և հետազոտական տարածքին ինտեգրված հաստատություն՝ համալսարանը, հավատարիմ մնալով բարձրագույն կրթության արդյունավետ իրականացման իր առաջնային հանձնառությանը, վերանայելով կառավարման և կրթության կազմակերպման, հետազոտության իրականացման և միջազգայնացման գործընթացները, ձգտում է ապահովել նախատեսված գործողությունների հնարավորինս ամբողջական իրականացումը:

Համալսարանն ունի իր օրհներգը, զինանշանը և ոսկյա հուշամեդալը, որը շնորհվում է Գիտական խորհրդի որոշմամբ:

Կրթություն. Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի երեք ֆակուլտետներում (հումանիտար գիտությունների, բնագիտամաթեմատիկական, հասարակական գիտությունների) առկա և հեռակա համակարգերի բակալավրի 34 կրթական ծրագրով սովորում են շուրջ 1900 ուսանողներ, մագիստրատուրայի 21 կրթական ծրագրերով՝ 450, իսկ հետազոտողի կրթական ծրագրի 7 ոլորտներում՝ 14 ուսումնառող:

ՇՊՀ մասնագիտական 11 ամբիոնների աշխատանքներում ներգրավված են՝ 1 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, շուրջ 20 գիտությունների դոկտորներ և պրոֆեսորներ, 200 գիտությունների թեկնածուներ և դոցենտներ:

Հետազոտություն. Համալսարանում 2023-2027թթ.-ի գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ զարգացում ապահովելու, հստակ տարբերակված երկարաժամկետ, միջնաժամկետ/կարճաժամկետ հետազոտական ծրագրեր մշակելու և իրականացնելու, իրականացվող գիտահետազոտական գործունեության արդյունքները միջազգայնացնելու, ուսումնառություն-հետազոտություն կապն առավել ամուր դարձնելու նպատակով գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման նախկին կարգի հենքի վրա մշակվել, ԳԽ-ում հաստատվել և ներդրվել են աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգը, ինչպես նաև էապես լավարկված Հիմնադրամում աշխատակիցներին և ուսանողներին գիտահետազոտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգը: Գիտահետազոտական գործունեության բոլոր ուղղությունների զարգացման հիմնական գործիքը ներբուհական դրամաշնորհն է, որը տրամադրվում է 2016թ.-ից: Վերջինիս կիրարկման արդյունքում, մասնավորապես, աճել է գիտահետազոտական գործունեություն իրականացնող աշխատակիցների և ուսումնառողների թիվը:

Միջազգայնացում. ՇՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարության առաջնահերթ նպատակներից մեկն է, որ հնարավորինս պահպանվեն ու շարունակվեն արդեն հաստատված միջազգային ու հանրապետական ոլորտների համագործակցային հարաբերությունները, ընդլայնվի ու բազմազանեցվի դրանց շրջանակը՝ հետևողական աշխատանք կատարելով նոր համագործակցային կապեր հաստատելու ուղղությամբ:

Արտաքին կապերին ու միջազգայնացմանը նպաստող գործիքներից առանձնակի կարևորություն տալով միջազգային համագործակցության դրամաշնորհային ծրագրերին՝ համալսարանը վերջին տասը տարվա ընթացքում անընդմեջ ներգրավվում է Եվրամիության Տեմպուս, Էրազմուս Մունդուս, Էրազմուս+ ծրագրերի կոնսորցիումների կազմում: Դրա արդյունքում հաստատվել են շարունակական համագործակցության հարաբերություններ ինչպես հանրապետական, այնպես էլ եվրոպական մի շարք համալսարանների և սոցիալական այլ գործընկերների հետ:

Որակի ապահովում. ՇՊՀ-ում կրթության ՈԱ քաղաքականության հիմնական սկզբունքներն են համակարգային մոտեցումը, ՈԱ համակարգի կենտրոնացված կանոնակարգումը և ընթացակարգային կարգավորումը, պլանավորումը, որակի ներքին ապահովման գործընթացների ապակենտրոնացված իրականացումը, ինքնագնահատումը, բարելավումը, անձնակազմի մոտիվացված, ընդլայնված և գիտակցված մասնակցությունը, հենանշումների (բենչմարքինգ) և վկայությունների վրա հիմնված մոտեցումը, ուսանողների, շրջանավարտների, ՊԴ կազմի և գործատուների ներգրավումը, փոխկապվածությունը որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև:

ՇՊՀ ՈԱ քաղաքականության նպատակն է.

- ապահովել հաստատության մատուցած ծառայությունների (կրթական, գիտահետազոտական և այլն) և/կամ սովորողների ձեռք բերած կրթության արդյունքների համապատասխանությունը Հիմնադրամի առաքելությամբ և տեսլականով սահմանված նպատակներին,
- նպաստել ՈԱ ներքին համակարգի շարունակական բարելավմանը և զարգացմանը, մասնավորապես՝ աջակցել ՈԱ, կառավարման և բարելավման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների դերակատարության բարձրացմանը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր. ՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր, պաշտոնական կայք և այլն):*

ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի գործող զարգացման ռազմավարական ծրագիրը (2023-2027թթ.) հաստատվել է Հոգաբարձուների խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 13-ի նիստում: Համալսարանը, առաջնորդվելով նաև նախորդ հավատարմագրման արդյունքում տրամադրված խորհրդատվություններով, նախորդ հավատարմագրումից հետո մոտ կես տարվա ընթացքում ՀԽ-ի հաստատմանն է ներկայացրել նոր ռազմավարական ծրագրի նախագիծը: Ընդ որում, հաստատությունը համահնչեցրել է Հիմնադրամի կանոնադրությունը և Զարգացման ՌԾ-ն՝ համալսարանի գործունեության և առաքելության կապն ապահովելու նպատակով: Այսպես, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի 2023-2027թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրում նախանշված է ՇՊՀ-ի առաքելությունը. «ՇՊՀ-ն կրթական, գիտական և մշակութային բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը միտված է տարածաշրջանում (մասնավորապես՝ Շիրակի մարզ, Ջավախք) ուսումնագիտական, մարզամշակութային կարիքների բավարարմանն ուղղված, փոփոխվող արտաքին միջավայրի և ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համահունչ՝ կրթական ծրագրերի և գիտական հետազոտությունների իրականացման միջոցով որակյալ ու մրցունակ մասնագետների պատրաստմանը»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանին այնուամենայնիվ չի հաջողվել աշխատաշուկայի ամբողջական վերլուծություն իրականացնել հստակեցնելու համար մարզի կարիքները, չի իրականացվել նաև շրջանավարտների մասնագիտական գործունեության համակողմանի ուսումնասիրություն, ուստի տարածաշրջանային խնդիրների լուծումը թեև նշվում է որպես առաքելություն, սակայն հիմքում ստույգ տվյալներ առկա չեն: Համալսարանի առաքելությունը մշակելիս բուհը դիտարկել է առկա հետազոտություններն աշխատաշուկայի պահանջների և թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

ՇՊՀ-ն հստակեցրել է իր տեսլականը՝ նշելով հինգ հավակնություն, որոնք արտացոլում են բուհի համակողմանի զարգացման ուղիները: Ըստ ՌԾ-ի՝ ՇՊՀ-ի որդեգրած արժեքներն են ուսանողակենտրոն միջավայրը, ակադեմիական ազնվությունն ու բարեվարքությունը, պատասխանատվությունը, հարգանքն ու հանդուրժողականությունը, ժողովրդավարական սկզբունքները:

Համալսարանի Զարգացման ՌԾ-ն ուղենշում է հիմնական երեք նպատակ՝ որակյալ կրթություն, արդիական և նորարար գիտական հետազոտություններ, հանրային ներգրավում:

Մշակված են խնդիրների լուծման գործողություններ և կատարողական ցուցիչներ, որոնք հիմնականում իրատեսական են: Համալսարանի զարգացման ՌԾ-ն ունի նաև իրականացման հաստատված ժամանակացույց, որում արձանագրված են խնդիրները, գործողությունները, իրականացման ժամանակահատվածը, պատասխանատուները, կատարողական ցուցիչները: Նախատեսված գործողությունների համար բուհը հստակ ֆինանսական պլանավորում չի իրականացրել, ֆինանսական միջոցները տրամադրվում են ըստ անհրաժեշտության:

Հարկ է նշել, որ 2022 թվականին ՇՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի ժամանակացույցը, որը 2022-ի նոյեմբերի 25-ին կազմվել է և հաստատվել ՇՊՀ-ի ռեկտորի կողմից, համապատասխանեցված է Զարգացման ՌԾ-ի իրականացման ժամանակացույցին:

ՇՊՀ-ն կրթությունն իրականացվում է ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներով՝ առաջնորդվելով ՈԱՇ-ում, որոշ կրթական ծրագրերի պարագայում՝ ՈՈՇ-ում ամրագրված բնութագրիչներով:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՇՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը (2023-2027թթ.) մշակվել է երեք փուլով: Նախնական փուլում իրականացվել է բուհի ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն, ռիսկերի և ֆինանսական հնարավորությունների գնահատում, որից հետո ձևավորվել են ՌԾ-ի աշխատանքային, ապա՝ նախագծային տարբերակները, որոնք քննարկվել են Համալսարանի ստորաբաժանումների ղեկավարների, դասախոսների, ուսանողական կոռույցների ներկայացուցիչների, շրջանավարտների, գործատուների, արհեստակցական կազմակերպության հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որպես շահակիցների մասնակցություն համալսարանը դիտարկում է ներքին և արտաքին շահակիցների ընդգրկվածությունը բուհի կառավարման մարմիններում՝ Հոգաբարձուների և Գիտական խորհուրդներում և այլ հանձնախմբերում:

Զարգացման ՌԾ-ի մշակման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների կարիքները վերհանելու նպատակով բուհում իրականացվել են նաև ֆոկուսխմբային քննարկումներ, հանդիպումներ, հարցումներ: Փորձագիտական այցի ընթացքում իրականացված դիտարկումների և հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ շահակիցների ներգրավումը գործընթացում և նրանց կարիքների վերհանումը աննշան ազդեցություն է ունեցել ՌԾ-ի ձևավորման հարցում: Սա առավել ակնհայտ էր արտաքին շահակիցների պարագայում, քանի որ նրանց կողմից, ինչպես և Համալսարանն է նշում, հետաքրքրության պակաս կար գործընթացի նկատմամբ:

Համալսարանում իրականացվող գործընթացներում հնարավորինս բոլոր շահակիցների ներգրավվածությունն ու մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև թափանցիկության ապահովման նպատակով պաշտոնական https://shsu.am/ կայքէջում գործարկել է «Նախագծերի քննարկում» պատուհանը, որը պետք է ստեղծի առցանց հարթակում քննարկումներ իրականացնելու հնարավորություն:

Համաձայն փորձագիտական այցի և ուսումնասիրությունների՝ արտաքին շահակիցները փոքր մասնակցություն ու ընդգրկվածություն են ունեցել զարգացման ծրագրի, ինքնավերլուծության կառուցման գործընթացում, սակայն նրանք հիմնականում կիսում են և

համամիտ են համալսարանի որդեգրած զարգացման քաղաքականության հետ և ունեն նույն պատկերացումները զարգացման ուղղությունների վերաբերյալ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեև տարիներ առաջ փոխելով իր ուղղվածությունը՝ բուհը մանկավարժական համալսարանից դարձել է բազմապրոֆիլ ուսումնական հաստատություն, շահակիցների ընկալումներում հաճախ այն դեռ մանկավարժական համալսարան է:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Որպես առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմ՝ համալսարանն առանձնացնում է սահմանված հաշվետվողականության համակարգը՝ սկսած ստորաբաժանումների ամենամյա հաշվետվություններից Գիտական խորհրդին մինչև համալսարանի ռեկտորի տարեկան հաշվետվությունը Հոգաբարձուների խորհրդին:

Ռեկտորի հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք հիմնականում ամփոփում են կատարված գործողությունները: Հաշվետվություններն առավելապես նկարագրողական են, որտեղ ներկայացված չեն ըստ կատարողական ցուցիչների իրականացված գործողությունները, իրականացված չէ ՌԾ-ով նախատեսված նպատակների, խնդիրների գնահատում կամ մեկնաբանում: Հարկ է նշել, որ վերջին՝ 2022-2023 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ հաշվետվությունն իր կառուցվածքով տարբեր է նախորդներից: Առանձին բաժնով ներկայացված է 2022-2023 ուսումնական տարվա ռազմավարական ծրագրի կատարողականը, ինչպես նաև ըստ ՌԾ նպատակների իրականացված է կատարողականի ամփոփում, առկա են մեկնաբանություններ, վերլուծություն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնդրահարույց է համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրում և դրա իրականացման ժամանակացույցում ըստ խնդիրների մշակված գործողությունների և կատարողական ցուցիչների համադրությունը: Այսպես, ռազմավարական ծրագրի առաջին նպատակն է որակյալ կրթության պահովումը, որին հասնելու համար ուսումնական հաստատությունը նախանշել է 6 խնդիր: Խնդիրներից յուրաքանչյուրի համար մշակվել են լուծումներ/գործողություններ: Օրինակ, առաջին խնդիրը՝ «Բարձրորակ և մրցունակ կրթական ծրագրեր», նախատեսում է հինգ լուծում/գործողություն և տասը կատարողական ցուցիչներ, երկրորդ խնդիրը՝ «Բարելավված կրթական միջավայր», նախատեսում է հինգ լուծում/գործողություն և ութ կատարողական ցուցիչներ և այլն: Արդյունքում անհասկանալի է, թե որևէ գործողության արդյունքում որն է կատարողական ցուցիչը, ինչ ժամանակահատվածում է ակնկալվում այն արձանագրել, ով է պատասխանատուն: Միևնույն ժամանակ, օրինակ, «Լավարկված ԿԾ-ներ», «Խիստ թերբեռնված կուրսերի քանակի կրճատում», «Գիտական դրամաշնորհային ծրագրերում մասնակցության թվաքանակի աճ» և այլ նմանատիպ ձևակերպումներով ցուցիչները հնարավորություն չեն տալիս լիարժեք գնահատելու առաջընթացը կամ իրականացված գործողությունները, քանի որ չեն պարունակում քանակական կամ որակական հստակ չափանիշներ, պահանջներ: Ուստի համալսարանի ռեկտորի 2022-2023 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության մեջ՝ «ՌԾ-ի կատարողական. 2022-2023 ուստարի» գլխում, որպես կատարողական ցուցիչ

ներկայացնելով «Լավարկված ԿԾ-ներ /կատարված է/» կամ «Խիստ թերբեռնված կուրսերի քանակի կրճատում /կատարված է/» ամփոփումները՝ հնարավոր չէ գնահատել, թե արդյոք բոլո՞ր ԿԾ-երն են լավարկված (եթե հաշվի առնենք, որ մագիստրատուրայի կրթական ծրագրերը դեռ լրամշակման փուլում են և հաստատված չեն), որո՞նք են թերբեռված կուրսերի չափանիշները և արդյոք բակալավրիատի առկա համակարգի «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Լրագրություն» կրթական ծրագրե՞րն են միայն եղել թերբեռնված, որի արդյունքում համալսարանը դրանցից հրաժարվել է:

Դատողություններ: Փորձագիտական խումբն արձանագրում է, որ նախորդ հավատարմագրումից հետո ուսումնական հաստատությունը կարողացել է մշակել և հաստատել զարգացման ռազմավարական ծրագիր՝ հստակեցնելով իր առաքելությունն ու զարգացման ուղղությունները 2023-2027թթ. համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիրն ընդհանուր առմամբ ընկալելի և ընդունելի է ներքին և արտաքին շահակիցների համար, սակայն նկատելի է արտաքին շահակիցների մասնակցության պակասը, ինչը կարևոր է բուհի զարգացման ուղղությունները սահմանելու և տարածաշրջանում բուհի դերը շեշտադրելու համատեքստում: Բուհի վարչական և դասախոսական կազմերը, փորձագիտական խմբի դիտարկումներով, պատկերացնում են իրենց անելիքները, պատրաստակամ են, եթե անգամ իրականացվող ոչ բոլոր գործընթացներին կամ գաղափարներին են համամիտ: Արտաքին շահակիցների առավել ակտիվ մասնակցությունը գործընթացին կստեղծի համայնքի, տարածաշրջանի, մարզի, պետության իրական կարիքների վերհանման հնարավորություն, ինչը կնպաստի թե կրթության որակի բարձրացմանը, թե Համալսարանի զարգացման ուղղությունը հստակեցնելուն:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՇՊՀ ռեկտորի հաշվետվության ձևաչափի փոփոխությունը, մասնավորապես՝ 2022-2023 ուսումնական տարվա հաշվետվության մեջ ռազմավարական ծրագրի կատարողականի ներկայացումն ու ամփոփումը, միևնույն ժամանակ նշում, որ ցուցիչների առավել չափելի լինելը կնպաստի կատարողականի լիարժեք գնահատմանը և կբարձրացնի պլանավորված գործընթացների արդյունավետությունը: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև ռազմավարական ծրագրի և բուհի բյուջեի պլանավորման գործընթացում ռիսկերի գնահատման, կառավարման, ֆինանսական միջոցներն ըստ ռազմավարական նպատակների բաշխման հստակեցումը, ինչը կնպաստի բուհի ունեցած ռեսուրսների համաչափ բաշխմանն ու հաստատության երկարաժամկետ զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՇՊՀ-ի առաքելությունը ձևակերպված է հստակ և արտացոլում է գործունեության հիմնական ուղղությունները, նախորդ հավատարմագրումից հետո նկատելիորեն բարելավվել են ռազմավարական պլանավորման գործընթացն ու գործիքակազմը, ռազմավարական պլանավորումն ընդգրկում է հնարավոր շահակիցների մոտեցումները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: ՇՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՇՊՀ կառավարումն իրականացվում է ՀՀ օրենքներին և ՇՊՀ կանոնադրությանը (փոփոխվել է 29.09.2021թ.) համապատասխան՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ՝ Հոգաբարձուների խորհրդի, Գիտական խորհրդի, Ռեկտորատի և Ռեկտորի միջոցով: Համալսարանի ռեկտորը պաշտոնավարում է 2022թ.-ից: Հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում է ՇՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների, հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներից: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցից պարզվեց, որ խորհրդի անդամները ակտիվորեն ներգրավված չեն կառավարման գործընթացում, ոչ բոլորն են տիրապետում իրենց իրավասություններին՝ որպես խորհրդի անդամ: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ խորհուրդն ունենում է տարեկան 7-8 նիստ, որոնց մեծ մասն իրականացվում է էլեկտրոնային ձևաչափով կամ հիբրիդ եղանակով: Խորհրդի նիստերին խորհրդի անդամների բացակայությունները հաճախակի են: Հաճախ խորհրդի կողմից տրված առաջարկները մնում են անարձագանք կամ համապատասխան քայլեր չեն իրականացվում առաջարկների ուղղությամբ: Այսպես օրինակ, ՌԾ-ի շրջանակում նախատեսված որոշ ծախսեր խորհուրդն անիրատեսական է համարում՝ համադրելով ՇՊՀ ֆինանսական միջոցների հետ:

Ռեկտորն ընդգրկված է համալսարանի զարգացման բոլոր ուղղություններով իրականացվող գործընթացներում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Համալսարանի 2023-2027թթ.-ի Զարգացման ՌԾ-ի հիման վրա իրականացվել են փուլային կառուցվածքային փոփոխություններ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բուհում իրականացվել են մեծամասշտաբ հաստիքային կրճատումներ, ավելացվել են այլ հաստիքներ, պատասխանատվություններ կամ հաստիքները վերանվանվել են: Առկա են աշխատակիցների պաշտոնի նկարագրերը, որոնք սահմանում են աշխատակիցների գործառույթները:

Լուծարվել են հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետը՝ իր 5, Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետը՝ 3, Մանկավարժության ֆակուլտետը՝ 2 ամբիոններով: Կրճատվել են նշված ֆակուլտետների դեկանների, գործավարների, լաբորանտների և այլ հաստիքներ, թվով՝ 18: Կառուցվածքում հաստատվել է 3 ֆակուլտետ՝ Բնագիտամաթեմատիկական, Հումանիտար գիտությունների, Մանկավարժության և հոգեբանության՝ 11 ամբիոնով, ներառալ՝ Ռազմական ամբիոնը: Նախորդ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվությունների հիման վրա՝

ելնելով նաև ՄԿԾ-ների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից, ներդրվել են կրթական ծրագրերի պատասխանատուների հաստիքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներդրված այս հաստիքները դեռևս գործառնական բնույթ չունեն:

Հարկ է նշել, որ պրոռեկտորները, ինչպես նաև մի շարք ստորաբաժանումների ղեկավարները (դեկաններ, ամբիոնի վարիչներ) պաշտոնակատարներ են:

ՌԾ-ում առանձնացված են 3 ուղղություններ՝ Որակյալ կրթություն, Արդիական և նորարար գիտական հետազոտություններ, Հանրային ներգրավում, որոնք կառավարվում են համապատասխանաբար Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման, Գիտական քաղաքականության և նորարարության ու Արտաքին համագործակցության կենտրոնների կողմից: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ ՇՊՀ Զարգացման ՌԾ-ում արտացոլված չեն բուհի կառուցվածքում Մինչբուհական կրթության բաժնի ենթակայությամբ ներկայացված ՇՊՀ-ի քոլեջի, ՇՊՀ-ի ավագ դպրոցի, ՇՊՀ-ի հիմնական դպրոցի առանձնահատկությունները, դրանց առաքելությունը, տեսլականը, նպատակներն ու խնդիրները: Հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբն արձանագրեց, որ կառուցվածքային փոփոխությունների, հատկապես՝ ֆակուլտետների, ամբիոնների վերաբերյալ, դասախոսական կազմի մոտեցումները նույնական չեն:

Մշակվել և լրամշակվել են ավելի քան 70 կարգեր ու ընթացակարգեր, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ փոփոխության հիմքերը հստակ չեն: Միաժամանակ, դրանք չեն փոփոխվել ըստ առաջնահերթության և անհրաժեշտության: Օրինակ, 2012 թվականից չեն փոփոխվել ՇՊՀ-ի ներքին կարգապահական կանոնները կամ պրոֆեսորադասխոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման կանոնակարգը:

ՇՊՀ-ի ֆինանսների տնօրինումը կարգավորվում է ՀԽ-ի կողմից հաստատված բյուջեով, որի նախագիծը կազմվում է բուհի եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության ընթացակարգով, որի համաձայն Համալսարանի բյուջեի նախագիծը կազմվում է ծրագրային բյուջետավորման և եկամուտների ու ծախսերի պլանավորման մեթոդաբանությունների հիման վրա, սակայն ՇՊՀ-ի ՌԾ իրականացման ժամանակացույցում ֆինանսական հատկացումները նշված չեն: Համաձայն ֆինանսական պլանավորման և նշված ընթացակարգի՝ բյուջեի նախագծի մշակման փուլում, կենտրոնները գալիք տարվա ֆինանսական կարիքները ներկայացնում են ՖՌԿՀ բաժին, որի կողմից այդ տվյալները համակարգվում և գնահատվում են ֆինանսական տեսանկյունից և ներառվում հաջորդ տարվա բյուջեի նախագծում: Փաստաթղթերի ուսումնասիրությունների և այցի ընթացքում պարզվեց, որ ՇՊՀ-ն իր ՌԾ-ի նպատակների իրականացման համար թեև ներդրել է որոշակի ֆինանսական ռեսուրսներ, սակայն դրանք որոշ դեպքերում չեն համապատասխանում ՌԾ-ով սահմանված նպատակներին, օրինակ՝ հետազոտությունների և միջազգայնացման մասով: Իսկ բյուջեի մոտավորապես 80%-ը կազմում են աշխատավարձերը: Միաժամանակ, Համալսարանը լրացուցիչ ֆինանսական հոսքերի ապահովման ուղղությամբ հստակ աշխատանքներ չի իրականացնում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Համալսարանում կառավարման վերից-վար մեխանիզմը գործում է, սակայն թույլ են հորիզոնական կապերը ստորաբաժանումների միջև: Ֆակուլտետներն ու ամբիոնները գործում են միմյանցից գրեթե անկախ և թույլ է նրանց միջև տեղեկատվության փոխանակումը:

ՇՊՀ-ն ներկայումս գտնվում է փոփոխությունների փուլում, և կառավարման գործընթացների փոփոխությունների և դրանց արդյունքների արդյունավետության գնահատում դեռևս չի իրականացվել:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդում դասախոսները և ուսանողները կազմում են 25-ական տոկոս: Համաձայն ՇՊՀ կանոնադրության՝ դասախոսների թեկնածուներն առաջադրվում են ՇՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից, իսկ ուսանողներին առաջադրում են ֆակուլտետների ուսանողական խորհուրդները, և ընտրությունն իրականացնում է ՇՊՀ-ի ուսանողական խոհուրդը:

Գիտական խորհրդի կազմում ընդգրկված են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, կենտրոնների տնօրենները, գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար), ֆակուլտետների դեկանները, ռազմական ամբիոնի պետը, քոլեջի տնօրենը, դպրոցի տնօրենը, ՇՊՀ-ի արհմիության նախագահը, գիտությունների ամենաերիտասարդ դոկտորը, գիտությունների ամենատարեց դոկտորը, ինչպես նաև ընտրովի անդամներ ֆակուլտետների գիտական աստիճան կամ կոչում ունեցող դասախոսներից՝ յուրաքանչյուր ամբիոնից առնվազն մեկական դասախոս և ուսանողներ՝ 25%:

Միաժամանակ, ՇՊՀ-ն իր ՌԾ-ում կարևորել է ժողովրդավար միջավայրի ապահովումը, որը ենթադրում է ՇՊՀ-ում որոշումների կոլեգիալ կայացումը՝ պահպանելով բազմակարծության և ժողովրդավարության սկզբունքները: Դասախոսները և ուսանողները ներգրավված են նաև ֆակուլտետային խորհուրդներում: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ խորհուրդներում դասախոսներն և ուսանողներն ունեն պասիվ ներգրավվածություն: Խորհուրդներում նրանց ներգրավվածությունը հաճախ կրում է ֆորմալ բնույթ:

ՇՊՀ-ն դասախոսների և ուսանողների մասնակցությունն իրենց առնչվող որոշումների կայացման համար գործիք է համարում ՈԱ կողմից իրականացվող հարցումները, սակայն այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցումների արդյունքները ենթարկվել են միայն քանակական վերլուծության և էապես հիմք չեն հանդիսանում որոշումների կայացման համար:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՇՊՀ-ն երկարաժամկետ ծրագիր համարում է իր ՌԾ-ն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նախորդ ՌԾ-ի ժամկետի ավարտից հետո, նոր ՌԾ-ն հաստատվել է երեք տարի անց: Հնգամյա նոր ՌԾ-ում սահմանվել են ՇՊՀ-ի նպատակները, խնդիրները և կատարողականի ցուցիչները, որոնք սակայն ավելի շատ ստուգում են ենթադրում՝ նշելով գործողությունները կատարվել են, թե ոչ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՇՊՀ-ն նախատեսում է ունենալ նոր ԳԱՑ-եր, որոնք կլինեն առավել չափելի: ՌԾ-ի իրականացման պլանավորումն արտացոլված է ՌԾ-ի իրականացման ժամանակացույցում: Սակայն հստակ տեսանելի չեն նախատեսված ֆինանսական հատկացումները և ժամկետները: Օրինակ՝ գործողությունների ժամկետները հիմնականում

սահմանված են՝ ըստ եռամյակների (I-III, II-III և այլն), բացակայում են միջանկյալ գործողությունները, դրանց արդյունքներն ու ժամկետները: Համալսարանը միջնաժամկետ պլաններ չունի, իսկ կարճաժամկետ պլաններ են համարվում կենտրոնների և ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանները, որոնք համապատասխանում են ՌԾ-ին: Դրանք բարելավվել են՝ հաշվի առնելով նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվությունները:

2022թ.-ի մարտի 11-ին հաստատվել, իսկ 2024թ. հունվարի 18-ի ԳԽ նիստում, այսինքն՝ Հիմնադրամի գործող Զարգացման ՌԾ-ն հաստատելուց հետո, նոր խմբագրությամբ վերահաստատվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման (լավարկման) և հաշվետվողականության ապահովման հայեցակարգը: Ըստ հայեցակարգի՝ ՌԾ-ի մշակման, իրականացման, արդյունքների վերահսկման և բարելավման համար ռեկտորի հրամանով ձևավորվում է աշխատանքային հանձնախումբ: Կենտրոնների տարեկան հաշվետվություններին առնչվող որոշումների, ՈԱ բաժնի կողմից տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման համար կատարված ամենամյա հարցումների արդյունքների վերլուծությունների հիման վրա հանձնախումբը կազմում և ռեկտորին է ներկայացնում Զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի ամենամյա հաշվետվություն և բարելավման առաջարկներ:

Նախորդ հավատարմագրումից հետո ՇՊՀ-ում ներդրվել է հարակից զեկույցի ինստիտուտը: ՇՊՀ ստորաբաժանումները ԳԽ-ին ներկայացնում են իրենց գործունեության ամենամյա հաշվետվությունները, ներառյալ՝ տարեկան աշխատանքային ծրագրերի կատարողականները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարակից զեկույցի կիրառման մեխանիզմները դեռևս ընկալելի չեն շահակիցների կողմից:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ՇՊՀ-ն իր գործունեության վրա ազդող գործոնների ընթացիկ ուսումնասիրության մեխանիզմ է համարում ստորաբաժանումների կողմից կազմվող հաշվետվությունները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ստորաբաժանումների հաշվետվությունները ներկայացնում են հիմնականում փաստեր գործողությունների կատարողականի վերաբերյալ և չեն ներառում համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություններ:

Համաձայն ինքնավերլուծության՝ որոշումների կայացման համար ՇՊՀ-ն, որպես հավաստի տվյալների հավաքագրման մեխանիզմ, համարում է ՈԱ բաժնի կողմից համալսարանի ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացվող ամենամյա հարցումները: Համալսարանը ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացնում է նաև ֆոկուսխմբային հանդիպումներ, քննարկումներ, հարցումներ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցից պարզվեց, որ չնայած գործատուները քննարկումներին կարևորել են ապագա մանկավարժների խոսքի բարձր կուլտուրան, մանկավարժության ՄԿԾ-ներում նոր չափանիշներին համապատասխան մասնագետների թողարկումը, սակայն շոշափելի արդյունքներ դեռևս առկա չեն, այս ուղղությամբ քայլերը ևս դեռ հստակ չեն: Նախատեսվել է իրականացնել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան դասընթացներ, որոնք կբավարարեն գործատուների պահանջները:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցից պարզվեց, որ մարզի խնդիրների, նոր ՄԿԾ-ների ներդրման ուսումնասիրություններ չեն իրականացվել: ՇՊՀ-ի բուհ-գործատու համագործակցության բաժնի կողմից ուսումնասիրվել են staff.am կայքի «ՀՀ աշխատաշուկա 2022» և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության կողմից իրականացված 2023թ.-ի սեպտեմբերի աշխատաշուկայի վերլուծությունները: Հարկ է նշել, որ այն չի նպաստել ՄԿԾ-ների արդյունավետ կառավարմանը, քանի որ առկա են ՄԿԾ-ներ, որոնք փակվել են (օրինակ SS) կամ ներդրվել են մասնագիտություններ («Կենսատեխնոլոգիա», «Կայուն զբոսաշրջություն»), որոնցով ուսանողների թիվը փոքր է:

Համալսարանը նախատեսում է մշակել և ներդնել իր գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման և ուսումնասիրության ԳԱՑ համակարգը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ որոշումների կայացումը ՇՊՀ-ում հենված չէ համապարփակ ուսումնասիրությունների և հավաքագրված ու վերլուծված տվյալների վրա:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո Համալսարանը վերանայել է շուրջ 70 փաստաթուղթ, մշակել և ներդրել 14 նոր իրավական ակտ, սակայն դրանց մշակման նախադրյալները և հիմնավորումները բացակայում են: ՇՊՀ-ն բոլոր տիրույթներում կարևորում է ՊԻԳԲ շրջափուլը, որի համաձայն իրականացրել է ՌԾ-ի պլանավորում, սակայն այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՊԻԳԲ շրջափուլի կիրառման մասով էապես աճ չի գրանցվել նախորդ հավատարմագրումից ի վեր: Չնայած պլանավորված են ստորաբաժանումների աշխատանքները, որին համապատասխան տրվում են հաշվետվություններ, սակայն ՇՊՀ-ն հիմնականում գտնվում է գործընթացների իրականացման փուլում: Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլով փակված գործընթացներ դեռևս չկան: Այսպես օրինակ, կարելի է նշել, որ կառուցվածքային փոփոխությունները գնահատման փուլում են, վերանայված փաստաթղթերերի մեծ մասը դեռևս ներդրման փուլում է, բակալավրիատի վերանայված ՄԿԾ-ները իրականացման փուլում են և այլն:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ՇՊՀ-ում ՄԿԾ-ների և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման հիմնական մեխանիզմը հարցումների իրականացումն է, իրականացվում է նաև ուսանողների կարծիքների, գործատուների կարիքների հավաքագրում: ՇՊՀ-ն ունի Հիմնադրամի ՄԿԾ-ների մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման քաղաքականություն, ՄԿԾ-ների կառավարման հայեցակարգ և Հիմնադրամի կառավարման և վարչարարության քաղաքականություն» փաստաթղթերը, որոնցով կարգավորվում է տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմները: Հաշվետվությունները ևս համարում են տվյալների հավաքագրման մեխանիզմներ, ինչպես նաև ամբիոնային քննարկումները: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ

տվյալների վերլուծության արդյունքները չեն կիրառվում հաճախ, իսկ հիմնական գործընթացների մեծ մասը դեռևս իրականացման փուլում է:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ՇՊՀ-ում ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակման հիմնական միջոցները պաշտոնական կայքը և սոցիալական ցանցերում համապատասխան էջերը: 2023թ.-ից ուսումնական խորհրդատուի կողմից իրականացվում են նաև տեղեկատվական-իրազեկման հանդիպումներ, որոնց ընթացքում ուսանողներին ներկայացվում են ՄԿԾ-ները, վերջնարդյունքները, շնորհվող որակավորումները և այլն: Համալսարանը նախատեսում է մշակել և ներդնել նաև «Դիմորդի ուղեցույց» և «Ուսանողի ուղեցույց» էլեկտրոնային ձեռնարկները: ՇՊՀ-ն պաշտոնական կայքում տեղադրում է իր շրջանավարտների հաջողության պատմությունները: Սակայն այցի ընթացքում պարզվեց, որ հավաքագրված տվյալները չեն կիրառվում կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման և դրանցում բարելավումներ անելու նպատակով:

Նախորդ հավատարմագրման արդյունքների հիման վրա բավականին բարելավել է կայքը, մասնավորապես օտարալեզու նյութերի մասով, սակայն դեռևս այն ունի բարելավման անհրաժեշտություն նյութերի հարստացման և կայքի դիտելիության մեծացման տեսանկյունից: Հարկ է նշել նաև, որ կայքի կիրառման արդյունավետության գնահատում չի իրականացվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ համալսարանը նախորդ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվություններին հիմնականում անդրադարձել է՝ իրականացնելով բարելավումներ գրեթե բոլոր ուղղություններով: Չնայած առաջընթացը նկատելի է, սակայն փորձագիտական խմբի գնահատմամբ կառավարման համակարգը դեռևս չի նպաստում ՌԾ նպատակների և առաքելության արդյունավետ իրականացմանը: Փորձագիտական խումբը կարևորում է փոփոխությունների իրականացման հիմնավորման անհրաժեշտությունը և այս գործընթացներում շահակիցների ներգրավվածությունը, որը միտված կլինի ՌԾ նպատակների և առաքելության իրականացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ Կառավարման բոլոր օղակների, մասնավորապես Հոգաբարձուների խորհրդի նախաձեռնողականության ավելացումը և նրանց առաջարկների հիման վրա զարգացման ուղղությունների հստակեցումը կնպաստեն բուհի համաչափ զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է ՌԾ նպատակների և հատկացված բյուջեի համապատասխանեցումները, լրացուցիչ ֆինանսական հոսքերի ակտիվացումը, ըստ ՌԾ-ի ֆինանսների կառավարումը և նպատակների համար ԳԱՑ-երի հստակեցումը, որոնց հաշվառման դեպքում նպատակների իրականացումը կդառնա իրատեսական և չափելի: Նպատակահարմար է, որ Համալսարանը փաստաթղթերի փոփոխություններ իրականացնելիս կամ նոր փաստաթղթեր ներդնելիս հաշվի առնի դրանց առաջնահերթությունն ու նպատակայնությունը՝ հետազոտական հենքով և հիմնվելով շահակիցների կարիքների վրա: Փորձագիտական խումբը դրական է համարում Համալսարանում գործընթացների պլանավորումն առանձին ստորաբաժանումներով,

հաշվետվողականության վերից վար մեխանիզմների առկայությունը, սակայն գործընթացների համաչափ զարգացման տեսանկյունից կարևորվում են նաև հորիզոնական կապերը: Ստորաբաժանումների միջև թույլ համագործակցությունը խոչընդոտում է լավ փորձի տարածմանը և այլ ստորաբաժանումներում տեղայնացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով համալսարանը պետք է շարունակաբար տվյալներ հավաքագրի իր գործունեության բոլոր տիրութների վերաբերյալ: Դրանց ներդրումը կառավարչական որոշումների կայացման հիմքում կնպաստի համալսարանի համակողմանի երկարաժամկետ զարգացմանը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ Համալսարանը խթանի խորհուրդներում ներգրավվածների ակտիվությունը որոշումների կայացման գործում ներառականության, բոլոր օղակների համար կառավարման թափանցիկության ապահովման համար, ինչպես նաև ունենա արտաքին շահակիցներին որոշումների կայացման գործընթացում ակտիվորեն ներգրավելու մեխանիզմներ, ինչը կնպաստի նրանց կարիքների վերհանմանը և արտաքին գործոնների ուսումնասիրմանը: Միաժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ Համալսարանը պետք է իրականացնի աշխատաշուկայի վերլուծություններ և կրթական ծրագրերն իրականացնելիս հենվի աշխատաշուկայի պահանջների վրա, ինչը կրթությունը կդարձնի ավելի մրցունակ և կնպաստի ուսանողների թվի կայուն ավելացմանը:

Դրական է, որ Համալսարանը գրեթե բոլոր ուղղություններում ընդգծում է ՊԻԳԲ շրջափուլի կարևորությունը, սակայն կարևորման փուլից անցումը գործնական փուլին կապահովի գործընթացների արդյունավետությունը և կնպաստի որակի մշակույթի ձևավորմանը: Հաշվի առնելով, որ բուհը գտնվում է ակտիվ փոփոխությունների շրջափուլում՝ փորձագիտական խումբը շեշտադրում է դրանց արդյունքների շարունակական վերլուծումը և արդյունավետության գնահատումը, ինչը կհանգեցնի կառավարչական տվյալահենք որոշումների կայացմանը և բուհի զարգացման երկարաժամկետ պլանավորմանը:

Չնայած Համալսարանն ունի ՄԿԾ-ների և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման որոշ մեխանիզմներ, սակայն փորձագիտական խումբը կարևորում է հավաքագրված տվյալների վերլուծության արդյունքների կիրառումը գործընթացների բարելավման և որոշումների կայացման համար:

Դրական է, որ Համալսարանն ունի տեղեկատվության հրապարակման համար մեխանիզմներ, մասնավորապես պաշտոնական կայք և սոցիալական էջեր, որոնք նախորդ հավատարմագրման արդյունքում բարելավվել են, սակայն անհրաժեշտ է վերլուծել դիտելիության տվյալները տեղեկատվության կառավարման ուղղությամբ ռեսուրսները համաչափ բաշխելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Համալսարանն իր սահմանած նպատակների իրագործման համար դեռևս չի տրամադրում համապատասխան ֆինանսական ռեսուրսներ, ներքին և արտաքին շահակիցներն ակտիվորեն ներգրավված չեն որոշումների կայացման գործընթացներում, հորիզոնական կապերը թույլ են, երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների մշտադիտարկման գործուն մեխանիզմներ ներդրված չեն, կառավարչական որոշումները չեն հենվում հավաստի տվյալների վրա, որակի կառավարման շրջափուլով չեն անցել կառավարման ու վարչարարության գործընթացները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: ՇՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Համալսարանն իրականացնում է ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներում բակալավրի առկա՝ 28, հեռակա՝ 20, մագիստրոսի՝ 22 կրթական ծրագրեր: Հետբուհական ՄԿԾ-ներ իրականացվում են չորս բնագավառներով և երեք մասնագիտություններով: Համալսարանը կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի 3 ֆակուլտետ (Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Հասարակական գիտությունների ֆակուլտետ) և 11 ամբիոն, ներառյալ առանձին կարգավիճակ ունեցող Ռազմական ամբիոնը:

Նախորդ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվությունների հիման վրա վերանայվել են բակալավրիատի ՄԿԾ-ները՝ իրականացնելով ՄԿԾ-ների համապատասխանեցում ՈԱՇ-ին, ՈՈՇ-ին և ՇՊՀ-ի առաքելությանը: Վերանայվել են վերջնարդյունքները, շնորհվող որակավորումների բնութագրերը: ՄԿԾ-ների փոփոխությունները պարբերաբար քննարկվել են ներքին շահակիցների հետ: Որոշ ՄԿԾ-ների մասով (օրինակ՝ «Սերվիս»), վերջնարդյունքները ձևակերպելիս քննարկումներ են տեղի ունեցել նաև գործատուների հետ: Քննարկման արդյունքում ավելացվել է պրակտիկաների տևողությունը՝ 4 շաբաթից դառնալով 5 շաբաթ: Գործնական, սեմինար, լաբորատոր աշխատանքներին նույնպես, ըստ անհրաժեշտության, ավելի մեծ ժամաքանակ է հատկացվել: Օրինակ՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրի ԿԾ-ում «Անգլերեն լեզու (բանավոր խոսք)» դասընթացի գործնական ժամաքանակը ավելացվել է՝ 128-ից դառնալով 144, «Սերվիս» մասնագիտության բակալավրի ԿԾ-ում «Օտար լեզու (մասնագիտական ոլորտում)» դասընթացի գործնական ժամաքանակը (նաև մոդուլների քանակը) ավելացվել է՝ 380-ից դառնալով 444: Այսուհանդերձ, չնայած օտար լեզվի ժամերի ավելացման՝ փորձագիտական այցի և դասալսումների արդյունքում պարզվեց, որ Համալսարանում շարունակում է մնալ լեզվաիմացության խնդիրը:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ փոփոխվել են ուսումնական պլանները. ներդրվել են նոր դասընթացներ, փոխվել են որոշ դասընթացների դասավանդման կիսամյակները: Այսպես օրինակ՝ «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» ՄԿԾ-ներում ներդրվել է «Ընդհանուր բնագիտության հիմունքներ» դասընթացը: ՄԿԾ-ներում կարևորվել է նաև ուսանողների հետազոտական կարողությունների զարգացումը, որի նպատակով ներդրվել է «Մասնագիտական ոլորտում

հետազոտական աշխատանքի իրականացման հիմունքներ» դասընթացը։ Դասընթացներն առանձնացվել են կրթամասերով, վերանայվել է նաև կրեդիտների բաշխման քաղաքականությունը՝ լսարանային ժամերի և ուսանողին անհրաժեշտ ինքնուրույն ժամաքանակի հաշվառմամբ։ Ավելացվել են նաև կամընտրական առարկաներ, սակայն մասնագիտական քննարկումների ընթացքում պարզ դարձավ, որ կամընտրական առարկաների ընտրությունը չի կապակցվում ՄԿԾ վերջնարդյունքներին։

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կրթական ծրագրերի թեմատիկ օրացուցային պլանները (ԹՕՊ) նույնպես մանրամասն վերանայվել և փոփոխվել են։ ԹՕՊ-երում նշված են թեման, վերջնարդյունքները, դրանց գնահատման համար տրվող լսարանային և ինքնուրույն առաջադրանքները, դասավանդման և ուսումնառության մեթոդները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրանք ամեն տարի վերանայվում են և բարելավվում։ Կրթական ծրագրերի մասնագրերում շրջանավարտի կարողունակությունները մանկավարժության բակալավրի որակավորում ունեցող կրթական ծրագրերի համար համապատասխանեցված են հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշչի և օրինակելի ծրագրի բովանդակությանը (բացառությամբ 21-րդ դարի հմտությունների խթանման ուղղության, ինչը ևս կարևոր է ապագա ուսուցիչների համար)։ Մասնագրերում հիմնական տեղեկատվությունից բացի ներառված են Կրթական ծրագրի նկարագիրը, ծրագրի նպատակն ու խնդիրները, կառուցվածքը, կրեդիտները, դասընթացների կրթամասերը, գնահատման մեթոդները, դասավանդման և ուսումնառության մեթոդները, Ծրագրի ուսումնական պլանը և քարտեզը, Մասնագիտական գործունեության ոլորտները, կրթական չափորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը բարելավելիս, ՄԿԾ-ի շրջանակներում դասավանդողներին ներկայացվող պահանջները և շրջանավարտների ուսման հետագա հնարավորությունները։ Չնայած փոփոխություններին՝ փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՄԿԾ-ների ակնկալվող վերջնարդյունքները դեռևս ունեն չափելիության, ինչպես նաև ձևակերպումների խնդիր։ Այսպես օրինակ կարելի է նշել հետևյալ վերջնարդյունքները՝ «Ապահովում է իր մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը…», «Ապահովում է իր մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը՝ ժամանակակից հասարակության կրթական պահանջմունքներին, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, բնորոշում է գիտությունը որպես մշակութային արժեք՝ սոցիալ-տնտեսական և գիտամշակութային զարգացումներին համընթաց» և այլն։

Գործնական ժամերը որոշ ծրագրերի ուսումնական պլաններում քիչ են տեսական ժամերից (օրինակ «Կենսաբանություն» ԿԾ)։

Նախորդ հավատարմագրումից հետո վերանայվել են նաև կրթական ծրագրերի դասընթացների նկարագրերը։ ՇՊՀ կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բուհն ՄԿԾ-ներին կից ըստ դասավանդվող առարկաների (օրինակ՝ «Կենսաբանություն» ՄԿԾ) ունի նաև առաջադրանքների փաթեթներ, որոնցում ներկայացված են հանձնարարականների ընդհանուր ուղղությունները, վերջնարդյունքները, հանձնարարականների ուղղություններին համապատասխան՝ գնահատման սանդղակները՝ ըստ թեմաների, սակայն դրանց ձևակերպումները հստակ չեն, օրինակ ընթացիկ լսարանային ձևավորող առաջադրանքներ, ընթացիկ լսարանային ձևավորող/ուսուցանող (ոչ միավորային) առաջադրանքների գնահատման ձևեր և այլն։

ՄԿԾ-ների բարելավման համատեքստում վերանայվել են նաև որոշ հայեցակարգեր (2024թ.), քաղաքականություն և կարգեր, որոնք միտված են ՄԿԾ-ների արդյունավետ

կառավարմանը, մշակման, հաստատման, մշտադիտարկման և բարելավման ընթացակարգերին:

Չնայած ՇՊՀ-ն կարևորում է աշխատաշուկայի պահանջները, սակայն ՄԿԾ-ների փոփոխություններ իրականացնելիս և նոր ՄԿԾ-ներ ներդնելիս աշխատաշուկայի համապարփակ վերլուծություններ չի իրականացրել, որի արդյունքում որոշ ՄԿԾ-ներ փակվել են, որոշներն էլ՝ փակման վտանգի առջև են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ փակման համար հիմք են հանդիսանում հաճախ նաև այլ հաստատությունների կրթական ծրագրերի հետ մրցակցությունը և դիմորդների բացակայությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ համալսարանն արձանագրում է կրկնակի մասնագիտություններով ծրագրեր բացելու պահանջ՝ ֆիզիկա-մաթեմատիկա, աշխարհագրություն-բնագիտություն ուղղություններով, սակայն այս ուղղությամբ վերլուծություններ և ռիսկերի գնահատում իրականացված չէ:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ՇՊՀ-ն ունի դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն: ՄԿԾ-ներում դասավանդման և ուսումնառության մեթոդները ներկայացված են թե ՄԿԾ-ների մասնագրերում, թե առարկայական նկարագրիչներում և թե թեմատիկ օրացուցային պլաններում միասնական մոտեցմամբ՝ ըստ վերջնարդյունքների: ՄԿԾ-ներում ներկայացված են ուսուցման ուսանողակենտրոն մեթոդներ: Փորձագիտական այցի և դասալսումների ընթացքում պարզվեց, որ դասախոսները հիմնականում առաջնորդվում են իրենց փորձով՝ կիրառելով մեթոդներ, որոնք ուղղված են ուսանողների կարիքների բավարարմանը, սակայն առկա դրական փորձը չի վերհանվում և տարածվում: Հաշվի առնելով մանկավարժական որակավորում շնորհող կրթական ծրագրերի առանձնահատկությունները և ուսանողների մոտ սովորել սովորեցնելու կարողությունների ձևավորման կարևորությունը՝ փորձագիտական այցի դասալսումների դիտարկումից պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում (մանկավարժություն, դասավանդման մեթոդիկա դասընթացներ) ներկայացվող ուսումնառության նյութերը, դասավանդման մեթոդները չեն կապակցվում կոնկրետ առարկայի դասավանդման հետ, որը շրջանավարտը պետք է հետագայում դասավանդի դպրոցում:

Կիրառվող մեթոդների բարելավման համար ՇՊՀ-ն ունի մի շարք գործիքներ (ուսանողների, շրջանավարտների և ՊԴ կազմի հարցումներ, դասալսումներ, ՄԿԾ-ների SWOT վերլուծություն, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների վերլուծություններ), որոնք վերանայված և ամրագրված են «ՄԿԾ-ների կառավարման հայեցակարգ» փաստաթղթում (2024թ.): Առկա են նաև կանոնակարգեր՝ դասալսումների կազմակերպման և իրականացման, հարցումների իրականացման և այլն:

Ուսանողներին տրամադրվող առաջադրանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ավանդական մեթոդներին զուգահեռ կիրառվում են նաև քննարկումներ, կարծիքների հիմնավորում, խմբային և ինքնուրույն աշխատանքներ, վերլուծական աշխատանքներ, որոնք միտված են ուսանողների ինքնուրունության, վերլուծական, քննադատական մտքի զարգացմանը: Միաժամանակ՝ այցի ընթացքում պարզվեց, որ

ինքնավերլուծությունն իրականացնելիս բացահատվել է, որ դասախոսներն ունեն դասավանդման մեթոդների արդյունավետ կիրառման խնդիր, որի արդյունքում Համալսարանը նախաձեռնել է վերապատրաստումներ իրականացնել ՀՊՄՀ-ի հետ համագործակցությամբ:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՇՊՀ-ում գործում է բակալավրիատի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման ընթացակարգը (վերանայվել է 2024թ.), որի համաձայն իրականացվում են բակալավրի և մագիստրոսի ԿԾ-ներով ուսումնառության արդյունքների գնահատումն ու բողոքարկումը: Սահմանված են գնահատման ձևավորող և միավորային ձևերը, գնահատման գործընթացը՝ ըստ կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցման ձևերի, գնահատման բաղադրիչներն ու կշիռները, բողոքարկման կարգը: Միավորային գնահատումը կատարվում է հարյուրմիավորային սանդղակով: Դրական գնահատականի շեմ սահմանվում է 40 միավորը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բողոքարկման դեպքեր քիչ են գրանցվել: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դրա պատճառն այն է, որ մինչև սովորողի վերջնական գնահատականի ամրագրումը դասախոսն այն քննարկում է ուսանողի հետ:

ՄԿԾ-ներում, ՄԿԾ-ների մասնագրերում, առարկայական նկարագրերում և ԹՕՊ-ում ներկայացված են գնահատման մեթոդները՝ ըստ ուսումնառության արդյունքների, իսկ մասնագրերում՝ գործիքակազմը: ՄԿԾ-ներում փոփոխություններ իրականացնելիս մասնավորապես մեծ տեղ է հատկացվել ձևավորող գնահատմանը, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցի ընթացքում պարզվեց, որ ձևավորող գնահատման ընկալումները դեռևս հստակ չեն ՄԿԾ իրականացնողների և դասավանդողների կողմից: Օրինակ, ձևավորող գնահատման մեթոդները մասնագրերում ամբողջական չեն, իսկ առաջադրանքների փաթեթներում՝ հստակ ձևակերպված չէ:

ՄԿԾ-ում ներառված դասընթացներում առկա են նաև առաջադրանքներ, որոնց գնահատման համար մշակված են ռուբրիկներ, սակայն դրանք գործնականում ոչ միշտ են կիրառվում: ՄԿԾ-ներում ներկայացված են կրեդիտները՝ ըստ դասընթացների կրթամասերի, սակայն այցից պարզվեց, որ կրեդիտների բաշխման հստակ քաղաքականությունը բացակայում է:

Համալսարանում գործում է բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի առկա կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման կարգը: 2024 թ.-ին ներդրվել է Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման ընթացակարգը գնահատման համակարգի օբյեկտիվության և անաչառության ապահովման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՇՊՀ-ում իրականացվում է մնացորդային գիտելիքի ստուգում ակադեմիական խմբի/կուրսի մոտ դասընթացից 90 և ավելի միավոր ընդհանուր առաջադիմության արդյունքի գրանցման դեպքում:

Դասընթացների վերջնարդյունքների գնահատումն իրականացնելիս բուհում կիրառվում են գնահատման՝ ստուգում 1, ստուգում 2, ամփոփիչ ստուգում, լուծարք հասկացությունները: Առկա է բազմագործոնային գնահատման համակարգ, որը ձևավորվում է երկու, երեք, չորս գործոնների հիման վրա՝ համապատասխան կշիռներով: Բակալավրում՝

երեք գործոնի դեպքում (առկա)՝ հաճախումներ՝ ընթացիկ ակտիվություն՝ 30, ամփոփիչ ստուգում՝60 միավոր, չորս գործոնի դեպքում (առկա)՝ հաճախումներ՝10, ընթացիկ ակտիվություն՝30, ստուգում 1՝ 30, ստուգում 2՝ 30 միավոր, չորս գործոնի դեպքում (առկա)՝ հաճախումներ՝10, ընթացիկ ակտիվություն՝30, անհատական աշխատանք՝ 30, ամփոփիչ ստուգում՝ 30 միավոր, երկու գործոնի դեպքում (հեռակա)՝ ընթացիկ ակտիվություն՝ 40, ամփոփիչ ստուգում՝60 միավոր: Իսկ մագիստրատուրայում՝ երկու գործոնի դեպքում՝ անհատական աշխատանք՝ 40, ամփոփիչ ստուգում՝60 միավոր:

Ուսանողները բոլոր մասնագիտություններով անցնում են ուսումնական պրակտիկա գործատուների մոտ 5 շաբաթ տևողությամբ: Պրակտիկայի ավարտին ուսանողները ներկայացնում են պրակտիկայի օրագիր, որում ներկայացվում է աշխատանքի բովանդակությունը, ուսանողի հաշվետվությունը պրակտիկայի անցկացման վերաբերյալ, ուսանողի առաջարկությունները պրակտիկայի բարելավման վերաբերյալ, կազմակերպության կողմից նշանակված պրակտիկայի անմիջական ղեկավարի և պրակտիկան ղեկավարող դասախոսի բնութագիրն ու գնահատականը ուսանողի կատարած աշխատանքի վերաբերյալ: Պրակտիկան գնահատվում է 100 միավորային համակարգով տեսական գիտելիքների գործնականում կիրառման և կազմակերպչական աշխատանքների իրականացման համար: Որոշ մասնագիտությունների դեպքում իրականացվում են նաև դաշտային պրակտիկաներ մասնագիտական ուղղվածությամբ կազմակերպություններում, օրինակ «Կենսաբանություն» ԿԾ-ում, որի ընթացքում ուսանողներն իրականացնում են ուսումնասիրությունների որոշակի թեմաների շրջանակում, ընդ որում պրակտիկայի թեման և ծրագիրը համաձայնեցվում է պրակտիկայի համակարգողների և կազմակերպության հետ: Դաշտային պրակտիկան ևս գնահատվում է ուսանողի գրավոր հաշվետվության հիման վրա՝ պաշտպանության արդյունքներով՝ սահմանված գնահատման չափանիշներին համապատասխան:

Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվում է՝ համաձայն գործող «ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի» և Հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգի (լավարկվել է 2024թ.): Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար ներդրվել է համաղեկավարի ինստիտուտը: Ուսանողները ներկայացնում են ընթացիկ կուրսային և ավարտական աշխատանքներ, իսկ մագիստրատուրայում՝ մագիստրոսական թեզեր: Դրանցում առկա են հետազոտական բաղադրիչ, թեմաները հնարավորություն է տալիս ինքնուրույն հետազոտություն կատարել՝ պահպանելով ակադեմիական ազնվությունը: Օրինակ, «Հոգեբանություն» կրթական ծրագրում ուսանողը ուսումնասիրել է մենթորների և մենթիների համագործակցությունը, իրականացրել է հետազոտություն՝ կիրառելով հետազոտական մեթոդներ, գործառնական խնդիրներ էր առաջադրել և առաջարկություններ ներկայացրել, իսկ «Սերվիս» ԿԾ-ի դեպքում թեմաները յուրահատուկ են, ունեն մարզային ուղվածություն, ինչը սովորողներին մղում է ինքնուրույն հետազոտության:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

ՇՊՀ-ն, հաշվի առնելով նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական խմբի կողմից ներկայացված դիտարկումներն ու խորհրդատվությունները, մշակել է բենչմարքինգի իրականացման մեթոդաբանություն (2024թ.), համաձայն որի բենչմարքինգի իրականացման գործում մեծ է կրթական ծրագրի պատասխանատուի դերակատարումը։ Հաշվի առնելով նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները՝ կրթական ծրագրերի համար իրականացվել է համեմատական վերլուծություն՝ ուսումնասիրվել են ԵՊՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՎՊՀ-ի, Ռումինիայի Սուչավայի Ստեֆան չել Մարեի համալսարանի և Իսպանիայի Վալլադոլիդի համալսարանի համապատասխան կրթական ծրագրերը։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բենչմարքինգի իրականացման շրջանակներում հիմնականում տեղի է ունեցել ՄԿԾ-ների դասընթացների անվանումների փոփոխություններ։

Համաձայն ինքնավերլուծության՝ ՇՊՀ-ն ունի կնքված միջազգային պայմանագրեր եվրոպական ինը համալսարանների հետ, որոնց հետ համագործակցությունը ընձեռում է շարժունության հնարավորություն։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ վերջին 3 տարիների ընթացքում ՇՊՀ-ից շարժունության ծրագրերի է մասնակցել 7 ուսանող, իսկ ՇՊՀ է եկել 1 ուսանող։ Նմանատիպ տվյալներ են առկա նաև դասախոսների դեպքում. վերջին 3 տարիներին ՇՊՀ-ում դասավանդման փորձ են ունեցել Ռումինիա, Սուչավայի Ստեֆան չել Մարեի և Կլուժ Նապոկայի տեխնիկական համալսարանների 4 դասախոս, իսկ ՇՊՀ-ից 7 դասախոս այցելել են Ռումինիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի 6 համալսարան։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի համեմատական վերլուծությանն է նպաստում շարժունության ծրագրերի մասնակիցների կողմից փորձի փոխանակումը սեմինարների միջոցով։

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն։

ՇՊՀ-ում գործում է ԳԽ-ի կողմից հաստատված «Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման և վերանայման» քաղաքականությունը (2013 թ.), որը վերանայվել է 2024թ., որի համաձայն ՄԿԾ-ների մշակումն իրականացվում է համապատասխան ամբիոնի կողմից։ ՈԱ բաժինն իրականացնում է ՄԿԾ-ների մշտադիտարկում, վերլուծում և գնահատում է ՄԿԾ-ի մշակման և վերանայման գործընթացները, իսկ ՈՒԳԿ կենտրոնը համակարգում և վերահսկում է ՄԿԾ-ների հաստատման և վերանայման գործընթացը։ Այցի ընթացքում պարզվեց, որ ՄԿԾ-ները հիմնականում բարելավվել են նախորդ հավատարմագրման ընթացքում տրված խորհրդատվությունների հիման վրա։ Մշակվել է նաև դասընթացների առարկայական նկարագրերի և ԹՕՊ-երի բարելավմանն աջակցող ուղեցույց, որում ներկայացված են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների խմբերը։ Առկա են նաև մշտադիտարկման մեխանիզմներ՝ հարցումներ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություններ, գործատուների հետ հանդիպումներ։ Հարցումների արդյունքներն ամբողջապես չեն կիրառվում, որի պատճառը հիմանականում հարցաշարերի որակն է և դրանց արդյունքների ոչ լիարժեք վերլուծությունը, որը նախատեսվել է վերանայել։

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություններում ևս վերհանված են որոշ խնդիրներ, որոնք, սակայն, չեն վերլուծվել։ Այդպիսիք են օրինակ, ավարտական աշխատանքներում

միջազգային փորձին անդրադարձը, աշխատանքների պատշաճ ներկայացման, մասնագիտական կողմնորոշման միջոցարումների խթանման անհրաժեշտությունը և այլն։

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դպրոցների տնօրենների հետ հանդիպումների արդյունքում վերհանվել է ուսանողների կողմից էլեկտրոնային EMIS համակարգերից օգտվելու խնդիրը, որի համար համալսարանն իրականացրում է լրացական դասընթացներ։ Լրացական դասընթաց է պլանավորվել նաև ուսուցչի թափուր տեղի համալրման մրցույթի վերաբերյալ։ Գործատուների կողմից վերհանվել է նաև հաղորդակցական հմտությունների խնդիրը, որի վերաբերյալ համալսարանը նախատեսել է իրականացնել ոչ ֆորմալ դասընթացների շարք։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ների բարելավմանն են նպաստել իրականացվող դասալսումները՝ ըստ ժամանակացույցի, որոնց ընթացքում վերհանվել են լաբորատորիաների հագեցվածության, դասերին ուսանողների ներգրավվածության խնդիրները և այլն։

Դատողություններ։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո ՇՊՀ-ում վերանայվել են կրթական ծրագրերը, լրամշակվել ՄԿԾ կառավարման գործընթացը կարգավորող քաղաքականություն և ընթացակարգեր, իսկ մշակված բոլոր փաստաթղթերի ամբողջությամբ ներդնումը և ընթացակարգերի նպատակային կիառումը գործընթացների կառավարումը կդարձնի առավել արդյունավետ։ ՄԿԾ-ները վերանայելիս ՇՊՀ-ն հենվել է հիմնականում նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվությունների վրա՝ իրականացնելով ՄԿԾ-ների համապատասխանեցում ՈԱՇ-ին, ՈՈՇ-ին և ՇՊՀ-ի առաքելությանը, վերանայելով վերջնարդյունքները, շնորհվող որակավորումների բնութագրերը և այլն։ Փորձագիտական խումբը գտնում է, որ փոփոխությունների արդյունքում գործընթացների վրա դրական ազդեցությունները դեռևս գնահատման անհրաժեշտություն ունեն (ուսանողների անգլերենի իմացության մակարդակ՝ ըստ կուրսերի, կամընտրական առարկաների վերջնարդյունքների համապատասխանեցում ՄԿԾ-ների վերջնարդյունքներին և այլն)։

Փորձագիտական խումբը դրական է համարում հետազոտական բաղադրիչի ուժեղացումը ՄԿԾ-ներում, պրակտիկաների ժամերի ավելացումները, դաշտային պրակտիկայի առկայությունը, ինչը նպաստում է սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը։ Կրթական ծրագրերի շարունակական բարելավման ու աշխատաշուկայի պահանջների վրա հենված կրթական ծրագրերի բարելավման, նոր կրթական ծրագրերի ներդրման տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև աշխատաշուկայի վերլուծությունների իրականացումը, ինչը համալսարանին հնարավորություն կտա կառավարել նոր կրթական ծրագրերի ներդրման և առկա կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման ռիսկերը։

Փորձագիտական խումբը ՄԿԾ-ներում դրական է համարում մեթոդների միասնական համակարգի ներդրումը, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը՝ ըստ թեմաների, ինչպես նաև դասախոսների անահատական փորձը մեթոդներ ընտրելու մասով, սակայն միաժամանակ կարևոր է ՄԿԾ-ներում ներկայացված մեթոդների ակտիվ կիրառումը, դրական փորձի վերհանումն ու տարածումը, ինչպես նաև մեթոդների համապատասխանեցումը ՄԿԾ-ների վերջնարդյունքներին, ինչը կնպաստի արդյունավետ

ուսուցմանը և ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է դասախոսների խրախուսումը դասավանդման նորարարական մեթոդների կիրառման համար՝ դիտարկելով պարգևատրումների տրամադրման հնարավորությունը:

Դրական է, որ համալսարանն ունի նաև գնահատման մեթոդների ընտրության քաղաքականություն, կիրառվում են ձևավորող և ամփոփիչ գնահատման տեսակներն ու մեթոդներն, սակայն մասնավորապես ձևավորող գնահատման մեթոդների հստակեցումը և կիրառումը հնարավորություն կտան ապահովել անհրաժեշտ հետադարձ կապն ուսնողներին և նպաստել նրանց կարողությունների աստիճանական զարգացմանը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է կրեդիտների բաշխման քաղաքականության հստացման անհրաժեշտությունը ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար: Դրական է նաև ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման, ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման ընթացակարգերի առկայությունը, կիրառությունները, իսկ առկա գործիքակազմերի արդյունավետության գնահատումը հնարավորություն կտա բարելավել գործիքները՝ առկա կարիքներին համապատասխան:

Դրական է, որ որ ՇՊՀ-ն մշակվել է բենչմարքինգի իրականացման մեթոդաբանություն՝ դրանում կարևորելով ՄԿԾ-ի պատասխանատուի դերակատարումը, իրականացրել է բենչմարքինգ ինչպես ՀՀ բուհերի, այնպես էլ միջազգային այլ բուհերի հետ, սակայն դեռևս ուսումնասիրված փորձը տեղայնացման ու լավարկման անհրաժեշտություն ունի, ինչը թույլ կտա ապահովել կրթական ծրագրերի համահունչությունը և նպաստել շարժունությանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկումների, արդյունավետության գնահատման մեխանիզմների կիրառումը, ինչը նպաստել է կրթական ծրագրերում պրակտիկաների գործընթացի, մեթոդների ընտրության լավարկմանը: Միաժամանակ, խումբը շեշտադրում է ՄԿԾ-ների գնահատման հստակ ցուցիչների ներդրման ահնրաժեշտությունը և թիրախային մշտադիտարկումների իրականացումները, որոնց վերլուծությունների հիման վրա իրականացված փոփոխությունները հիմք կհանդիսանան կրթական ծրագրերի շարունակական բարելավման համար: Այս տեսանկյունից կարևոր է հատկապես կրթական ծրագրերի կառավարման համակարգի ուշադրության կենտրոնում պահել կատարվող բարելավումները, շարունակաբար գնահատել ուսանողների առաջընթացը, վեր հանել կրթական ծրագրերում առկա խնդիրները և դրանց վրա հիմնվել բարելավումները կատարելիս:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհը բարելավել է կրթական ծրագրերը՝ հաշվի առնելով որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների բնութագրիչները, գործատուների հետ քննարկումների հիմքով բարելավվել է կրթական ծրագրերի բովանդակությունը, բուհում առկա է ուսումնառության և դասավանդման մեթոդների ընտրության քաղաքականություն, լավարկվել են գնահատման մեթոդները, ավարտական աշխատանքների իրականացման ձևաչափը, դասախոսներն ապահովում են համապատասխան հետադարձ կապ ուսումնառության ընթացքում, կրթական ծրագրերի մշտադիտարկման շրջանակներում բուհը իրականացրել է բենչմարքինգ, ներդրվել են ծրագրերի իրականացման ու արդյունավետության գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: ՇՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՇՊՀ-ում ներդրված են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ: Շիրակի պետական համալսարանն ընդունելություն է իրականացնում բակալավրի կրթական ծրագրով առկա, հեռակա կրթաձևերում և մագիստրատուրայում ուսանելու համար: Ընդունելությունը կատարվում է հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության» կարգը: Դիմորդներն ընդունելության կարգին կարող են ծանոթանալ ՇՊՀ պաշտոնական կայքէջի միջոցով, որտեղ առանձնացված «Դիմորդ» բաժինը տեղեկատվություն է տրամադրում տվյալ ուսումնական տարվա համապատասխան կրթական ծրագրով ուսուցման ընդունելության ժամկետների, փաստաթղթերի և մասնագիտությունների ցանկի վերաբերյալ:

Բակալավրիատի առկա ուսուցման ընդունելությունը կազմակերպվում է մրցույթի հիման վրա՝ միասնական քննություններին հայտագրվելով: Մագիստրատուրայի ընդունելությունը տեղի է ունենում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի, ինչպես նաև ՇՊՀ-ի մագիստրատուրայի կրթական ծրագրով ընդունելության կարգի համաձայն: Հարկ է նշել, որ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրի ընդունելությունը կատարվում է ներբուհական քննությունների կազմակերպման միջոցով:

ՇՊՀ-ում 27.05.2023թ.-ից գործում է «Մինչբուհական կրթության կազմակերպման» բաժինը, որը համակարգում է ՇՊՀ հիմնադրամի քոլեջի, ավագ և հիմնական դպրոցների գործունեությունը, ինչպես նաև դիմորդների հետ տարվող աշխատանքները: Բաժինը մասնագիտական կողմնորոշման նպատակով տեղեկատվական այցեր է կատարում դպրոցներ, զրուցում 10-12-րդ դասարանների աշակերտների հետ, անցկացնում հարցումներ, ինչպես նաև պարբերաբար հյուրընկալում մի շարք դպրոցների աշակերտներին:

2021-2023թթ.-ին ՇՊՀ բակալավրիատ են ընդունվել առկա ուսուցմամբ թվով 741, հեռակա ուսուցմամբ՝ 381 ուսանողներ: 2022-2023 թվականների ընդունելության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ բակալավրիատի առկա համակարգի ուսանողների թվի աճ է արձանագրվել (2022 թվականին՝ 198 ընդունված ուսանող, իսկ 2023 թվականին՝ 215 ուսանող), իսկ հեռակա համակարգում ընդունելութունն ավելի կայուն է՝ կազմելով 98 ուսանող 2022թ.-ին և 97 ուսանող 2023թ.-ին:

Անդրադառնալով մագիստրատուրային՝ կարելի է նշել, որ 2022 թվականին ՇՊՀ ընդունվել է 185 ուսանող, իսկ 2023 թվականին՝ 204 ուսանող: Հարկ է նաև նշել, որ 2023-2024 ուսումնական տարում դիմորդ չունենալու պատճառով փակվել են «Տեղեկատվական

տեխնոլոգիաներ», «Լրագրություն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությունները: Իսկ դեռևս 2022-2023թթ.-ից չեն գործում նաև «Միջմշակութային հաղորդակցություն» և «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտությունները:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ 2021-2022 թթ. հեռացվել են 95 ուսանողներ (4.1%), 2022-2023թթ.՝ 104 ուսանող (4.9%): Փորձագիտական այցի տվյալներով 2024թ. մայիս ամսվա դրությամբ՝ հեռացվել է 2 ուսանող (0.1%): Ինքնավերլուծության համաձայն՝ ուսանողների հեռացումների շուրջ 93%-ը պայմանավորված է եղել ակադեմիական պարտքերով, իսկ շուրջ 7%-ը՝ անհարգելի բացակայություններով: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հեռացված ուսանողների կեսից ավելին (≈65%) այնուհետև վերականգվել է ՇՊՀ-ում իր ուսումնառությունը շարունակելու համար:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

ՇՊՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով գործում են մի շարք մեխանիզմներ: Ուսանողների կրթական կարիքների վերհանման առաջին օղակը յուրաքանչյուր կուրսին կցված ուսումնական խորհրդատուներն են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնական խորհրդատուի հետ հանդիումները ներառված են դասացուցակում և կրում են պարբերական բնույթ: Ուսանողներն ուղիղ կապի մեջ են թե պրոֆեսորադասախոսական, թե վարչական անձնակազմի հետ և սեղմ ժամկետներում ստանում են իրենց հուզող հարցի պատասխանը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսումնական խորհրդատուին դիմելու միջոցով վերհանվել է օրինակ պրակտիկաների ժամկետի երկարացման անհրաժեշտությունը և այն չորս շաբաթից դարձել է հինգ շաբաթ:

ՇՊՀ-ում գործում է նաև Ուսանողների աջակցության բուհ-գործատու համագործակցության բաժինը (ՈՒԱԲԳՀ), որն ուսանողներին տրամադրում է տեղեկատվություն զեղչերի, կրթաթոշակ տրամադրող ընկերությունների մասին:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման հաջորդ հիմնական գործիքը ուսանողների և շրջանավարտների շրջանում ուսումնական գործընթացի որակի և բավարարվածության գնահատման հարցումներն են, որոնք ևս կրում են ամենամյա պարբերական բնույթ: Ավելին, հարցումների մեջ տեղ գտած հարցաթերթերը պատբերաբար թարմացվում են՝ ներառելու կարիքների ավելի լայն շրջանակ: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ուսանողների գերակշիռ մասը մասնակցում է հարցումներին: Հարցումների արդյունքների վերլուծության միջոցով մի շարք կրթական ծրագրերում ավելացվել են կամընտրական առարկաները, դիտարկվել են պրակտիկաների երկարձգման հնարավորությունները:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար համալսարանում կազմակերպվում են լրացուցիչ խորհրդատվական հանդիպումներ ուսումնական խորհրդատուների հետ, ինչպես նաև հիմնական քննաշրջանի ավարտից հետո, լուծարային

շրջանների միջև ընկած ժամանակահատվածում չառաջադիմող ուսանողների համար կազմակերպում են խորհրդատվական լրացուցիչ պարապմունքներ:

ՇՊՀ-ն ստեղծում է նաև ոչ ֆորմալ դասընթացներ ունենալու հնարավորություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՇՊՀ-ում կազմակերպվել են 2 լրացական դասընթացներ՝ « EMIS հարթակ. գործառույթներ, հնարավորություններ» և «Ուսուցչի թափուր տեղի համալրման մրցույթ. գիտելիքներ, կարողություններ» թեմաներով՝ հնարավորություններ տալու ապագա մանկավարժներին ծանոթանալ դպրոցներում կիրառվող էլեկտրոնային հարթակների հնարավորություններին, ինչպես նաև դպրոցում մանկավարժական կադրերի համալրման առանձնահատկություններին: Բուհում անցկացվել են նաև ոչ ֆորմալ դասընթացներ, ինչպիսիք են «Կոնֆլիկտների կառավարում», «Հաղորդակցման հմտություններ, գրավոր, բանավոր խոսք» և այլն: Կազմակերպվել է նաև արտասահմանյան կամավորների կողմից կազմակերպված դասընթաց «Հանրային խոսք» թեմայով, որին մասնակցել են մեծավմասամբ «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի ուսանողները՝ անգլերենի իմացության բավարար մակարդակ ունենալու շնորհիվ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՇՊՀ-ում այս պահին չկան անգլերենի լրացուցիչ պարապունքներ, սակայն Էրազմուս+ SMARTI ծրագրի շրջանակում հիմնվել է Օտար լեզուների ուսուցման կենտրոնը, որը գործարկվելու է սեպտեմբերից և նապատեսում է անգլերենի դասընթացներ և ուսանողների, և ՊԴ կազմի համար:

Լրացուցիչ պարապմունքներն ու խորհրդատվությունները կազմում են պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքային բեռնվածության մասը: Ուսանողների գոհունակությունը այդ պարապմունքներից գնահատվում է հարցման միջոցով: Հարցումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանողների 66.7%-ն ընդգրկված է այս պարապմունքներում, և 97.5%-ը բավարարված է խորհրդատվական ծառայություններից:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ՇՊՀ-ում սահմանված է վարչական անձնակազմին և կառավարման մարմիններին դիմելու հստակ կանոնակարգ: Ըստ սահմանված կարգի՝ ամեն աշխատանքային օր՝ ժամը 12:00-13:00 և 14:00-15:00 ժամանակահատվածներում, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների համար սահմանված է ուսանողների ընդունելության ժամ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ մուտք ունեն վարչական մաս և կարող են դիմել իրենց հուզող բոլոր խնդիրներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները անկաշկանդ դիմում են դեկաններին, ամբիոնի վարիչներին և ուսումնական խորհրդատուներին և կարճ ժամկետներում ստանում են համապատասխան աջակցություն և տեղեկատվություն զեղչային համակարգի, քննատախտակի և այլնի վերաբերյալ: Այցից պարզ դարձավ նաև, որ ՇՊՀ-ում գործող «Բողոքների, դժգոհությունների և առաջարկությունների արկղը» ակտիվորեն գործում է առանձին և ուսանողների և ՊԴ կազմի համար:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ՇՊՀ-ում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցումն ապահովում է Ուսանողների աջակցության բուհ-գործատու համագործակցության բաժինը (ՈՒԱԲԳՀ): Բաժինը ուսանողների և շրջանավարտների շրջանում տարածում է թափուր

աշխատատեղերի հայտարարությունները, կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների մասին տեղեկատվություն, աշխատաշուկայի կարիքների վերհանման նպատակով իրականացնում է հարցումներ գործատուների շրջանում, շրջանավարտների շրջանում իրականացնում է հարցումներ՝ վերջիններիս զբաղվածության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակով և այլն։

Շրջանավարտների և գործատուների միջև կապերը ամրապնդելու և զարգացնելու համար բաժինը համագործակցում է մի շարք գործատուների հետ՝ այդ թվում դպրոցների, բանկերի և այլն։ Ավելին, վերջին երեք տարիներին ՇՊՀ ուսանողներն ակտիվորեն համալրում են համալսարանում առկա թափուր հաստիքները տարբեր բաժիններում, ինչպես օրինակ ՄՌԿ և ՈԱ կենտրոններում։

Շրջանավարտները ևս հնարավորություն ունեն մասնակցելու ՇՊՀ-ում կազմակերպվող լրացական և ոչ ֆորմալ դասընթացներին՝ աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխանելու նպատակով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները և շրջանավարտները ՈՒԱԲԳՀ բաժնի կողմից տեղեկացվում և ակտիվորեն մասնակցում են լրացական ոչ ֆորմալ դասընթացներին, որոնցից են ՇՊՀ-ում կազմակերպված դասընթացներն ինքնակենսագրություն գրելու, հարցազրույցներին արդյունավետ մասնակցության և հաղորդակցման հմտությունների զարգացման վերաբերյալ։

ՇՊՀ ներկայացրած հարցումների վերլուծության համաձայն՝ ուսանողների 68%-ը բավարարված է մատուցվող ծառայություններից։

ՇՊՀ-ն ստեղծել է տվյալների բազա, որում ներկայացված է ուսանողների և վերջին 3 տարիների շրջանավարտների մասին տեղեկատվություն։ Այդ բազայի միջոցով ՈՒԱԲԳՀ բաժինը պարբերաբար կապ է հաստատում շրջանավարտների հետ՝ զբաղվածության վերաբերյալ տվյալները թարմացնելու նպատակով։ Գործատուների հետ համագործակցության շրջանակներում թափուր աշխատատեղերի դեպքում ուսանողներին և շրջանավարտներին բաժինն ուղղորդում է համապատասխան մասնագիտական աշխատանքի։

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում։

ՇՊՀ-ում գիտահետազոտական աշխատանքների իրականացումը համակարգվում է Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի (ԳՔՆԿ) կողմից։

ՇՊՀ-ը, ըստ ներդրված ՌԾ-ի, ձեռնարկում է համապատասխան միջոցներ հետազոտական գործընթացում ուսանողների մասնակցայնության ցուցանիշի բարձրացման ուղղությամբ։ Յուրաքանչյուր գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող խմբում պարտադիր է 1 կամ 2 ուսանողի առկայությունը։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհում գործում են ուսանողների խրախուսման, ներբուհական դրամաշնորհների, լրավճարների տրամադրման մեխանիզմեր։ Ավելին, մագիստրոսական կրթական ծրագրերում սովորող ուսանողների համար սահմանված է մեխանիզմ, ըստ որի տպագրված հոդվածի առկայությունը գնահատվում է 5 միավոր։ Այս ամենի արդյունքում ՇՊՀ-ում ուսանողների հեղինակությանբ և/կամ համահեղինակությամբ 2023թ. ին տպագրվել է 21 աշխատանք, նախորդ տարի այս ցուցանիշը եղել է 11։

Որպես ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման միջոց՝ բակալավրի կրթական բոլոր ծրագրերում ներդրվել է «Մասնագիտական ոլորտում հետազոտական աշխատանքի իրականացման հիմունքներ» առանձին դասընթացը:

ՇՊՀ Ուսանողական գիտական ընկերությունն ակտիվորեն մասնակցում և կազմակերպում է տարաբնույթ գիտաժողովներ: Ըստ ինքնավերլուծության տարբեր տարիներին ՈՒԳԸ նախաձեռնությամբ ՇՊՀ-ում իրականացվել են միջազգային, հանրապետական, ինչպես նաև ուսանողական գիտաժողովներ, որտեղ ներկայանալու հնարավորություն են ունեցել նաև ուսանողները: Օրինակ՝ 2022թ.-ի նոյեմբերի 11-ին ՇՊՀ-ի կողմից կազմակերպված հանրապետական ուսանողական գիտաժողովին մասնակցել են Հանրապետության 18 բուհերի երիտասարդ հետազոտողներ, 2024թ. հունիսի 28-ին ՇՊՀ նախաձեռնությամբ կայացել է բուհի հիմնադրման 90-ամյակին նվիրված Հանրապետական ուսանողական գիտաժողովը:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ուսանողների իրավունքների պաշտպանությամբ և բողոքներով զբաղվում են ՇՊՀ կառուցվածքային ստորաբաժանումները և կառավարման մարմինները, ինչպես նաև Ուսանողական խորհուրդը: ՇՊՀ ՈՒԽ կանոնադրության համաձայն ՇՊՀ ՈՒԽ-ն համաբուհական ընդգրկում ունեցող կառույց է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բոլոր կուրսերի ավագները հանդիսանում են ՈՒԽ անդամ, խորհուրդը քայլեր է իրականացնում ուսանողներին իր աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ ուսանողները դեռևս ամբողջությամբ ներգրավված չեն ՈՒԽ աշխատանքներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհում ուսանողների կողմից ՈՒԽ-ն դեռևս չի դիտարկվում որպես իրենց իրավունքների պաշտպանության համար պատասխանատու կառույց:

ՈՒԽ-ն պարբերաբար կազմակերպվում է հանդիպումներ և քննարկումներ, իսկ վերհանված խնդիրները հասցվում են համապատասխան ստորաբաժանումներին: ՈՒԽ-ն նաև բավարարում է ուսանողների ժամանցային կարիքները, ակտիվորեն կազմակերպում է էքսկուրսիաներ, արշավներ, կամավորական աշխատանքներ: Կայացել են մի շարք հանդիպում-քննարկումներ, սեմինարներ այնպիսի թեմաներով, ինչպիսիք են Թրաֆիքինգը, Ինչպես օգտագործել խելքը հաջողության հասնելու համար, Ֆրիլանս և հեռավար աշխատանք ուսանողների համար, Գրքի քննարկում Անի Քոչարի հետ, «Նոր Լույս» մենթորինգ կենտրոնի կողմից կամավորների իրազեկման հանդիպում, ինտելեկտուալ վիկտորինաներ, ֆիլմի դիտումներ և այլն:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՇՊՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայություններից բավարարվածության գնահատման հիմնական գործիքը ՈԱ բաժնի կողմից մշակված և պարբերաբար թարմացվող հարցումներն են:

Ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատմանը և որակի ապահովմանը նպաստում է նաև Հիմնադրամում գործող հաշվետվողական համակարգը, մասնավորապես՝

ամբիոնների, ֆակուլտետների, կենտրոնների հաշվետվությունները և Ռեկտորի հաշվետվությունները՝ ՀԽ-ին։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները բավարարված են իրենց մատուցվող ծառայություններից և ստանում են համապատասխան օժանդակություն իրենց առնչվող հարցերի դեպքում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը շարունակաբար լավարկում է ուսանողներին մատուցվող ծառայությունները՝ նպաստելով ուսումնական միջավայրի բարելավմանը։ Դիմորդների հավաքագրման և ուսանողների ընդունելության մեխանիզմներն հնարավորություն են տալիս ձևավորել կայուն ուսանողական համակազմ, որը հիմք է հանդիսանում բուհի զարգացման համար։ Փորձագիտական խումբը կարևորում է կրթական ծրագրերի վերաբերյալ շարունակական իրազեկման աշխատանքների իրականացումը, ինչը հնարավորություն կտա ընդլայնել նաև հեռակա համակարգում և մագիստրատուրայի կրթական աստիճանում ուսանողների թվաքանակը։ Այն նաև կնպաստի մրցակցային կրթական ծրագրերի իրականացմանը, որը, երկարաժամկետ հեռանկարում, կարող է բարձրացնել ՇՊՀ-ի ճանաչելիությունը և գրավչությունը նաև օտարերկրյա դիմորդների համար։

Դրական հանգամանք է, որ ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով ՇՊՀ-ում տեղի են ունենում ուսումնական խորհրդատուների հետ պարբերական հանդիպումներ, որոնք թույլ են տալիս բուհին արագ և արդյունավետ արձագանքել ուսանողների պահանջներին։ Այս մեխանիզմները բարձրացնում են ուսանողների գոհունակության մակարդակը, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետությանը։

Լրացուցիչ խորհրդատվությունները, ֆորմալ և ոչ ֆորմալ դասընթացները հնարավորություն են տալիս ուսանողներին ստանալ անհրաժեշտ աջակցության և հմտությունների զարգացման հնարավորություն, ինչը կարևոր է մասնագիտական շարունակական զարգացման և փոխանցելի հմտությունների ձևավորման համար։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ՇՊՀ-ում սահմանված կանոնակարգը և գործող մեխանիզմները ուսանողներին հնարավորություն են տալիս անհրաժեշտության դեպքում դիմել վարչական կազմին, արագ և արդյունավետ ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները։ Փորձագիտական խմբի դիտարկմամբ գործող մեխանիզմները նպաստում են նաև բուհի կառավարման թափանցիկությանը և ուսանողների վստահության բարձրացմանը։

ՇՊՀ-ն ստեղծել է ուսանողների կարիերային աջակցող ծառայություններ, որոնք նպատակաուղղված են ուսանողների և շրջանավարտների զբաղվածության ապահովմանը։ Կարիերային աջակցող ծառայությունները նպաստում են, որ ուսանողները կարողանան արագ և արդյունավետ ներգրավվել աշխատաշուկայում։ Սա նաև բարձրացնում է բուհի հեղինակությունը՝ որպես հաստատություն, որն աջակցում է իր շրջանավարտների հաջողությանը։

ՇՊՀ-ում նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել են ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու մեխանիզմները։ Փորձագիտական խումբը կարևորում է այս մեխանիզմների լիարժեք կիրարկումն ու բուհի գիտահետազոտական գործունեության շրջանակներում առավել շատ ուսանողների ներգրավումը, ինչը կնպաստի

այս ուղղությամբ բուհի սահմանած նպատակների իրականացմանը և հետազոտական կարողություններ ունեցող շրջանավարտների թողարկմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է Ուսանողական խորհրդի՝ որպես ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցի դերի շեշտադրումը, ինչը կնպաստի ՈւԽ-ի մասին իրազեկվածության բարձրացմանը և որպես ուսանողական ինքնակառավարվող մարմին՝ ՈւԽ-ի հանդեպ վստահության մեծացմանը:

Կարևոր հանգամանք է, որ բուհում ներդրված են ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ դրանց միջոցով վերհանված կարիքներն անհրաժեշտ է շարունակաբար քննարկել կառավարման մարմինների հետ՝ ապահովելու մատուցվող ծառայությունների շարունակական զարգացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում գործում են ուսանողների հավաքագրման ու ընդունելության հստակ ընթացակարգեր, առկա են ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ, ուսումնական խորհրդատուներն աջակցում են ուսանողների կարիքների վերհանմանը և բավարարմանը, ուսանողների կարիքները հաշվի առնելով՝ բուհում իրականացվում են լրացական դասընթացներ, բուհն աջակցում է իր ուսանողների և շրջանավարտների կարիերայի հնարավորությունների ստեղծմանը, նախորդ հավատարմագրումից հետո ներդրվել են մեխանիզմներ խթանելու ուսանողների ներգրավումը հաստատության հետազոտական աշխատանքներում, բուհում առկա է ուսանողների իրավունքների պաշտպանության համապատասխան մարմին, գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական ծառայությունների գնահատման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: ՇՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՇՊՀ-ում դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման, համալրման գործընթացները կարգավորվում են «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման կանոնակարգով» (հաստատված 26.05.2012թ.) և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ներքին կարգապահական կանոններով» (հաստատված 20.12.2016թ.): Հարկ է նշել, որ փոփոխելով և լավարկելով բազմաթիվ ներքին նորմատիվ ակտեր, նշված փաստաթղթերը չեն համարվել խմբագրման ենթակա և չեն փոփոխվել: Համալսարանում

սահմանված են աշխատանքի ընդունման, աշխատանքային հարաբերությունների դադարեցման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգեր, խրախուսման և կարգապահական տույժի միջոցները, գործատուի և աշխատողների իրավունքները, պարտականությունները, նաև աշխատանքային հարաբերություններին առնչվող այլ ընթացակարգեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տասը տարուց ավելի դասախոսական կազմի ձևավորման համար մրցույթներ չեն հայտարարվել: Դասախոսների հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են մեկ տարով: Դասախոսական կազմի ընտրության (վերընտրության) համար առաջնահերթ են համարվում մասնագիտական կրթության որակավորումը, գիտական աստիճանը, կոչումը, մասնագիտական և մանկավարժական հմտությունները, գիտահետազոտական գործունեության արդյունքները, որակավորման բարձրացումը և վերարակավորումը, դասախոսի գնահատման այլ ձևաչափեր:

Համալսարանում գործում են հիմնական, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու պայմաններ և ընթացակարգ, նկարագրված են դասախոսական յուրաքանչյուր պաշտոնին ներկայացվող չափանիշները:

Համալսարանում համատեղության/ժամավճարային կարգով որպես դասավանդողներ են ներգրավվում աշխատաշուկայի ներկայացուցիչ-գործատուները:

Ուսումնաօժանդակ կազմի հաստիքների ձևավորման և տեղակալման հարցերը համապատասխան ամբիոնի վարիչի ներկայացմամբ քննարկվում են ֆակուլտետի խորհրդում, որից հետո ֆակուլտետի դեկանը հարցերը ներկայացնում է համապատասխան պրոռեկտորին: Ուսումնաօժանդակ կազմի հաստիքների համալրումը նույնպես չի իրականացվում մրցութային կարգով: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզվեց, որ համալսարանն առաջնայնորեն որպես աշխատակիցներ դիտարկում է իր շրջանավարտներին:

Հարկ է նշել, որ դեռևս չեն դիտարկվել կամ իրականացվել նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում առկա խորհրդատվությունները դասախոսական կազմի համալրման մրցութային կարգի մեխանիզմների հստակեցման և կիրառման, որակական ցուցիչների վրա հիմնված դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող չափանիշների մշակման վերաբերյալ:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

«Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասխոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման կանոնակարգը» ներկայացնում է դասախոսական կազմին ներկայացվող պահանջները: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ համալսարանի կրթական ծրագերերի բարելավման գործողություններին համընթաց 2023-2024 ուսումնական տարում՝ առարկայական նկարագրիչները լավարկելիս, վերջիններիս ձևաչափում հավելվել է կետ, որտեղ ներառված են տվյալ դասընթացը դասավանդողի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:

Ուսումնասիրելով «Սերվիս», «Անգլերեն լեզու և գրականություն», «Կենսաբանություն» բակալավրի կրթական ծրագրերի մասնագրերը՝ փորձագիտական խումբը նկատում է, որ բոլոր կրթական ծրագրի համար սահմանված դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները նույնն են՝ Որակավորման և/ կամ գիտական աստիճանի և/կամ կոչման առկայություն, որոնք համապատասխանում են ՄԿԾ-ի/դասընթացների ելքային արդյունքներին, հոգեբանամանկավարժական հմտությունների տիրապետում, գիտամանկավարժական կամ պրակտիկ աշխատանքի փորձ:

Փաստաթղթերի դիտարկումից պարզ դարձավ, որ տարբեր դասընթացների նկարագրերում դասախոսին ներկայացվող պահանջները նույնպես նույնաբովանդակ են՝ որակավորման և/կամ գիտական աստիճանի և/կամ կոչման առկայություն, որոնք համապատասխանում են դասընթացի ելքային արդյունքին, հոգեբանամանկավարժական հմտությունների տիրապետում, գիտամանկավարժական և պրակտիկ աշխատանքի փորձ: Այս համատեքստում հստակ չէ նաև գիտամանկավարժական կամ պրակտիկ աշխատանքի փորձի առկայության պահանջը. ինչպե՞ս է այս խնդիրը լուծվում երիտասարդ՝ սկսնակ դասախոսների պարագայում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ չկան ՇՊՀ-ի դասախոսներին ներկայացվող տարբերակված պահանջներ՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրերի կամ կրթական աստիճանի:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ՇՊՀ-ում դասախոսական կազմի գործունեության գնահատման համար կիրառվում են գործունեության որակի արդյունավետության վարկանիշային տարեկան գնահատումը, մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների գնահատումը, ուսանողների կողմից դասախոսական կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատումը հարցումների միջոցով, դասալսումները:

2021 թվականին լրամշակված տարբերակով վերահաստատվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգը», որի նպատակն է ուսումնական, գիտական և մանկավարժական աշխատանքների իրականացման համար համալսարանի կադրային պոտենցիալի որակի ուսումնասիրումը, հետագա զարգացումը և կատարելագործումը, գիտակրթական գործունեության որակի ապահովումը: Կարգը նախատեսում է դասախոսական կազմի գնահատման ցուցիչներն (ըստ գնահատման ձևերի արտահայտվում են հարցարաններում և այլ ձևաթղթերում) ու բաղադրիչները (մասնագիտական, մանկավարժական, կազմակերպչական կոմպետենցիաներ, գիտական, գիտահետազոտական, գիտամեթոդական գործունեություն, ուսումնամեթոդական, ուսումնական, ուսումնակազմակերպչական, գիտակազմակերպչական գործունեություն, ներհամալսարանական և արտահամալսարանական հասարակական գործունեություն), գնահատման ձևերը, տվյալների հավաքագրման, վերլուծության և վարկանիշավորման ընթացակարգերը: Ընդ որում, համաձայն կարգի, դասախոսական կազմի վարկանիշավորման արդյունքների հիման վրա նախատեսվում է կիրառել խրախուսման և պատժի մեխանիզմներ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի

գնահատման և վարկանիշավորման կարգը դեռևս ամբողջովին չի կիրառվում և բուհում դեռևս առկա չեն դրա կիրառման հիմքով որոշումներ:

Դասախոսական կազմի գործունեության գնահատման համար բուհում իրականացվում են դասալսումներ՝ համաձայն «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան համալսարան» հիմնադրամում դասալսումների և կազմակերպման և իրականացման կանոնակարգի»: Դասալսումներն իրականացվում են Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն: Դասալսումներին մասնակցում են ամբիոնի վարիչը, ով գործընթացի իրականացման պատասխանատուն է, կրթական ծրագրի պատասխանատուն, ըստ անհրաժեշտության՝ այլ դասախոսներ, դեկանը: Համալսարանի կողմից որպես խնդիրներ են դիտարկվում դասախոսական կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կարողունակությունների գնահատումը, լավագույն փորձի բացահայտումն ու տարածումը, վերապատրաստման անհրաժեշտության գնահատումը, աջակցումը սկսնակ դասախոսներին: Դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստում, իսկ ուսումնական տարվա վերջին ներառվում են ամբիոնի գործունեության տարեկան հաշվետվությունում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դասալսումների արդյունքում արված բարելավման առաջարկներն ուղղված են դասավանդման, ուսումնառության մեթոդների ընտրությանը, գնահատման ձևերի և մեթոդների բարելավմանը, հանձնարարականների վերանայմանը, ինչպես նաև դասընթացների բովանդակության վերանայմանը:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ՇՊՀ-ի Գիտական խորհրդի 2024 թվականի փետրվարի 16-ին փոփոխություններով հաստատվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման կանոնակարգը», որի կիրառումը պարտադիր է Հիմնադրամի հիմնական հաստիքային (մրցութային) և պայմանագրային (ոչ մրցութային) կարգով աշխատող դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի համար: Համաձայն կանոնակարգի՝ դասախոսական կազմի վերապատրաստումը ու մասնագիտական որակավորման բարձրացումն իրականացվում է երկու ուղղություններով՝ ընդհանուր-պարտադիր և հատուկ-մասնագիտական: Ընդ որում, հատուկ-մասնագիտական բաղադրիչից կարող են ազատվել մրցութային կարգով պաշտոններ տեղակալած այն դասախոսները, ովքեր հնգամյա ժամանակահատվածում պաշտպանել են թեկնածուական, դոկտորական ատենախոսություններ կամ ստացել են դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումներ կամ դասախոսի աշխատանքի անհատական պլանի կատարման որակի հիման վրա գնահատվել են որպես արդյունավետ աշխատող:

Համաձայն ինքնավերլուծության՝ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ՇՊՀ-ում իրականացվել է 125 վերապատրաստում, որից 28-ը՝ մասնագիտական, 97-ը՝ ոչ մասնագիտական ուղղվածության: Սակայն նշված փաստաթղթում առկա է տեղեկություն ընդամենը մեկ վերապատրաստման մասին, որի թեմատիկան համահնչեցվել է բուհում ընթացող մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման գործողություններին՝

«Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավում. մեխանիզմներ և գործիքակազմ»: Այն իրականացվել է 2023թ. հունիսին, այսինքն՝ մինչև կանոնակարգի վերահաստատումը: Փորձագիտական այցի ընթացքում էլ չներկայացվեցին հստակ տեղեկություններ այլ վերապատրաստումների վերաբերյալ:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

2023-2024 ուսումնական տարում ՇՊՀ-ում աշխատում է 234 դասախոս: Գիտական աստիճան ունեն 131-ը (14 գիտության դոկտորներ, 117 գիտության թեկնածուներ): Համալսարանում աշխատում է 14 պրոֆեսոր, 100 դոցենտ:

ՇՊՀ-ում վերջին երեք տարվա կտրվածքով փոփոխվել է գիտական աստիճան ունեցող դասավանդողների թիվը. 2021-2022 ուսումնական տարվա համեմատ 2023-2024 ուսումնական տարում գիտության դոկտորների թիվը նվազել է 3-ով, գիտության թեկնածուների թիվը նվազել է 10-ով: Գիտական կոչում ունեցողների թիվը նշված ուսումնական տարիների կտրվածքով ավելացել է 3-ով:

Համաձայն ներկայացված վիճակագրական տվյալների՝ 2021-2022 ուսումնական տարում համալսարանում աշխատել է 221 հիմնական դասավանդող, ևս 95 համատեղության կարգով կամ ժամավճարով: 2023-2024 ուսումնական տարում հիմնական դասավանդողների թիվը՝ 155 է (նվազել է 66-ով), համատեղությամբ/ժամավճարով աշխատողների թիվը՝ 79 (նվազել է 16-ով): Երկու տարիների տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ հիմնական դասախոսների թիվը նվազել է գրեթե 30%-ով:

Ուսումնասիրելով դասախոսական կազմի համալրման բուհի կողմից ներկայացված դինամիկան՝ կարելի է արձանագրել, որ 2020-2021 ուսումնական տարում նոր ընդունված դասախոսների թիվը 13 է, իսկ պայմանագրի ժամկետը լրանալու կամ այլ պատճառներով աշխատանքից ազատված դասախոսների թիվը՝ 31: 2021-2022 ուսումնական տարում ընդունվել է 14 դասախոս, ազատվել՝ 32-ը: 2022-2023 ուսումնական տարում՝ ընդունվել է 12 դասախոս, ազատվել՝ 11-ը:

Դասախոսական կազմի կայությունն ապահովելու տեսանկյունից հարկ է նշել, որ թեև համալսարանը փորձում է իրականացնել երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականություն, բուհի կողմից ներկայացված քանակական տվյալները փաստում են, որ այն չի նպաստում գործընթացին: Այսպես, 2018-2019 և 2021-2022 ուսումնական տարիների տվյալները համեմատելով՝ տեսանելի է, որ նշված ժամանակահատվածում 35 տարեկան դասախոսների քանակը նվազել է 6.8%-ով, մինչդեռ 35-65 տարեկան դասախոսների քանակն ավելացել է 2.7%-ով, 65-ից բարձր տարիք ունեցողների քանակն ավելացել է 4.1%-ով: Փորձագիտական խմբի հանդիպումների ընթացքում նաև արձանագրվեց, որ կան ամբիոններ, որտեղ դասախոսների նվազագույն տարիքը 42 տարեկան է:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ երիտասարդացմանը նպաստելու և նոր դասախոսներ ներգրավելու համար բուհում ներդրվել է մենթորության ինստիտուտը: Հաշվի առնելով դասավանդող դասախոսի մասնագիտական ուղղվածությունը, ինչպես նաև նրա կողմից դասավանդվող դասընթացի բովանդակությունը՝ բուհը սկսնակ դասախոսներին կցում է փորձառու դասախոսներին՝ փորձի փոխանցման նպատակով: Մենթորները մեթոդական

աջակցություն են ցուցաբերում սկսնակ դասախոսներին, իրականացնում դասալսումներ, տրամադրում խորհրդատվություն։

Դասախոսական կազմի կայությունն ապահովելու համատեքստում համալսարանում տարբերակված մոտեցում է ցուցաբերվում գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող և չունեցող աշխատակիցներին վճարվող աշխատավարձերի դրույքաչափերի միջև՝ համաձայն «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության դասախոսի ծանրաբեռվածության ձևավորման հիմնական նորմերի»։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ներկայումս կրթական ծրագրերի իրականացման համար բուհն ունի համապատասխան դասախոսական կազմ, իսկ որոշ ամբիոններ (օրինակ՝ Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոն) ունեն նաև կադրերի բազա անհրաժեշտության դեպքում դասախոսական կազմը համալրելու համար։

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՇՊՀ-ում որպես դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի գործիքներ են դիտարկվում մասնագիտական վերապատրաստումները և մենթորության ինստիտուտի ձևավորումը սկսնակ դասախոսներին աջակցելու համար:

Որպես դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ցուցիչ է դիտարկվում գիտական աստիճանի և գիտական կոչման ստացումը: 2025 թվականից նախատեսվում է միանվագ լրավճար սահմանել նախորդ տարվա ընթացքում դոկտորի գիտական աստիճանի կամ պրոֆեսորի գիտական կոչման ստացման համար։

Որպես աշխատանքային գրավիչ պայման բուհի կողմից նշվում է գիտությունների դոկտոր, պրոֆեսորի 1 դրույքաչափին համապատասխան ամսական հաշվարկային աշխատավարձը։ Այսուհանդերձ, դրա համադրումը հանրապետության միջին աշխատավարձին ցույց է տալիս, որ այն բավական ցածր է։ ՇՊՀ-ում կա նաև ձևավորված ավանդույթ՝ տարվա ընթացքում կարգապահական տույժի չենթարկված հիմնական աշխատակիցներին աշխատանքային պարտականությունների բարեխիղճ և պատշաճ կատարման համար Ռեկտորի հրամանով տրվում է մեկ ամսվա աշխատավարձի պաշտոնական դրույքաչափով պարգևավճար:

ՇՊՀ-ի դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և գործող ընթացակարգեր, որոնք էականորեն կազդեն համապատասխան գործընթացների վրա, նկատելի չեն։

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ՇՊՀ-ի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ուղղությամբ իրականացված գործընթացներից կարևոր է նշել համալսարանում իրականացված կառուցվածքային փոփոխություններն ու դրան համապատասխան կադրային քաղաքականությունը: Փորձագիտական խմբի դիտարկումներով՝ համալսարանն ունի բավարար վարչական և ուսումնաօժանդակ կազմ (50 և ավելի աշխատակից) բարձրագույն կրթության և իր ՌԾ նպատակների իրականացման համար։

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ընտրության քաղաքականության իրականացման տեսանկյունից համալսարանն առաջընթաց է համարում պաշտոնների նկարագրերի ներդրումը, որոնցում սահմանված են պաշտոններին ներկայացվող պահանջները, աշխատանքի կազմակերպման կարգը և պատասխանատվության շրջանակը, աշխատանքային պարտականությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ համալսարանն իր կրթական ծրագրերի իրականացման համար ապահովված է համապատասխան որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով, ինչը նպաստում է կրթական ծրագրերի շարունակական իրականացմանը: Դասախոսական կազմում համապատասխան գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների ներգրավումը որոշակի հիմքեր է ստեղծում նաև բուհում գիտահետազոտական գործունեության խթանման, հետազոտության և ուսումնառության գործընթացների փոխկապակցման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսական կազմի ներգրավման և ընտրության մեխանիզմների արդյունավետության դիտարկումը՝ մեկ տարով պայմանագրերի կնքման վտանգների գնահատումը, կարևոր են բուհի համար՝ բարձրացնելու դասախոսների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը և երաշխիքներ ձևավորելու կրթական ծրագրերի երկարաժամկետ պլանավորման համար (ներկա փուլում դեռ չունենալով վտանգ դասախոսների գործունեության շարունակականության վերաբերյալ): Փորձագիտական խմբի դիտարկմամբ կրթական ծրագրերի վերջնարդյունքների հիմքով ըստ կրթական ծրագրերի դասախոսների համալրման հստակ պահանջների ներդրումը կարող է նպաստել դասախոսական կազմի առավել թիրախային ներգրավմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում գործատու դասավանդողների ներգրավման հնարավորությունների կիրառումը և այս փորձի ընդլայնման միտումը: Այն կնպաստի կրթական ծրագրերի համապատասխանեցմանը աշխատաշուկայի պահանջներին:

Դրական է, որ բուհը քայլեր է իրականացնում երիտասարդ դասախոսների ներգրավման ուղղությամբ, որպես դասախոսական կազմի ներգրավման աղբյուր դիտարկում նաև իր շրջանավարտներին: Փորձագիտական խումբը շեշտադրում է նշված գործընթացների կարևորությունը կայուն սերնդափոխության ապահովման համար: Երիտասարդ և փորձառու դասախոսների հավասարակշռված համադրությունը կարող է խթանել դինամիկ ուսումնական և հետազոտական միջավայրի ձևավորմանը: Այս համատեքստում դրական հանգամանք է բուհի կողմից մենթորության ինստիտուտի ներդրումը, ինչը կարող է նպաստել սկսնակ դասախոսական կազմի կատարելագործմանը:

ՇՊՀ-ում սահմանված են դասախոսական կազմի գործունեության գնահատման մեխանիզմներ. կարևոր է գնահատել կիրառվող գործիքակազմի արդյունավետությունը և ռեսուրսներն ուղղել կրթական ծրագրերի բարելավման բոլոր ուղղություններով:

Նախորդ հավատարմագրումից հետո բուհը, վերանայելով դասախոսական կազմի խրախուսման և մասնագիտական առաջընթացի մեխանիզմները, փորձել է հիմքեր ստեղծել և կանոնակարգել գործընթացների իրականացումը: Փորձագիտական խումբը շեշտադրում է դասախոսական կազմի վերապատրաստումների, աշխատակիցների խրախուսման և դասախոսների առաջընթացին նպաստող քաղաքականության կիրառման անհրաժեշտությունը, ինչը կնպաստի դասախոսների մասնագիտական կարիքների

բավարարմանը ու մասնագիտական զարգացմանը: Անհրաժեշտ է հստակորեն և համապատասխան ժամանակցույցով պլանավորել մասնագիտական զարգացման միջոցառումները՝ հենվելով գնահատման արդյունքում բացահայտված խնդիրների վրա: Բուհի կողմից դասախոսների մասնագիտական զարգացման նպատակով ֆինանսական ռեսուրսների հատկացումը կնպաստի դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը և նրանց մասնագիտական կարողությունների բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը ձևավորել է բավականաչափ մոտիվացված, մասնագիտական կարողունակություններով օժտված, թիմային աշխատանքի միտված վարչական և ուսումնաօժանդակ կազմ, ովքեր աջակցում են բուհի կրթական նպատակների իրագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհն իր կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, առկա են դասախոսական կազմի գնահատման և զարգացման հնարավորություններ, բուհը քայլեր է ձեռնարկում ապահովելու կրթական ծրագերի իրականացման կայունությունը երիտասարդ դասախոսներին, այդ թվում իր շրջանավարտներին ներգրավելու միջոցով, առկա են դասախոսական կազմի մասնագիտական զարգացման որոշ հնարավորություններ, իր նպատակների իրականացման համար բուհն ունի անհրաժեշտ ուսումնաօժանդակ և վարչական կազմ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: ՇՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Գիտահետազոտական գործունեության զարգացումը ՇՊՀ 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի երեք առաջնահերթություններից մեկն է: Նախորդ հավատարմագրումից հետո գործունեությունն այդ նպատակին համահունչ դարձնելու ուղղությամբ բուհում զգալի աշխատանք է տարվել: Այսպես, նախորդ փուլում գիտահետազոտական ոլորտում առաջնահերթություններ սահմանված չէին: 2023թ.-ին ԳԽ-ի կողմից հաստատվել են ՇՊՀ-ում 2023-2027թթ.-ի գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները, որոնցից են, մասնավորապես, հայագիտությունն իր ներքին ճյուղերով (լեզու, գրականություն, պատմություն, արվեստ), ֆիզիկայի մի շարք ենթաոլորտներ և երկրաբանությունը: Գիտահետազոտական գործունեության խրախուսման քաղաքականության մեջ շեշտադրվում են բնագիտամաթեմատիկական ուղղությունները:

Առաջնահերթ կերպով կատարվել է հետազոտական գործունեությունը համալսարանում համակարգված կառավարելու առումով կառուցվածքային փոփոխություն՝ նախկին «Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի» վերակազմավորմամբ 2023 թ.-ին ձևավորվել է «Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոն» առանձին կառույցը, մշակվել և հաստատվել է կենտրոնի գործունեության մինչև 2027 թ. նպատակային ծրագիրը: Կենտրոնի գործունեության շրջանակներում սահմանվել են կատարողականի ցուցիչներ, որոնք հաճախ բավական ընդհանրական են (Հստակեցված և ամրագրված գիտահետազոտական առաջնահերթություններ, Գիտական դրամաշնորհային ծրագրերում մասնակցության թվաքանակի աճ) կամ ենթադրում են ոլորտը կարգավորող փաստաթղթի մշակում կամ վերանայում (Գիտական աշխատություններ գրելու և հետազոտական հմտությունների զարգացման ուղեցույց, Գիտահետազոտական գործունեության զարգացումը խրախուսող մշակված և ներդրված ընթացակարգեր): Այսպիսով, ուսումնասիրելով ծրագիրը և համադրելով սահմանված խնդիրներն ու կատարողականի ցուցիչները՝ տեսանելի է դառնում, որ դրանք դեռ չեն արտացոլում այն արդյունքները, որոնք բուհն ակնկալում է ունենալ համապատասխան գործընթացների կատարման դեպքում:

Այս ընթացքում մեկնարկ է տրվել ներքին դրամաշնորհների հատկացման գործընթացին: Աճել է գիտահետազոտական գործունեության ֆինանսավորման չափը՝ նախկին 1.6 տոկոսից 2.9 տոկոս, ինչը խթանել է նաև սեփական նախաձեռնությամբ իրականացվող հետազոտությունները, H գործակից ունեցող 9 հոդված է հրատարակվել բուհում:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ իրականացված բարելավումները դեռ մեկնարկային փուլում են, և դրանց արդյունավետությունը (այդ թվում՝ ռազմավարական ծրագրի այդ նպատակի իրագործումը) գնահատելու համար կենտրոնի զարգացման ծրագրով նախատեսված շրջափուլը դեռ չի ավարտվել: ՇՊՀ-ն իր բյուջեի 3-3.5%-ը հատկացնում է գիտության համար բաժին ընկնող ծախսերի կատարմանը:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտության ոլորտում ՇՊՀ-ի հավակնությունները ձևակերպված են համալսարանի 2023-2027 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, որի հիման վրա մշակվել և հաստատվել է գիտահետազոտական գործունեության զարգացման քաղաքականությունը, ըստ որի համալսարանի գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական նպատակը բնական, հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով հետազոտությունների իրականացման զարգացումն է՝ միջազգայնացման, ուսումնառության հետ կապի ու գիտակրթական կառույցների հետ համագործակցության ընդլայնման ապահովմամբ: Այդ նպատակին համապատասխան մշակվել են համալսարանական կենտրոնների և ամբիոնների, ինչպես նաև գիտահետազոտական գործունեությունը համակարգող կառույցի՝ Գիտական քաղաքականության և նորարարությունների կենտրոնի գործողությունների՝ ռազմավարության գործողության ժամանակահատվածի հետ համընկնող ծրագրերը:

Ըստ հաստատված քաղաքականության՝ գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունները և առաջնահերթությունները պետք է ունենան երկու բաղադրիչ՝ հաստատուն և փոփոխուն, որոնցից առաջինը հայագիտությունն է, իսկ երկրորդ՝ փոփոխուն բաղադրիչը հիմնվում է բուհում նախորդ հինգ տարիների գիտահետազոտական գործունեության արդյունքների վրա (հրատարակված հոդվածներ, մենագրություններ և այլ), ինչպես նաև համալսարանի գիտամանկավարժական համակազմի առկա գիտական ներուժը հաշվի առնելու: Ամբիոնների աշխատանքային պլանների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում սահմանված են Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնին ներկայացվելիք ավարտական աշխատանքների թեմաների հաստատումը, գիտական սեմինարների անցկացումը: Ամբիոններն իրենց մասնագիտական ուղղություններին համապատասխան ունեն նաև հետազոտական ուղղություններ, սակայն դրանք հստակորեն արտացոլված չեն ամբիոնների աշխատանքային ամենամյա պլաններում:

Փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ 2023թ.-ի ընթացքում համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների կողմից իրականացված գիտահետազոտական գործունեության արդյունքներն ամփոփվել են 118 գիտական/ գիտամեթոդական հոդվածներում, 5 թեզիսներում, 3 ուսումնամեթոդական/ գիտամեթոդական/ ուսումնագիտական աշխատանքներում: 2023թ.-ին համալսարանի ՊԴ կազմի կողմից հրատարակվել են գիտական աշխատություններ, որոնց մեծ մասը (շուրջ 50%) տպագրված են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ) կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ամսագրերում կամ ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրում: 2021-2023թթ.-ին աշխատակիցների կողմից հրատարակած աշխատությունների քանակը հետևյալն է՝ 2021թ.՝ 132, 2022թ.՝ 154, 2023թ.՝ 114 հոդված: Համալսարանում 2023թ.-ի ընթացքում ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող 3 գիտահետազոտական թեմաներ են իրականացվել, որոնցից 2-ը պայմանագրային (թեմատիկ), իսկ 1-ը՝ բազային, ընդ որում բոլորը՝ Մաթեմատիկա, ֆիզիկա և ՏՏ ամբիոնի ՊԴ կազմի կողմից:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

2023թ.-ին բուհում մշակվել և ընդունվել է գիտահետազոտական գործունեությունը կարգավորող հիմնական փաստաթղթային հենքը, որի հիման վրա համալսարանը ձեռնամուխ է եղել կազմակերպելու գիտահետազոտական գործունեությունը: Դրա հիմնական գործիքներից են ներբուհական գիտական դրամաշնորհները և գիտական դպրոցների հիմնադրումը: «Գիտական դպրոց» ձևակերպման տակ հասկացվում են գիտական աստիճան ունեցող դասախոսի ղեկավարած հետազոտական խմբեր, որոնց կազմում ուսումնասիրության առարկայի հետազոտության մեջ ներգրավված են նաև ասպիրանտներ և ուսանողներ:

Դասախոսների գիտահետազոտական գործունեությունը խթանելու նպատակով բուհում վերանայվել է 2016 թ.-ից գործող ներբուհական դրամաշնորհների տրամադրման կարգը: Գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների ուղղությամբ տրամադրվող դրամաշնորհը ներդրվել է որպես երկարաժամկետ՝ 24 կամ 36 ամիս ժամկետով, իսկ գիտահետազոտական գործունեության բոլոր ուղղություններով տրամադրվող դրամաշնորհը՝ միջնաժամկետ կամ կարճաժամկետ՝ 24 կամ 12 ամիս ժամկետով: Գիտական

արդյունքի առևտրայնացման և միջազգային դրամաշնորհների ներգրավման համար սահմանվել է ներբուհական դրամաշնորհների տրամադրման հստակ ընթացակարգ։

2023 թ.-ին հրապարակումների քանակը որոշակիորեն զիջում է նախորդ տարիների ցուցանիշներին։ Այս հանգամանքը պայմանավորված է այն մոտեցմամբ, որ բուհը, կարևորելով հրապարակումներում ՇՊՀ դասախոսների կողմից համալսարանի աշխատակից լինելու փաստի ամրագրումը, հրապարակումների և հոդվածների հաշվարկումը կատարելիս հաշվի է առել միայն այն հոդվածները, որտեղ հեղինակները նշել են ՇՊՀ դասախոս լինելու փաստը։

Համալսարանում ԲԿԳԿ բազային ֆինանսավորմամբ իրականացվում է մեկ դրամաշնորհ, որում ներգրավված է 3 աշխատակից։ Բուհում, բացի հետազոտական գործունեության նպատակով տրամադրվող ներքին դրամաշնորհներից, գործում է աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգը, որը սահմանում է նաև լրավճարի միջակայքերն ըստ հրապարակման ամսագրի (լրավճար է սահմանվում նաև ՇՊՀ Գիտական տեղեկագրում տպագրության համար), ինչպես նաև խթանում գիտական աստիճան ստանալուն ուղղված հետազոտական գործունեությունը։

ՇՊՀ-ն ունի Գիտական տեղեկագիր, որը հիմնադրվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից 2011թ.-ին։ ՇՊՀ Գիտական տեղեկագրի Ա և Բ պրակներն ընդգրկվել են ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների 2023թ.-ի ցուցակում, իսկ 2023թ. սեպտեմբերից այն գրանցված է գիտական հրատարակությունների տվյալների բազա հանդիսացող eLibrary գիտական էլեկտրոնային գրադարանում։

ՊԴ կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգով առանձին գործակից է սահմանված դասախոսների ղեկավարությամբ ուսանողների ծավալած գիտահետազոտական աշխատանքների արդյունքների համար։ Աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգում ևս ներդրվել են գիտահետազոտական գործունեության և ուսումնառության կապն ապահովող 2 մեխանիզմներ։ Մասնավորապես՝

- Ուսանողների կողմից գիտահետազոտական գործունեության իրականացումը խթանելու, ուսումնառություն-հետազոտություն կապն ամրապնդելու նպատակով՝ 1-ին անգամ լրավճար (միանվագ խրախուսական վճար) սահմանվել է նաև ուսանողների համար։
- Լրավճարի տրամադրման սանդղակում ավելացվել է նոր կետ՝ ամբիոններում կազմակերպվող գիտական սեմինարների համար լրավճարի սահմանմամբ։

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը։

Գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը ՇՊՀ գիտական քաղաքականության հավակնոտ նպատակներից մեկն է։ Ըստ ինքնավերլուծության՝ աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման կարգով միջազգայնացմանը նպաստելու նպատակով առանձին, ավելի բարձր չափի լրավճարներ են տրամադրվում՝ SJR-ի Q1, Q2 քառորդներում ընդգրկված ամսագրերում տպագրված հոդվածների համար 150 հազար, իսկ

Q3, Q4 քառորդներում ընդգրկված ամսագրերում տպագրվածների համար՝ 125 հազար դրամ: Դասախոսների գնահատման և վարկանիշավորման կարգով գիտական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեության բաժնում առավել բարձր գործակիցներ սահմանված են գիտահետազոտական գործունեության արդյունքների միջազգայնացման համար:

Ընդհանուր առմամբ, բուհի աշխատակիցները 2023թ.-ի տվյալներով հրապարակել են 78 գիտական հոդվածներ, որոնցից 6-ը ԱՊՀ, 10-ը՝ այլ միջազգային ամսագրերում, այդ թվում՝ 6-ը Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված գիտական ամսագրերում:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Համալսարանում զարգացման ռազմավարական ծրագրի դրված նպատակին համապատասխան քաղաքականություն է տարվում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ ձևավորելու ուղղությամբ: Ներկա փուլում, ելնելով ռազմավարական ծրագրի, ինչպես նաև նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցի համաձայն կազմված թերությունների վերացման պլանի դրույթներից, աշխատանք է տարվել հետազոտության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հարցերը կանոնակարգելու և դրանց նոր բովանդակություն հաղորդելու ուղղությամբ: Մասնավորապես, «Մասնագիտական ոլորտում հետազոտական աշխատանքի իրականացման հիմունքներ» անվանմամբ դասընթաց է նախատեսվել նաև բակալավրի կրթական ծրագրում, կանոնակարգվել են դրամաշնորհների տրամադրման պահանջները, դրանց ներդրումը տվյալ ամբիոնի կրթական ծրագրերի թեմատիկայում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ ամենը նկատելիորեն աշխուժացրել է գիտական հետազոտություններում դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը, մի շարք ծրագրերում, ինչպես, օրինակ «Սերվիս» կրթական ծրագրում, ավարտական աշխատանքները կիրառական-հետազոտական էական բաղադրիչ ունեն՝ ուսումնասիրության առարկա դարձնելով Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի խնդիրները և դրանց լուծումների առաջարկներ դուրս բերելով:

Հետազոտության և կրթության կապին առնչվող որոշ խնդիրներ դեռ սպասում են թե՛ կանոնակարգման և թե՛ գործնականացման, մասնավորապես, միջգիտակարգային ուսումնասիրությունների ներգրավումը հետազոտահենք ծրագրերի մշակման և իրականացման գործում:

Մասնագիտական զրույց-քննարկումներից պարզ դարձավ, որ բուհում ներդրվել են գիտահետազոտական գործունեության և ուսումնառության կապն ապահովող մեխանիզմներ: Մասնավորապես՝ ուսանողների կողմից գիտահետազոտական գործունեության իրականացումը խթանելու, ուսումնառություն-հետազոտություն կապն ամրապնդելու նպատակով սահմանվել է լրավճար (միանվագ խրախուսական վճար) նաև ուսանողների համար և լրավճարի տրամադրման սանդղակում ավելացվել է նոր կետ՝ ամբիոններում կազմակերպվող գիտական սեմինարների համար լրավճարի սահմանմամբ: Սակայն նշված մեխանիզմների կիրառման փորձեր դեռևս առկա չեն:

Մագիստրոսական թեզերի դիտարկումը ցույց տվեց, որ ուսանողների թեզերում առկա է հետազոտական բաղադրիչ, վերլուծություն և եզրահանգումներ: Այսպես օրինակ, «Սերվիս» ծրագրի ավարտական կուրսի ուսանողների թեզերը շոշափում են մարզային խնդիրները, այդ

թվում՝ ոչ միայն Շիրակի մարզի։ Գիտահետազոտական տարբեր պարունակող կուրսային, ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերն առաջադրվում են ամբիոնների հիմնական գիտահետազոտական ուղղություններին համապատասխան։ Ուսանողների կողմից հետազոտական աշխատանք կատարելու հմտությունները բակալավրիատում ձևավորվում են կուրսային և ավարտական աշխատանքների կատարման միջոցով։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում հետազոտական գործունեությունն աշխուժացնելու, այդ ուղղությամբ դասախոսական կազմի և ուսանողների շահագրգռվածությունը խթանելու նպատակով բուհում ձեռնարկվող քայլերը։ Հետազոտական ոլորտում առաջնահերթությունների սահմանումը ՇՊՀ հետազոտական գործունեությունը դարձրել է առավել համակարգված ու պլանավորված։ Այս համատեքստում նախատեսված գործընթացների համակարգային իրականացումը կարող է հանգեցնել ՇՊՀ-ում գիտական արդյունքների քանակական և որակական աճին։ Սա կնպաստի նաև բուհի միջազգային հեղինակության բարձրացմանը և գիտական հասարակության մեջ ճանաչման ավելացմանը։ Փորձագիտական խումբը կարևորում է նաև հետազոտական զարգացման նպատակով կատարողական ցուցիչների վերափոխումը և հստակ արդյունքային շրջանակի սահմանումը, ինչը հետազոտական գործընթացի պլանավորումը կդարձնի առավել նպատակային և գնահատման տեսանկյունից ավելի չափելի։

Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտությունների ֆինանսավորման աճը խթանիչ է դարձել գիտահետազոտական գործունեության համար։ Ներբուհական դրամաշնորհների տրամադրումը և դրանց նոր ձևաչափերը նպաստում են հետազոտական նախաձեռնությունների ակտիվացմանը։

Հետազոտական արդյունքների միջազգային ճանաչման համար դրական է, որ ՇՊՀ ներկայացուցիչներն ունեն գիտական հրապարակումներ միջազգային ամսագրերում և շտեմարաններում։ Այս համատեքստում փորձագիտական խումբը շեշտադրում է նաև միջգիտակարգային ուսումնասիրությունների իրականացումը, ինչը կնպաստի գիտական առաջընթացին, ինչպես նաև կխթանի հետազոտական նոր ուղղությունների ձևավորումը և նորարարական լուծումների ստեղծումը։ Միջգիտակարգային հետազոտությունների խթանման նպատակով բուհը կարող է դիտարկել նաև գործընկեր համալսարանների ու գիտական կազմակերպությունների հետ համագործակցության ավելացման ուղղությունները, ինչը նոր հնարավորություններ կստեղծի բուհի համար սահմանափակ ռեսուրսների պարագայում հետազոտական արդյունքներ ունենալու, այդ թվում դրանք առևտրայնացնելու համար։ Բուհը կարող է դիտարկել նաև ներքին միջգիտակարգային հետազոտությունների իրականացման հնարավորությունները՝ հենվելով իր ֆակուլտետների գիտական ներուժի վրա։

Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտական համապատասխան միջավայր ձևավորելու համար կարևոր է հետազոտական բաղադրիչի շարունակական ընդլայնումն ու բովանդակային զարգացումը կրթական ծրագրերում, հատկապես մագիստրոսական կրթական ծրագրերում։ Միաժանակ, կարելի է նշել, որ դասախոսական կազմի կողմից արված հետազոտական արդյունքների ներդրումը ուսումնական գործընթացում կնպաստի հետազոտահենք կրթական ծրագրերի ձևավորմանը։ Դրական են ուսանողներին հետազոտական նախագծերում ներգրավելու ՇՊՀ ջանքերը, ինչը նպաստում է կրթության և հետազոտության փոխկապակցմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո բուհը սահմանել է հետազոտական ոլորտում իր հավակնությունները, փորձել է հիմքեր ստեղծել հետազոտական գործունեության խթանման համար, քայլեր է ձեռնարկել հետազոտական գործունեությունը միջազգայնացնելու, ինչպես նաև հետազոտական թեմաները մարզի կարիքներին առավելագույնս կապակցելու ուղղությամբ, որոշակի աշխատանք է տարել հետազոտության և ուսումնառության փոխկապակցման մեխանիզմներ ձևավորելու ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: ՇՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՇՊՀ-ն իր գործունեությունը ծավալում է երկու մասնաշենքերում՝ գլխավոր մասնաշենքում (10002.87ք.մ) և Ռազմական ամբիոնի (1125.87ք.մ.) մասնաշենքում, որի առաջին հարկում առանձին մուտքով տեղակայված է Համալսարանի հյուրատունը (180ք.մ.), ուր միաժամանակ կարող է հյուրընկալվել 12 այցելու: Առանձին հասցեներով Հիմնադրամի հաշվեկշռում են նաև ՇՊՀ դպրոցի, քոլեջի մասնաշենքերը:

Փորձագիտական այցի ընթացքում ռեսուրսների դիտարկումը ցույց տվեց, որ ուսումնական մասնաշենքերը բարեկարգ են: Վարչական կազմի աշխատասենյակները հագեցած են գրասենյակային գույքով և տեխնիկայով, ունեն համացանցային հասանելիություն: Լսարանները կահավորված են, առկա են համակարգչային լսարաններ, տեխնիկապես՝ էկրանով, պրոյեկտորով հագեցած լսարաններ, ինչպես նաև առարկայական կաբինետներ (աշխարհագրության, սոցիալ-հոգեբանական կենտրոնի, լեզվի կենտրոնի, այլ) և արվեստանոցներ (գծանկարչության, գեղանկարչության, փայտի և մետաղի գեղարվեստական մշակման, այլ): Լսարանների տեխնիկական հագեցվածության խնդիրը համալսարանը հիմնականում փորձում է լուծել միջազգային համագործակցության, միջազգային ծրագրերի միջոցով: Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և կենսատեխնոլոգիաների ուսումնական լաբորատորիաները հագեցած են համապատասխան սարքավորումներով: Դրանցից շատերը ձեռք են բերվել տասնյակ տարիներ առաջ: Փորձագիտական հանդիպումների ընթացքում արձանագրվեց, որ ուսանողներն անհրաժեշտություն են տեսնում լսարաններում առկա գույքի թարմացման, ինչպես նաև լաբորատոր գույքի, սարք-սարքավորումների արդիականացման համար լաբորատոր գործնական պարապմունքների իրականացման նպատակով:

Համալսարանն ունի նիստերի դահլիճ 150 նստատեղով, որն ապահովված է համաժամանակյա թարգմանության համակարգով, պրոյեկտորով, տեխնիկական անհրաժեշտ այլ հնարավորություններով:

ՇՊՀ գրադարանի ընդհանուր մակերեսը 526.97ք.մ. է, գործում է ընթերցասրահ՝ 201.14ք.մ.: Գրադարանի գրականության անվանացանկում մասնագիտական գրքերի թիվը 60 հազարից ավելի է: Վերջերս համալսարանը ձեռք է բերել գրքերի թվայնացման սարք, որի շնորհիվ առաջիկայում նախատեսում է թվայնացնել գրադարանի առավել պահանջված և անհրաժեշտ գրականությունը: Գործընթացն արդեն մեկնարկել է. որոշակի թվով գրականություն արդեն հասանելի է ուսանողներին և դասախոսներին էլեկտրոնային կրիչով: Ընթերցասրահը կահավորված է անհատական գրասեղաններով և համացանցի հասանելիությամբ համակարգիչներով, հնարավորություն ունի սպասարկելու միաժամանակ մոտ 40 այցելուի: Գրքային ֆոնդի համալրումը հիմնականում տեղի է ունենում նվիրատվությունների հաշվին ինչպես գործընկեր ուսումնական հաստատությունների, այնպես էլ անհատների կողմից: ՇՊՀ կայքի Գրադարան բաժինը (https://library.shsu.am/) հնարավորություն է տալիս օգտվել ըստ գիտության ոլորտների տասնյակ թվային գրքերից, ինչպես նաև տրամադրում է 50-ից ավելի տարբեր էլեկտրոնային գրադարանների հղումներ, այդ թվում՝ արտասահմանյան: Կայքում առկա է նաև էլեկտրոնային սպասարկման՝ գրականությունն առցանց պատվիրելու համակարգ, որից կարող են օգտվել համալսարանի սովորողներն ու աշխատակիցները:

Համալսարանն ունի երկու բարեկարգ սպորտային դահլիճ, որոնք հագեցած են սպորտային անհրաժեշտ գույքով և առարկաներով: Մասամբ օգտագործվում է նկուղը, որտեղ կա հրաձգարան: Գործում է փոքրիկ հեռուստատաղավար՝ հագեցած համապատասխան տեխնիկայով:

Մասնաշենքում գործում է սննդի կետ, որից օգտվում են ուսանողներն ու դասախոսները՝ դրական գնահատելով ծառայությունների որակը:

ՇՊՀ-ն ունի նաև գեղեցիկ և խնամված կանաչապատ բակ:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Համաձայն ինքնավերլուծության՝ համալսարանի համար գերակա խնդիր է ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացումը վերապատրաստումների իրականացման կրթական լրացուցիչ ծառայությունների մատուցման, դրամաշնորհների ներգրավման, գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման միջոցով: Վերջին տարիներին նման ծառայություններից մուտքերը աճել են 2021թ.-ին արձանագրված 2,73%-ից հասնելով 4,93%-ի՝ 2023թ.-ի դրությամբ: Հարցը բարձրաձայնվել է նաև Հոգաբարձուների խորհրդում, սակայն նշված աղբյուրներից զատ մուտքերի բազմազանեցման այլ մեխանիզմներ բուհի կողմից դեռևս չեն կիրառվել: 2021թ., 2022թ., 2023թ. փաստացի մուտքերի բաշխումն ունի հետևյալ համամասնությունը. համապատասխանաբար ըստ տարիների տեսակարար կշիռը պետական ֆինանսավորման՝ 44.32%, 46.77%, 49.86%, ուսանողական վարձավճարներից՝ 52.95%, 49.15%, 45.21%, այլ գործունեությունից՝ 2.73%, 4.1%, 4.93%:

Համաձայն ՇՊՀ-ի Եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության ընթացակարգի՝ նախահաշիվը

կազմելու ժամանակ նախ հաշվի են առնվում Զարգացման ռազմավարական ծրագրի նպատակները, ապա նաև այլ հանգամանքներ՝ օրենսդրական հնարավոր փոփոխությունները, նախորդ տարիների փաստացի տվյալները, հնարավոր զարգացումները և այլն: Վերջին երեք տարիներին համալսարանի կողմից կատարված փաստացի ծախսերը, որոնք իրականացվել են ըստ ռազմավարական ուղղությունների, փոփոխվել են: Համեմատելով 2021թ. և 2023թ. փաստացի ծախսերը՝ տեսանելի է թվերի աճ հետևյալ ուղղություններով՝ կառավարում և վարչարարություն (+0.76%), ուսանողներ (+306.0%), հետազոտություն և զարգացում (+74.0%), արտաքին կապեր և միջազգայնացում (+349.0%), որակի ապահովման ներքին համակարգ (+5.4%): Նշված ժամանակահատվածում ծախսերի նվազում է արձանագրվել հետևյալ ուղղություններով՝ մասնագիտական կրթական ծրագրեր, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ (-0.72%), ենթակառուցվածքներ և ռեսուրսներ (-1.29%):

Միևնույն ժամանակ, փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին երեք տարվա ընթացքում բուհի դրամական միջոցների զգալի մասը (81% և ավելի) հատկացված է աշխատավարձին, գիտության ծախսերը կազմում են միջինը մոտ 3.2%, տնտեսական ծախսերը՝ մոտ 3.2%, մնացած մասը բաժին է ընկնում այլ ծախսերին: Բուհի ֆինանսական ռեսուրսներում ներառվում են արտաքին աղբյուրներ՝ տարբեր դրամաշնորհային ծրագրերից:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ՇՊՀ-ի ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական հանդիպումների արդյունքներով պարզ դարձավ, որ համալսարանում առկա չէ մասնագիտական կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն: Բուհը չի իրականացրել կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նվազագույն ռեսուրսների հաշվարկ: Միևնույն ժամանակ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ելնելով մարզի և տարածաշրջանի ռազմավարական խնդիրներից և կարիքներից՝ համալսարանը հնարավորություն է գտնում ապահովել ըստ մասնագիտական կրթական ծրագրերի առկա համակարգում բակալավրիատի և մագիստրատուրայի, հեռակա համակարգում բակալավրիատի փոքրաթիվ ուսանողական համակազմով խմբերի կրթության կազմակերպումը (օրինակ, 2023-2024 ուսումնական տարվա տվյալներով. Զբոսաշրջություն-առկա/բակալավրիատ՝ 3 ուսանող, Միջմշակութային հաղորդակցություն՝ ֆրանսերեն և հայերեն - առկա/բակալավրիատ՝ 2 ուսանող, Քաղաքագիտություն-առկա/բակալավրիատ՝ 3ուսանող, Կենսաբանություն-առկա/ մագիստրատուրա՝ 1ուսանող, Դեկորատիվ կիրառական արվեստ-առկա/մագիստրատուրա՝ 1 ուսանող, Անգլերեն լեզու և գրականություն - հեռակա/բակալավրիատ՝ 2 ուսանող, Երաժշտական կրթություն - հեռակա/բակալավրիատ՝ 1 ուսանող և այլն):

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ պլանավորվող տարվա նախահաշիվը կազմելու համար տվյալներ են հավաքագրվում կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներից, դրանք գնահատվում են բուհի համապատասխան ստորաբաժանման կողմից, այնուհետև ներկայացված պահանջագրերի հիման վրա բուհը տրամադրում է

ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ընթացիկ կիրառման նյութերն ու ռեսուրսները:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Փորձագիտական այցի ընթացքում ռեսուրսների դիտարկումից և քննարկումներից պարզ դարձավ, որ Համալսարանի ռեսուրսային բազան հնարավորություն տալիս է իրականացնել կրթական ծրագրերը: Այդուհանդերձ, փորձագիտական այցի արդյունքում արձանագրվեց, որ խնդիր կա, օրինակ, լաբորատոր նյութերի և սարքավորումների արդիականացման, գրադարանի ֆոնդի հարստացման, դասախոսական կազմի աշխատավարձի բարձրացման:

Համալսարանը զարգացման ռազմավարական ծրագրին համահունչ իրականացրել է էական կառուցվածքային փոփոխություններ՝ դրանով, ըստ էության, որոշակիորեն փոփոխել է ռեսուրսների բաշխման տրամաբանությունը: Ըստ համալսարանի ղեկավարության՝ սույն փոփոխությունը պետք է նպաստի ռազմավարական պլանի իրականացմանը: Այսուհանդերձ, փորձագիտական դիտարկումները ցույց են տվել, որ բուհի ֆինանսական հատկացումներն առավելապես ուղղվում են աշխատավարձերի տրամադրմանը:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ՇՊՀ-ում փաստաթղթաշրջանառությունը համակարգվում է Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի կողմից՝ իր կանոնադրության հիման վրա, որը ներկա տեսքով հաստատվել է 2023 թվականին: Բաժինն իրականացնում է Mulberry համակարգի օգտագործման գործառույթները, համալսարանի պաշտոնական info@shsu.am և secretariat@shsu.am էլեկտրոնային հասցեների սպասարկումը, ընդունում է ստացվող պաշտոնական և ոչ պաշտոնական թղթակցությունը, հսկողություն իրականացնում դրանց կատարման ընթացքի նկատմամբ: Նշված բաժնի գործառույթներից է համալսարանի փաստաթղթերի արխիվացման կազմակերպումը, ինչպես նաև ներքին իրավական ակտերի, կանոնակարգերի, պայմանագրերի նախագծերի և այլ փաստաթղթերի նախագծերի մշակումը:

Համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառությունը կազմակերպվում է ինչպես էլեկտրոնային եղանակով (e-mail, local network), այնպես էլ, ըստ անհրաժեշտության, թղթային տարբերակով:

Մշակվել և ներդրվել է հատուկ համակարգչային ծրագիր, որը հնարավորություն է տալիս կազմակերպել ակադեմիական գործընթացները: Մասնավորապես, այն ներառում է տվյալներ ուսանողների և շրջանավարտների մասին, ձևավորում է քննական, ակադեմիական տեղեկագրեր, առաջադիմության ամփոփումներ և այլն: Համապատասխան հրավիրյալ մասնագետի հետ համագործակցությամբ համալսարանը պարբերաբար փորձում է զարգացնել գործող համակարգի ծրագրային հնարավորությունները՝ առաջիկայում նախատեսելով ընդլայնել տվյալների բազաները՝ ներառելով դասախոսական կազմի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ:

ՇՊՀ-ում հաշվապահական գործունեությունն իրականացվում է ավտոմատացման համակարգով՝ հաշվապահական ծրագրերի կիրառմամբ:

Համալսարանի տեղեկատվական գործընթացի համակարգումն իրականացնում է Արտաքին համագործակցության կենտրոնը՝ իր կանոնադրության հիման վրա, որը ներկա տեսքով հաստատվել է 2023 թվականին: Բազմաթիվ գործառույթների շարքում Կենտրոնի գործառույթների թվում են ՇՊՀ-ի պաշտոնական կայքէջի, սոցիալական հարթակների համար բովանդակության ստեղծումն ու համակարգումը: ՇՊՀ-ի պաշտոնական կայքէջի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այն ապահովում է տեղեկատվության բավականին լայն հասանելիություն՝ հաշվետվությունների, փաստաթղթերի, կազմակերպական և ակադեմիական այլ գործընթացների վերաբերյալ:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Համալսարանում գործում է բուժկետ՝ համալրված առաջին բուժօգնություն տրամադրելու հնարավորություններով: Հաստիքացուցակով նախատեսված են բժշկի և բուժքրոջ հաստիքներ:

Շենքի մուտքն ունի թեքահարթակ, որն ապահովում է համապատասխան կարիքներ ունեցող մարդկանց մուտքը առաջին հարկ: Մասնաշենքի ներսում թեքահարթակներ չկան: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ այս պահին հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողներ բուհը չունի, սակայն ունենալու պարագայում նախատեսվում է ուսումնական գործընթացը նրանց համար կազմակերպել առաջին հարկում:

Համալսարանի լաբորատորիաների պատերին փակցված են լաբորատորիաներից օգտվելու անվտանգության կանոնները: Փորձագիտական այցից պարզվեց, որ լաբորատորիաներից օգտվելու անվտանգության կանոնների մասին ուսանողներին նաև տեղեկացնում են լաբորատոր աշխատանքներ իրականացնելուց անմիջապես առաջ:

Տարածքի և շենքի անվտանգությունն ապահովվում է ցերեկային ժամերին դռնապանների միջոցով, գիշերային ժամերին, ինչպես նաև ոչ աշխատաքային օրերին՝ մասնագիտացված անվտանգության ծառայության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Մասնաշենքում առկա է անվտանգության հակահրդեհային համակարգ: Շենքի ներսում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման սխեմաներ: Նկուղը թեև բավականաչափ կահավորված չէ, սակայն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել որպես ապաստարան:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Որպես ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմ համալսարանը իրականացնում է հարցումներ շահակիցների շրջանում: Համաձայն «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում հարցումների անցկացման և արդյունքների ամփոփման ընթացակարգ»-ի՝ հարցումների հիմնական նպատակն է բացահայտել հիմնադրամի շահակիցների վերաբերմունքն ու բավարարվածությունը (նաև կարիքները)՝ նրանց մատուցվող

ծառայություններից և, ըստ այդմ, կատարել լավարկումներ մատուցվող ծառայություններում: Սակայն փաստաթուղթը չի ներառում հարցաթերթիկների կամ հարցարանների ձևաթղթեր, ինչպես նաև թեմաների շրջանակ, որոնց նվարված ուսումնասիրություններ են իրականացվելու: Բուհի ինքնավելուծության համաձայն՝ համալսարանի ուսանողները և շրջանավարտները հիմնականում գոհունակություն են հայտնում ուսումնառության ընթացքում իրենց տրամադրված նյութատեխնիկական ռեսուրսներից: Ըստ տարբեր խնդիրների գնահատման՝ ուսանողների շրջանում ամենացածր ցուցանիշն արձանագրված է «Գոհունակություն լսարանային կահավորանքից»՝ 3.79 (5.0-ից), ամենաբարձրը՝ «Գոհունակություն ուսումնական նյութերից»՝ 4.47 (5.0-ից): Հաշվի առնելով, որ ներկայացված փաստաթղթերում բացակայում է հարցումների իրականացման մեթոդաբանության նկարագրությունը, ներկայացուցչականության ապահովման հիմնավորումը՝ կարելի է նշել, որ կատարված հարցումները չեն ընդգրկում տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության ամբողջական և համակողմանի գնահատում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ համալսարանը շարունակաբար զարգացնում է իր ենթակառուցվածքները և ռեսուրսներն ուսումնական հաստատության նպատակների իրականացման համար: Բուհն ունի անհրաժեշտ ուսումնական միջավայր, ինչը նպաստում է կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ռեսուրսների համալրման ու կառավարման քաղաքականության վերանայումը, ըստ ռազմավարական առաջնահերթությունների ֆինանսական ռեսուրսների հատկացումը կնպաստեն բուհի երկարաժամկետ զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ համալսարանը ռեսուրսների համալրումն իրականացնում է նաև դրամաշնորհային ծրագրերի միջոցով: Այլընտրանքային ֆինանսական մուտքերի ընդլայնումը ավելի մեծ հնարավորություններ կտա համալսարանին՝ նախատեսված ծրագրերն իրականացնելու համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհն անհրաժեշտություն ունի ուշադրության կենտրոնում պահելու դրամական միջոցների հատկացման ուղղությունները աշխատավարձի վճարումից զատ զարգացման ուղղություններին հատկացումների ծավալի ընդլայնման նպատակով: Զարգացման բյուջեի ձևավորման նպատակով բուհը կարող է դիտարկել նաև այլ համագործակցությունները՝ պետության, միջազգային կազմակերպությունների միջոցով ֆինանսական միջոցների ներգրավումը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է բուհի հանձնառությունը Շիրակի մարզին անհրաժեշտ մասնագիտություններով մասնագետներ թողարկելու փոքրաքանակ խմբերով կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով և նշում, որ բուհի կողմից կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների գնահատումը և վերջնարդյունքներին համահունչ ռեսուրսների բաշխման մեխանիզմների ներդրումը կարևոր կլինեն կրթական ծրագրերի ֆինանսական պլանավորման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը նախորդ հավատարմագրումից հետո բարելավել է նաև փաստաթղթավորման գործընթացները, ինչը նպաստում է տեղեկատվության փոխանցման ու տարածման արդյունավետության բարձրացմանը: Փաստաթղթաշրջանառության գործընթացների էլեկտրոնայնացումը

նպաստում է նաև կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ տվյալների առավել դյուրին հավաքագրմանը և մշակմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի քայլերն անվտանգ գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու, ուսանողներին լաբորատորիաներից օգտվելու կանոններին ծանոթացնելու ուղղությամբ, ինչը նպաստում է ուսումնական միջավայրի լավարկմանը և կենսագործունեության ռիսկերի կառավարմանը:

Դրական հանգամանք է նաև, որ բուհի շահակիցները հիմնականում բավարարված են հաստատության ենթակառուցվածքներով, իսկ տրամադրվող ռեսուրսների կիրառելության մեխանիզմներն աջակցում են կարիքների վերհանմանը: Բացահայտված կարիքների համակողմանի վերլուծությունը կարևոր կարող է լինել բուհի առկա ռեսուրսների բաշխման գործընթացների լավարկման համատեքստում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ իր կրթական ծրագրերի իրականացման համար բուհն ապահովված է համապատասխան ենթակառուցվածքներով և ռեսուրսներով, շարունակաբար բարելավում է իր ենթակառուցվածքները, ռեսուրսների համալրման նպատակով օգտագործում է նաև միջազգային ծրագրերի հնարավորությունները, բուհում առկա են փաստաթղթավորման գործընթացներն իրականացնելու համար համապատասխան համակարգեր, բուհը ստեղծում է անվտանգ միջավայր ուսումնառության գործընթացի կազմակերպման համար, բուհում գործում են ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: ՇՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Հասարակական պատասխանատվությունը ՇՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով առաջադրված խնդիրներից մեկն է, որը բխում է Հանրային ներգրավում ռազմավարական նպատակից: ՇՊՀ հասարարակական պատասխանատվության յուրօրինակ ցուցիչն է շրջանավարտների՝ մոտ 90%-ի պարագայում Շիրակի մարզում աշխատելու և գործունեություն ծավալելու հանգամանքը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը կարևորում է հաշվետվողականությունը և թափանցիկ գործելաոճը կառավարման բոլոր մակարդակներում և գործունեության ոլորտներում: Գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովումը համապատասխան կանոնակարգերով վերապահված է Արտաքին համագործակցության կենտրոնին, որը օգտագործում է նաև այլ կենտրոնների և բաժինների տրամադրած տեղեկատվությունը: Այդպիսով, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաշվետվողականությունը բուհը փորձում է ապահովել ոչ միայն ուղղահայաց, այլ նաև

հորիզոնական ուղղություններով: Հաշվետվողականության համակարգի ուղղահայաց բաղադրիչը ներառում է ըստ աստիճանակարգի հաշվետվությունների ներկայացում և ամփոփվում հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացվող ռեկտորի ամենամյա հաշվետվությամբ: Հաշվետվողական յուրաքանչյուր մակարդակում բուհը ներդրել է այսպես կոչված «հարակից զեկույցի» ինստիտուտ՝ կրկնաստուգման յուրօրինակ մեխանիզմ, երբ հաշվետվությունը քննարկող և հաստատող մարմնին ներկայացվում է նաև դրա վերաբերյալ համապատասխան վերադաս օղակի եզրակացություն: Ներդրված մեխանիզմի արդյունավետությունը բուհի կողմից դեռ չի գնահատվել: Այդուամենայնիվ, հաշվետվությունները հիմնականում շարունակում են կրել նկարագրական բնույթ, իսկ գործընթացն ապահովող փաստաթղթերի պահանջները պատշաճ հենք չեն ձևավորում հաշվետվությունների վերլուծականությունը խրախուսելու համար:

Բուհն իր գործունեության մասին հաշվետվություններ է ներկայացնում նաև ՀՀ ԿԳՄՄՆ-ին, ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ին, ՀՀ ՊԵԿ-ին, ՀՀ Վիճակագրական կոմիտեին, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության և պահանջի, պետական այլ գերատեսչությունների:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ՇՊՀ գործունեության տարբեր կողմերը լուսաբանվում են թե՛ պաշտոնական կայքում, թե՛ սոցիալական ցանցերում բուհի էջերում և թե՛ հաղորդակցական այլ խողովակներով տարածվող տեղեկատվության միջոցով: 2024 թ.-ի առաջին կեսին բուհի կայքէջի այցելուների թիվը 226607 է: Հատկանշական է, որ հարցվածների մեծամասնությունը նախապատվություն է տալիս սոցիալական ցանցերին (Facebook և Instagram սոցցանցերով բուհի գործունեությանը հետևում է հարցվածների համապատասխանաբար 53 և 29 տոկոսը, մինչդեռ բուհի պաշտոնական կայքով՝ 13 տոկոսը): Բուհի պաշտոնական կայքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսանողական ծառայություններին, Ուսանողական խորհրդին ու Ուսանողական գիտական ընկերությանն առնչվող տեղեկատվությունն առավել դժվար է գտնել. դրանք միասին զետեղված են «Ավելին» բաժին:

Նախորդ հավատարմագրումից հետո զգալի աշխատանք է կատարվել կայքի հայերեն և, հատկապես, անգլերեն էջերի համարժեքությունն ապահովելու ուղղությամբ: Կարևոր է նշել այդ առումով, որ Արտաքին համագործակցության կենտրոնում ձևավորվել է ուսանողներից բաղկացած կամավորների խումբ, որի մասնակցությամբ մեկ տարվա ընթացքում կայքէջի նյութերից ռուսերեն է թարգմանվել 47 էջ, անգլերեն՝ 186 էջ:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հասարակության հետ հետադարձ կապի ապահովումը վերապահված է Արտաքին համագործակցության կենտրոնին և կարգավորվում է վերջինիս կանոնադրությամբ և հասարակայնության հետ կապերի հաստատված ընթացակարգով, որը ներառում է արտահամալսարանական միջավայրից եկող արձագանքների հավաքագրում, ինչպես նաև պաշտոնական կայքի համապատասխան բաժնի համալրում, սոցիալական ցանցերի էջերի մեկնաբանությունների դաշտերը, համալսարանական տարբեր ենթակառույցներին ուղղվող էլեկտրոնային նամակները և այլ: Կիրառվում է նաև ՇՊՀ ռեկտորի պարբերական ասուլիսների մեխանիզմը: Հետադարձ կապի արդյունավետությունը պարզելու նպատակով յուրաքանչյուր

կիսամյակի ավարտին արտաքին և ներքին շահառուների շրջանում անցկացվում են առցանց հարցումներ, վերլուծում դրանք և կատարում համապատասխան բարելավումներ՝ վերլուծության արդյունքների հիման վրա: Կարևոր է այդ առնչությամբ նշել, որ անկախ օգտագործվող հարթակից շահակիցների 87 տոկոսը գոհունակություն է հայտնել հետադարձ կապից: Այդուամենայնիվ, կայքի ազդեցության վերլուծության բացակայության պայմաններում արտաքին շահակիցների որոշ խմբերի, մասնավորապես, դիմորդների ծնողների հետ կապի մեխանիզմների ձևավորման պատկերը պարզ չէ:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հանրությանը բարձրակարգ գիտելիք և արժեքներ փոխանցելու ուղղությամբ նախորդ հավատարմագրումից հետո բուհում որոշակի առաջընթաց է արձանագրվել. ստեղծվել և առաջիկա ուսումնական տարվանից իր գործունեությունն է սկսելու Օտար լեզուների կենտրոնը, որի նպատակներից մեկը պետք է լինի նաև արտաքին շահակիցների համար լեզվական դասընթացների իրականացումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համակարգային հիմքերի վրա են դրված ուսուցիչների համար իրականացվող վերապատրաստումները, ակտիվացել են ուղիղ կապերը մարզի ուսումնական հաստատությունների հետ, մասնավորապես, դպրոցների աշակերտների համար ուսումնական այցեր են կազմակերպվում, որոնց ընթացքում աշակերտները նաև կարողանում են օգտվել բուհի լաբորատոր ռեսուրսներից: Մի շարք այլ նախաձեռնություններ նույնպես ընթացքում են, այդ թվում նկատելի է, որ մագիստրոսական թեզերի թեմաներում և թեզի շրջանակներում կատարված հետազոտություններում աճում է տեղական համայնքի խնդրացանկը կազմող հարցերի ուսումնասիրությունը, ինչպես նաև կիրառական արժեքը:

Կատարված հարցումները ցույց են տալիս բուհի գործունեության այդ ոլորտի դրական ազդեցությունը Շիրակի մարզի միջավայրի վրա: Այսպես, վերջին երեք տարիների ընթացքում իրականացված վեապատրաստումների և կազմակերպված ամառային դպրոցի մասնակիցների թիվը կազմել է համապատասխանաբար 521 և 107:

Ամառային դպրոցի ավարտին ևս մասնակիցները լրացնում են հարցաթերթիկներ, որտեղ աշակերտները 1-5 բալային համակարգով գնահատում են իրենց ստացած գիտելիքներն ու տպավորությունները. Մասնակիցների 90 տոկոսն այն համարել է հետաքրքիր, իսկ 85 տոկոսը՝ օգտակար:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հասարակությանը արժեքների փոխնացման գործընթացները պլանավորելիս բուհը մարզի կարիքների ամբողջական գնահատում չի իրականացրել, որի վրա կհենվեին դասընթացների ուղղությունները (օրինակ, բուհի հետազոտական ուղղություններից մեկով՝ Հայագիտության ուղղությամբ դասընթացների իրականացում) և թիրախային խմբերը (օրինակ, տարեցներ):

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհն առաջնորդվում է հաշվետվողականության և թափանցիկության ապահովման գործելաոճով կառավարման բոլոր մակարդակներում: Այս տեսանկյունից կարևոր է շարունակաբար բարելավել ներկայացվող զեկույցների վերլուծականությունը, ցույց տալ պլանավորված գործընթացների զարգացման դինամիկան և վերլուծել չկատարված կամ թերի կատարված գործընթացների պատճառները: Հաշվետվողականության այս շղթայի պահպանումը

էականորեն կնպաստի նաև հետագա պլանավորման գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հասարակական պատասխանատվության և արտաքին, այդ թվում միջազգային կապերի գործառույթների համակցումը համակարգման մեկ օղակում ապահովում է հաշվետվողականության և թափանցիկության գործընթացների իրականացումը:

Դրական հանգամանք է, որ նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել են թափանցիկության ապահովման մեխանիզմները, տեղեկատվության թարմացման պարբերականությունը, այդ թվում՝ օտարալեզու տարբերակներով: Կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության ամբողջական համալրումը, շրջանավարտների մասնագիտական հնարավորությունների լուսաբանումը կնպաստեն նաև դիմորդների շրջանում բուհի մասին իրազեկվածության բարձրացմանը և կնպաստեն ՇՊՀ հանրային տեսանելիության բարձրացմանը:

ՇՊՀ-ն որոշակի առաջընթաց է արձանագրել հանրությանը գիտելիքների և արժեքների փոխանցման գործում՝ կազմակերպելով վերապատրաստումներ ու դասընթացներ հանրության տարբեր խմբերի համար: Նորաստեղծ Օտար լեզուների կենտրոնի ներուժի ամբողջական կիրառումը կարևոր է նպաստելու շահակիցների լեզվամիմացության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև այն կարող է լրացուցիչ ֆինանսական մուտքեր ապահովել բուհի համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ հասարակության կարիքների ամբողջական գնահատումը կարող է նպաստել դասընթացների ուղղությունների և թիրախային խմբերի ճիշտ ընտրությանը, նպաստել տեղական խնդիրների լուծմանը և ապահովել բուհի հասարակական ազդեցության ավելացումը տարածաշրջանում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՇՊՀ-ն իր առաքելության համաձայն որպես մարզային բուհ ունի հաշվետվողականության սահմանված կարգ, նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել են բուհի գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման մեխանիզմները, գործում են հասարակության հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ և առկա են գիտելիքների ու արժեքների փոխանցման հնարավորություններ՝ փորձագիտական խումբը գնահատում է, որ ՇՊՀ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: ՇՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Շիրակի պետական համալսարանը, հաշվի առնելով նախորդ հավատարմագրման արդյունքները, միջազգայնացման և համագործակցության ուղղությամբ սահմանել է իր հավակնությունները, ինչն արտացոլված է համալսարանի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագրում՝ որպես որակյալ կրթության ապահովման խնդիրներից մեկը (խնդիր 5)՝ առաջադրելով տարբեր ուղղություններով լուծումներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՇՊՀ-ն, կարևորելով փորձի փոխանակումը, զարգացումն ու միջազգայնացումը, մշակել և ներդրել է գործընթացները կարգավորող ընթացակարգեր, որոնց մի մասը մշակվել է միջազգային համագործակցության ծրագրերի շրջանակներում՝ ապահովելով գործընկեր բուհերի համապատասխան գործընթացները կարգավորող նորմատիվային փաստաթղթերի հետ համադրելիությունը: Այսպես օրինակ, լրամշակվել է Համալսարանի Արտաքին համագործակցության կենտրոնի (ԱՀԿ) կանոնադրություն, մշակվել է 2023-2024թթ. ՇՊՀ-ի միջազգայնացման հայեցակարգը, ԱՀԿ-ի 2023-2027թթ. հնգամյա/ամենամյա աշխատանքային ծրագիրը:

ՇՊՀ-ն իր արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ գործընթացներ իրականացնելիս առաջնորդվում է ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարության և մի շարք փաստաթղթերով: ՇՊՀ-ն ՌԾ իրականացնման ժամանակացույցում նախատեսել է միջազգայնացման ուղղությամբ ՌԾ-ի խնդիրներից բխող գործողությունները, որոնցից որոշները որոշակի փուլով իրականացվել են, օրինակ՝ հրավիրյալ պրոֆեսորի, դոցենտի ինստիտուտի զարգացման ուղղությամբ քայլեր, աշխատակազմի՝ դրամաշնորհային ծրագրեր գրելու և ղեկավարելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը միտված վերապատրաստումներ, սակայն գործողությունների մի մասի ուղղությամբ դեռևս գործուն քայլեր իրականացված չեն, դրանք պլանում նախատեսված է իրականացնել 2024թ.-ից, օրինակ՝ համատեղ կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Այնուամենայնիվ, ՇՊՀ-ն դրամաշնորհային տարբեր ծրագրերի միջոցով նպաստել է նաև համալսարանի ռեսուրսային բազայի հարստացմանը՝ խթանելով կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ժամանակակից տեխնոլոգիաներով բուհի համալրումը: ՇՊՀ-ին նյութատեխնիկական բազայի համալրման ու արդիականացման համար տրամադրվել է շուրջ 250.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, Հիմնադրամի ավելի քան 100 աշխատակիցներ ստացել են շուրջ 70.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ աշխատավարձ, իսկ ավելի քան 40 աշխատակիցներ և ուսանողներ հնարավորություն են ունեցել իրենց ուսումնառությունը, դասավանդումն ու փորձառությունը հինգ օրից մինչև մեկ կիսամյակ շարունակելու եվրոպական գործընկեր համալսարաններում:

ՇՊՀ-ն իր ՌԾ-ում խնդիր է դրել նաև լինել Սփյուռքում հայապահպանությանը օժանդակող կազմակերպություն՝ կրթամշակութային ծրագրերի կազմակերպման և իրականացման միջոցով, սակայն այս ուղղությամբ նկատելի արդյունքներ դեռևս առկա չեն:

ՇՊՀ-ն, կարևորելով համագործակցություններն ու արտաքին կապերը, ունի մի շարք պայմանագրեր տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, որոնցից եվրոպական շուրջ 10 բուհերի հետ կնքվել կամ վերակնքվել են համագործակցության պայմանագրեր Էրազմուս+ ակադեմիական շարժունության KA-1 ծրագրի շրջանակներում:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՇՊՀ-ում առկա է Արտաքին համագործակցության կենտրոն, որը գործում է դեռևս 2005թ.-ից, գործառույթները սահմանված են Կենտրոնի կանոնադրությունում: Այն ևս լրամշակվել է 2023-2024թթ. ՌԾ նպատակներին համապատասխան՝ ներառելով ՇՊՀ-ի միջազգայնացման և համագործակցության, բարձրորակ մարդկային ռեսուրսների ներգրավման, հասարակական պատասխանատվության և բարձրորակ ու մրցունակ լրացական կրթական ծառայությունների կազմակերպման և իրականացման ուղղությունների զարգացումը: Կենտրոնն ունի հնգամյա/տարեկան աշխատանքային ծրագիր և ներկայացնում է տարեկան հաշվետվություն, որն էլ ներառվում է համալսարանի տարեկան հաշվետվության մեջ:

Կենտրոնն ապահոված է աշխատակազմով (սահմանված է 7 հաստիք): Առկա են պաշտոնի նկարագրեր և գործառույթների իրականացման համար պայմաններ: Փաստաթղթերի ուսումնասիրության և այցի ընթացքում պարզ դարձավ, որ Կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ՌԾ-ի «Հանրային ներգրավում» ուղղության զարգացման համար: Կենտրոնի կողմից իրականացված աշխատանքները միտված են արտաքին կապերի և միջազգայնացման զարգացմանը:

Կենտրոնն իրականացնում է նաև ՇՊՀ-ի գործունեության լուսաբանում և խթանում է ՇՊՀ-ի՝ հասարակության հետ կապերի ընդլայնմանն ու բազմազանեցմանը, դրանց իրականացման որակի բարելավմանը՝ «Համալսարանական լրագիր» պարբերական ծրագրի, հաղորդումների, ՇՊՀ կայքէջի ու սոցիալական ցանցերի միջոցով: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ վերապատրաստումներ իրականացվել են մասնավորապես՝ ՇՊՀ-ի ուսանողների և աշխատակիցների համար դրամաշնորհային ծրագրեր գրելու, հետազոտական աշխատանքների կատարման կարողությունների զարգացման, որակավորումների ազգային ու ոլորտային շրջանակներին համահունչ կրթական վերջնարդյունքների ձևակերպմանն ուղղված ՄԿԾ-ների կառուցման ու իրականացման վերաբերյալ, ինչպես նաև իրականացրել է հանրակրթական դպրոցների տնօրենների, ուսուցիչների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների և դաստիարակների վերապատրաստումներ, իսկ ըստ ԱՀԿ-ի 2022-2023թթ. տարեկան հաշվետվության, արտաքին շահառուների մասով լրացական դասընթացների իարականացման համար նախատեսված արդյունքները դեռևս չեն ապահովվել: Այցի ընթացքում պարզվեց, որ Կենտրոնը պլանավորել է իրականացնել որոշ լրացական և ոչ ֆորմալ դասընթացներ (EMIS հարթակ, գործառույթներ, հնարավորություններ: Ուսուցչի թափուր տեղի համալրման մրցույթ. գիտելիքներ, կարողություններ: Կոնֆլիկտների կառավարում: Ժամանակի կառավարում: Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության-ԱՀՈ-ի կազմակերպման և իրկանացման հարցեր և այլն), որոնց մի մասն արդեն իրականացրել է: Կատարված աշխատանքների վերաբերյալ համապարփակ վերլուծություններ և գնահատումներ չեն իրականացվել:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՇՊՀ-ն համագործակցում է մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների հետ: Ունի համագործակցության պայմանագրեր եվրոպական շուրջ 20, Հնդկաստանի 2, ԱՊՀ երկրների ավելի քան 15, ՀՀ շուրջ 10 համալսարանների ու կրթական հաստատությունների, ինչպես նաև ՀՀ և միջազգային ավելի քան 20 այլ կազմակերպությունների հետ:

ՇՊՀ-ն տարբեր տարիներին ակտիվ մասնակցություն է ցուցաբերել միջազգային ծրագրերին: Մասնավորապես, վերջին երեք տարիների ընթացքում ՇՊՀ-ն մասնակցել է Էրազմուս+ համալսարանների կարողությունների զարգացմանն ուղղված (KA2) հինգ ծրագրերի (ABioNet, BOOST, SMARTI, WBL4JOB, T4GREEN), ինչպես նաև ակադեմիական շարժունության (KA1) յոթ ծրագրերի՝ Ռումինիայի չորս, Իսպանիայի երկու և Պորտուգալիայի մեկ համալսարանների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ծրագրերում ներգրավված մասնակիցները միջազգային ծրագրերի շրջանակներում կատարվող այցերից վերադառնալիս ՇՊՀ-ում իրականացնում են փորձի փոխանակում սեմինարների կամ զեկուցումների ձևով:

Համալսարանների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման արդյունքում ՇՊՀ-ում ներդրվել են «Կենսատեխնոլոգիա», «Սոցիալական աշխատանք», «Կայուն զբոսաշրջություն» մասնագիտությունները, հիմնվել են կառուցվածքային ստորաբաժանումներ, արդիականացվել գործող ստրաբաժանումները (ՈԱ բաժին, ՈՒԱԲԳՀ բաժին, Օտար լեզուների ուսուցման կենտրոն, Կենսատեխնոլոգիայի լաբորատորիա): Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ միջազգային ծրագրերի շրջանակներում բուհը ձեռք է բերել ժամանակակից համակարգչային տեխնիկա ու սարքավորումներ, ստեղծել և վերազինել մասնագիտական լսարաններ:

«ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում ՇՊՀ-ում 2023թ. հիմնվել է «Քաղաքացիական կրթության կենտրոնը», որտեղ իրականացվող դասընթացներին ակտիվ մասնակցություն ունեն ՇՊՀ-ի ուսանողները:

Գյումրիում գործող «Դեպի Հայք» կազմակերպության հետ համագործակցության շրջանակում վերջին հինգ տարիների ընթացքում ներգրավվել են կամավորներ ՇՊՀ-ում, որոնք իրականացրել են կամավորական աշխատանքներ տարբեր ոլորտներում՝ համագործակցելով ուսանողների և աշխատակիցների հետ:

ՇՊՀ-ն ակտիվ համագործակցում է մարզում տարբեր կառույցների ու կազմակերպությունների հետ, որոնք նպաստում են ուսանողների հասարարական ակտիվությանն ու ներգրավվածությանը, ինչպես նաև գործնական հմտությունների զարգացմանը: Համագործակցություններն իրականացվում են ոչ միայն պրակտիկաների համատեքստում, այլ նաև ավարտական աշխատանքների գործնական մասի կազմակերպման շրջանակներում: Այսպես օրինակ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում «Կենսաբանություն» ՄԿԾ-ի ուսանողը կատարել է փորձեր, որունց արդյունքների հիման վրա գրել է իր ավարտական աշխատանքը:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՇՊՀ-ի դասախոսների և ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը բավարար է, դասավանդողների դեպքում այն կազմում է միջինում 91%, իսկ ուսանողների դեպքում՝ 100%: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ օտար լեզվի իմացության մակարդակը ընդհանուր առմամբ ցածր է: Մինչդեռ ՇՊՀ-ի երիտասարդ մասնագետները կարևորում են այն և փորձում բարելավել լեզվաիմացությունը: ՇՊՀ-ն մասնագիտական օտար լեզուների, մասնավորապես՝ անգլերենի իմացության մակարդակի բարձրացմանը նպաստող միջոց է համարում Էրազմուս+ SMARTI ծրագրի

շրջանակներում 2023թ. հիմնված Օտար լեզուների ուսուցման (EMI) կենտրոնը, որը կրթական ծառայություններ է մատուցելու ոչ միայն ՇՊՀ-ի դասախոսներին և ուսանողներին, այլև Գյումրու շահագրգիռ բնակչությանը: Այցի ընթացքում պարզվեց, որ կենտրոնում Օտար լեզվի դասընթացները կմեկնարկեն սեպտեմբերից: Անգլերենի իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովման համար ՇՊՀ-ն, հաշվի առնելով նաև նախորդ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվությունները, կրթական ծրագրերում ավելացրել է օտար լեզվին հատկացված ժամաքանակը մեկ կիսամյակի փոխարեն երկու կիսամյակ, սակայն այցի ընթացքում պարզվեց, որ այն ևս քիչ է կարճ ժամանակահատվածում արդյունք ապահովելու համար: ՇՊՀ-ն չունի նաև Օտար լեզվով դասավանդվող ՄԿԾ-ներ կամ ոչ մասնագիտական կուրսերում անգլերենով դասավանդվող որևէ դասընթաց, բացի «Անգլերեն լեզու և գրականություն» ՄԿԾ-ի դասընթացներից: Միջազգայնացմանը նպաստող գործիքների ուսումնասիրության փորձ ևս բուհը չունի: Նախորդ հավատարմագրման ընթացքում ևս առկա է եղել ներքին շահակիցների օտար լեզվի իմացության խնդիրը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակը խոչընդոտում է դասախոսների և ուսանողների շարժունությանը, որոնց թիվը վերջին երեք տարիներին կազմել է յուրաքանչյուրի դեպքում՝ 7, որից 5-ականը՝ 2023թ.:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ՇՊՀ-ն ունի Արտաքին համագործակցության կենտրոն, որի միջոցով մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի, ունի միջազգայնացման ու համագործակցության քաղաքականություն և իրականացնում է համակարգված գործընթացներ: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ-ի տեսլականին և նպատակներին հասնելու արդյունավետ ճանապարհը օտար լեզվով դասավանդվող կրթական ծրագրերի, դասավանդողների և ուսանողների շարժունության համար նպաստավոր պայմանների ապահովումն է, այդ թվում օտար լեզվի ուսուցման համար պայմանների հնարավորինս արագ ստեղծումը: Միաժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է, աշխատանքային ծրագրում պլանավորված գործողությունների համար հստակ և իրատեսական ժամկետների ընտրությունը, ինչը կարող է բերել կատարողականի ավելի բարձր ցուցանիշների:

Դրական է, որ ՇՊՀ-ն իր համագործակցությունն ընդլայնելու նպատակով ունի մի շարք տեղական և միջազգային պայմանագրեր, սակայն դրանց ուղղորդումը դեպի գործնական համատեղ ծրագրերի իրականացում կնպաստի ՇՊՀ-ում թե շարժունության ծրագրերի իրականացմանը, թե ներքին շահակիցների օտար լեզվի մակարդակի բարձրացմանը և թե մասնագիտական փորձի փոխանակմանը: Միջազգային ծրագրերում ներգրավվածությունը շուրջ 10 տարիների ընթացքում նպաստել է Համալսարանում հիմնականում ռեսուրսների բարելավմանն ու ձեռք բերմանը, ներկայումս բուհն անհրաժեշտություն ունի ծրագրերն ուղղորդելու նաև կրթական ծրագրերի բերալավմանն ու կապակցելու դրանց շրջանակներում հաստատվող հագործակցությունները բենչմարքինգի իրականացմանն ու կրթական ծրագրերի բարելավմանը:

Միաժամանակ, փորձագիտական խումբը գտնում է ՇՊՀ-ի գործուն համագործակցության անհրաժեշտությունը գիտահետազոտական կազմակերպությունների ու կենտրոնների հետ, այդ թվում Սփյուռքում գործող կազմակերպությունների հետ, ինչը կբխի

իր ՌԾ-ից և կընդլայնի բուհի համագործակցության հնարավորությունները հետազոտական ծրագրերի իրականացման ուղղությամբ:

ՀՀ-ում և մասնավորապես՝ Շիրակի մարզում առկա համագործացությունները նպաստում են ուսանողների պրակտիկաների իրականացմանը և գործատուների հետ փոխգործակցությանը, ինչպես նաև նրանց՝ որպես դասավանդողներ բուհում ներգրավելուն:

ՇՊՀ-ն իր ՌԾ-ի բոլոր ուղղություններում կարևորել է միջազգայնացման և համագործակցության դերը, ինչը ևս փաստում է ՇՊՀ-ի վերաբերմունքն ու ձգտումը Եվրոպական կրթական միջավայրին համապատասխանության և մրցունակության ուղղությամբ: Չնայած փորձագիտական խմբի համար մտահոգիչ է դասավանդողների և ուսանողների օտար լեզվի, մասնավորապես անգլերենի իմացության ցածր մակարդակը, սակայն մյուս կողմից այս համատեքստում դրական արդյունքների կարող է հանգեցնել ՇՊՀ-ում Օտար լեզուների կենտրոնի բացումը, որի արդյունավետ գործարկմամբ կարճ ժամանակում կարող է լուծվել առկա խնդիրը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՇՊՀ-ն ունի միջազգայնացումը խթանող քաղաքականություն, սահմանել է իր հավակնությունները միջազգայնացման և համագործակցության ուղղությամբ, արտաքին համագործակցության ենթակառուցվածքն ապահովում է կանոնակարգված գործընթաց, բուհը շարունակաբար ընդլայնում է համագործակցությունը տեղական և միջազգային կառույցների հետ, նախատեսում է իրականացնել օտար լեզվի դասընթացներ շահակիցների՝ օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: ՇՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Համալսարանում որակի ապահովման ներքին համակարգը սկզբնավորվել է 2011 թ.-ին: Նախորդ հավատարմագրումից հետո բուհը փորձում է այն վերածել ապակենտրոնացած մոդելի՝ տարածելով որակի մշակույթը բոլոր ստորաբաժանումների միջև տարբեր գործընթացներում: Համալսարանը որդեգրել է քաղաքականություն՝ միտված այդ մշակույթի ապահովմանն ու տարածմանը, շարունակական զարգացմանն ու բարելավմանը: Այդուհանդերձ, որակի ապահովման առանձին կառույց որպես այդպիսին ձևավորվել է միայն 2023 թ.-ին՝ առանձնանալով Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնից, ինչը ըստ բուհի զգալիորեն սահմանափակել էր որակի համապարփակ մշակույթ ձևավորելու հնարավորությունները՝ մասնավորապես նվազեցնելով որակի ապահովման գործիքների ազդեցությունը ՇՊՀ գործունեության մի շարք

առանցքային ոլորտներում, ինչպես, օրինակ, գիտահետազոտական, միջազգային համագործակցության, հասարակության հետ հաղորդակցման: Նորաստեղծ բաժինը գործում է ռեկտորի անմիջական վերահսկողության ներքո:

2024թ.-ին հաստատված որակի ապահովման քաղաքականության նպատակն է բուհի գործունեության բոլոր ոլորտներում տրամադրվող ծառայությունների, ինչպես նաև ուսումնառողների ձեռք բերած գիտելիքի, հմտությունների և կարողությունների համապատասխանության ապահովումը ՇՊՀ առաքելությամբ և տեսլականով սահմանված նպատակներին: ՈԱ քաղաքականության նպատակներից է նաև որակի ապահովման ներքին համակարգի շարունակական բարելավմանը և զարգացմանը նպաստելը, մասնավորապես՝ ՈԱ, կառավարման և բարելավման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների դերակատարության բարձրացման աջակցելը: Որակի ապահովման քաղաքականությունը սահմանել է մի շարք խնդիրներ, որոնցից են՝ ներքին և արտաքին շահակիցների կարիքներին համապատասխան կրթական, հետազոտական և մշակութային միջավայրի շարունակական բարելավմանը, համալսարանի ռազմավարական գերակայություններին համահունչ միջազգայնացման և համագործակցության գործընթացների շարունակական բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը, համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում կառավարման արդյունավետության ապահովմանը և տվյալահենք որոշումների կայացմանը, համալսարանի ներքին և արտաքին հաշվետվողականության, գործունեության թափանցիկության ապահովմանը, շարունակական բարելավմանը և արդյունավետության բարձրացմանն աջակցելը: Ընդունվել է նաև որակի ապահովման և կառավարման ներբուհական հայեցակարգը և ստեղծվել է որակի ապահովման ներքին համակարգի նոր ձեռնարկը: Որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որակի ներքին ապահովման համակարգի առանձնահատկությունները, համակարգի գործունեության տրամաբանությունն արտացոլելու փոխարեն այն հիմնականում ներկայացնում է բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող նորմատիվային փաստաթղթերը, կարիքների վերհանման նպատակով կիրառվող գործիքները: Նախորդ հավատարմագրումից հետո բուհը, քայլեր ձեռնարկելով համակարգի գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակման գործում, դեռևս ամբողջությամբ չի կիրառել մշակված գործիքակազմերը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ նախորդ հավատարմագրումից հետո ընդլայնվել են իրականացվող հետազոտությունները, մշակվել են նոր հարցաշարեր և ձևաթղթեր ՇՊՀ գործընթացների կարիքների վերհանման ուղղությամբ հետևյալ ուղղություններով.

- ՇՊՀ-ի ուսանողների կողմից ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատում,
- ՇՊՀ-ի ուսանողների կողմից բուհում ստացած կրթության, բուհի մասնագիտական և կազմակերպչական գործընթացների գնահատում,
- ՇՊՀ-ի շրջանավարտների կողմից բուհում ստացած կրթության, բուհի մասնագիտական և կազմակերպչական գործընթացների գնահատում,
- ՇՊՀ-ի ուսանողների կողմից պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատում,
- ՇՊՀ-ի ՊԴ կազմի կողմից բուհի կառավարման համակարգի և վարչական կառույցների գնահատում,

- ՇՊՀ-ի ուսանողների կողմից գիտելիքների գնահատման արդյունավետության, պրակտիկաների, ակադեմիական խորհրդատվության գնահատում և այլն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցաշարերը լավարկելիս բուհը հաշվի է առել դրանց պատասխաններից ակնկալվող արդյունքների կիրառման ուղղությունները, այսուհնադերձ հարցաշարերի դիտարկումը ցույց է տալիս, որ դրանցում առկա հարցերը ոչ միշտ են գնահատող շահակցի գործունեության տիրույթում (օրինակ, ուսանողի կողմից դասախոսի մասնագիտական խնդիրների լուծման կարողության գնահատումը և այլն): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհը ներկայումս գտնվում է որակի ապահովման գործիքների վերամշակման ու փորձարկման փուլում և նախատեսում է դիտարկել դրանց բարելավման հնարավորությունները՝ հաշվի առնելով շահակիցներից ստացած արձագանքները:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Կառուցվածքային փոփոխություններից հետո որակի ապահովման նոր ձևավորված բաժինը, որի համար տասնութ հիմնական գործառույթ է սահմանվել (որոնցից առանցքայինը կարելի է համարել համալսարանի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում որակի միասնական չափանիշների պահպանմանը, որակի ապահովման ու կառավարման գործընթացների ներդաշնակեցմանը և իրականացմանն աջակցելը), համալրվել է չորս աշխատակիցներով, որոնք ապահովված են գործունեության համար անհրաժեշտ նյութական ռեսուրսներով: Դրա հետ մեկտեղ բաժինը, որակի ապահովման ամբողջական համակարգ ձևավորելու նպատակադրությամբ և ի կատարումն վերը նշված հիմնական գործառույթի ստեղծել է որակի աջակից դասախոսների և ուսանողների ճյուղավորված ցանց, որն օժանդակում է որակի ապահովման խնդիրների առաջխաղացմանը ուսումնական հիմնական ենթակառույցների՝ ֆակուլտետների, ամբիոնների, ինչպես նաև առանձին կրթական ծրագրերի մակարդակներում: Լայնորեն օգտագործվում է նաև կամավորների աշխատանքը հարցաշարերի մասին իրազեկման և տարածման հարցերում:

Ըստ էության, կարելի է փաստել, որ որակի ներքին ապահովման համակարգի ձևավորումը բուհում համարվում է առաջնահերթ խնդիրներից մեկը, որի իրականացմանը ներբուհական սահմանված համապատասխան կարգերով տրամադրվում են նյութական և ֆինանսական ռեսուրսներ, ինչպես, օրինակ, ՈԱ բաժնի աշխատակիցների աշխատավարձը և հավելավճարները, բաժնի նյութական ռեսուրսների համալրմանն ուղղվող միջոցները, ինչպես նաև իրականացվող վերապատրաստումներին տրամադրվող միջոցները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առաջիկայում բուհը նախատեսում է վերապատրաստման հնարավորություններ ստեղծել ՈԱ բաժնի աշխատակիցների համար, ինչպես նաև ներքին վերապատրաստումներ իրականացնել որակի աջակիցների համար:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Նախորդ հավատարմագրումից հետո որակի ապահովման նորաստեղծ բաժինը ձեռնամուխ է եղել որակի ներքին ապահովման՝ շահակիցների հնարավորինս լայն ներգրավմամբ արդյունավետ ճյուղավորված համակարգ ստեղծելու ուղղությամբ, որը կընդգրկի բուհի գործունեության բոլոր կողմերը: Առաջնային կերպով հիմքեր են դրվել

դրանում ներգրավելու ներքին շահակիցներին, մասնավորապես, ուսանողներին և դասախոսներին: Այսպես, ուսանողներն ու դասախոսները ներգրավվում են աշխատանքային խմբերում, հանձնախմբերում, հանձնաժողովներում, մասնավորապես ՌԾ-ի մշակման/լավարկման հանձնաժողովում, ամբիոնի որակի ապահովման հանձնախմբում: Ավելի սահմանափակ է առայժմ արտաքին շահակիցների՝ շրջանավարտների, գործատուների, հանրային այլ դերակատարների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում: Բուհն արտաքին շահակիցների կարծիքները հավաքագրում է կրթական ծրագրերի լրամշակման նպատակով, դիտարկում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները, ինչպես նաև իրականացնում հարցումներ գործատուների շրջանում: Մասնավորապես, նախորդող ուսումնական տարվա ավարտին կատարվել են ՇՊՀ դասախոսի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների զարգացման կարիքների, ՇՊՀ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների, ամփոփիչ ատեստավորման հանձնախմբի գործատու անդամների կողմից ՇՊՀ շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության որակից բավարարվածության գնահատումներ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ իրականացված հարցումների արդյունքում բուհը վերհանել է և քայլեր ձեռնարկել պրակտիկաների երկարաձգման, օտար լեզուների ուսուցման հնարավորությունների ընդլայնման, ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ: Շրջանավարտների կարիքների վերհանման միջոցով բուհն իրականացրել է լրացական դասընթացներ՝ ուղղված փափուկ հմտությունների և տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կարողությունների զարգացմանը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ այսուհանդերձ որակի ապահովման համակարգը դեռևս չի կարողացել վեր հանել կառավարման համակարգի խնդիրները, կառավարման համակարգի արդյունավետության գնահատում բուհում դեռ չի իրականացվել, առկա չեն համակողմանի վերլուծված տվյալներ մարզային առաջնահերթությունների, բուհի զարգացման ուղղությունների վերաբերյալ, որոնք կարող էին դրվել կառավարչական որոշումների կայացման հիմքում:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Նախորդ հավատարմագրումից ՇՊՀ-ն վերանայել է որակի ապահովման համակարգը՝ հիմք ընդունելով հավատարմագրման արդյունքում տրամադրված փորձագիտական խորհրդատվությունները: ՇՊՀ որակի ներքին ապահովման համակարգի՝ նախորդ տարում իրականացված ծավալուն փոփոխությունները դեռևս իրականացման փուլում են, և այդ առումով վաղ է դիտարկել համակարգի գործառության որոշակի շրջափուլի արդյունքների վերլուծության հիման վրա կատարվող նոր վերանայումների անհրաժեշտությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մշակված հարցաշարերը քննարկվում են թիրախ խումբ հանդիսացող շահակիցների հետ, առաջարկների հիման վրա բարելավվում և այդուհետ դրվում գործածության մեջ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ բուհը նախատեսում է մշակված գործիքակազմերի կիրառումից և մեկ շրջափուլ դրանք օգտագործելուց հետո վերանայել ու բարելավել՝ հաշվի առնելով շահակիցների արձագանքները: Բուհը որակի ապահովման գործիքները մշակելիս դիտարկում է նաև համանման այլ բուհերի հարցաշարերը, կիրառվող ձևաչափերը:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Արտաքին գնահատման ինքնավերլուծության իրականացման համար ռեկտորի հրամանով ձևավորվել է աշխատանքային խումբ: ՈՆԱ կենտրոնի տնօրենը և ռեկտորը եղել են բոլոր չափանիշների համար պատասխանատու: Ձևավորվել են աշխատանքային ենթախմբեր, որոնց միջև բաշխվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները: Ինքնավերլուծության տվյալների հավաքագրման համար կիրառվել են հարցումները, քննարկումները ներքին շահակիցների, նաև գործատուների հետ: Ինքնավերլուծությունն առավելապես նկարագրական բնույթ է կրում՝ ներկայացնելով նախորդ հավատարմագրումից հետո բուհի իրականացրած գործընթացները: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ խնդիրներ կան տրամադրվող նյութերի ներկայացման եղանակի հետ կապված: Դրանց հիմնական մասը, այդ թվում որակի ապահովման ձեռնարկը, նկարագրման, փաստերի ներկայացման բնույթի են, վերլուծված չեն: Ինքնավերլուծության շրջանակներում բուհը չի վերլուծել, թե որքանով են վերլուծությունների արդյունքները, ինչպիսիք են տարեկան հաշվետվությունների արդյունքները, օգտագործվում որոշումների կայացման և ռազմավարական պլանավորման, ինչպես նաև որակի ներքին ապահովման համակարգում առկա խնդիրների հայտնաբերման հարցում:

Արտաքին գնահատման համար բուհի որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը հասանելի են նաև բուհի պաշտոնական կայքում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Բուհը գործունեություն է ծավալում ներքին և արտաքին շահակիցների համար տարբեր ոլորտների վերաբերյալ բաց և թափանցիկ տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ: Բուհի կայքում տեղադրված փաստաթղթերը, այդ թվում զեկույցները, արձանագրությունները, ռեկտորի հաշվետվությունները, այլ նյութերը հասանելի են ուսումնասիրության համար, այդ թվում հիմքեր են տեղադրված նաև անգլերենով: Բուհի կայքում հրապարակվող միջոցառումների շարքում մեծ տեղ են զբաղեցնում այն իրադարձությունների մասին հաղորդագրությունները, որոնք անմիջականորեն կապված են որակի ապահովման գործընթացներին, ինչպես, օրինակ, որակի ուսանող աջակիցների հետ հանդիպումներին վերաբերող նյութերը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ շահակիցները տեղեկացված են որակի ապահովման գործընթացներից և դրանց արդյունքներից: Հարցաշարերի արդյունքները քննարկվում են շահակիցների հետ հանդիպումների ընթացքում:

Բուհն օգտագործում է նաև սոցիալական ցանցերը որակի ապահովմանն առնչվող հանդիպումների մասին իրազեկելու նպատակով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհը ձևավորել է որակի ապահովման ներքին համակարգ, որը հիմնված է որակի ապահովման ապակենտրոնացված մոդելի վրա՝ ներառելով բուհի շահակիցների տարբեր խմբերի: Գործընթացների կանոնակարգումը քաղաքականությունների, հայեցակարգերի մշակման

միջոցով կարևոր է ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու որակի ներքին ապահովման գործընթացները: Որակի ապահովման համակարգի ամբողջական գործարկման նպատակով փորձագիտական խումբը գտնում է, որ մշակված բոլոր մեխանիզմների կիրառումը, շահակիցների արձագանքների հիման վրա դրանց լավարկումը կնպաստեն ուսումնական միջավայրի բարելավմանը: Կիրառվող գործիքների շարունակաբար լավարկումը, թիրախային խմբերի ճշգրիտ ընտրությունը, հարցումներում մասնակիցների ներկայացուցչականության ապահովումը կնպաստեն հավաստի տվյալների հավաքագրմանը:

Հաշվի առնելով, որ բուհը գտնվում է ակտիվ փոփոխությունների գործընթացում՝ փորձագիտական խումբը շեշտադրում է որակի ապահովման համակարգի դերը շարունակաբար հավաքագրելու հավաստի տվյալներ բուհի գործունեության ոլորտների վերաբերյալ, հետևելու փոփոխությունների կառավարման ընթացքին: Որակի ապահովման համակարգի կողմից տրամադրված տվյալներն անհրաժեշտ է դնել այս փոփոխությունների կառավարման հիմքում, ինչը կնպաստի նաև կառավարչական որոշումների արդյունավետ կայացմանը:

Դրական հանգամանք է, որ Որակի ապահովման նոր բաժինը համալրվել է չորս աշխատակիցներով և անհրաժեշտ նյութական ռեսուրսներով: Համալսարանը կարևորում է որակի ապահովման գործընթացների կառավարման համար բավարար ռեսուրսների տրամադրումը: Փորձագիտական խմբի գնահատմամբ նոր հնարավորությունների ստեղծումը, ֆինանսական միջոցների հատկացումը բաժնի աշխատակիցների վերապատրաստումների իրականացման համար կնպաստեն նրանց մասնագիտական զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի ջանքերը ներքին շահակիցներին ներգրավելու որակի ապահովման գործընթացներում, ինչը նպաստել է նրանց կարիքների վերհանմանը, և շեշտադրում արտաքին շահակիցներից արձագանքների ստացման հնարավորությունների ընդլայնումը, ինչը կնպաստի բուհ-գործատու կապերի ամրապնդմանը, կրթական ծրագրերի բարելավմանը:

Որակի ներքին ապահովման համակարգի պարբերական վերանայումները և թափանցիկ տեղեկատվության տրամադրումն ապահովում են համակարգի շարունակական զարգացումը: Համալսարանի կայքը և սոցիալական ցանցերը մեծապես նպաստում են որակի ապահովման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածմանը, ինչը բարձրացնում է բուհի հանդեպ հանրային վստահությունը և կարող է խթանել շահակիցների հետ համագործակցության ընդլայնումը, ինչը երկարաժամկետ կտրվածքով կհանգեցնի բուհի կայուն զարգացմանը:

Փորձագիտական խումբը, կարևորելով բոլոր տիրույթներում որակի մշակույթի տարածումը, գտնում է, որ Համալսարանը առաջընթաց կգրանցի ՈԱ համակարգում միասնական տեսլականի ձևավորման պայմաններում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհը նախորդ հավատարմագրումից հետո բարելավել է որակի ապահովման համակարգը, հատկացնում է համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ որակի ապահովման գործընթացների իրականացման համար, որակի ապահովման աջակիցների ներգրավմամբ շարունակաբար ընդլանում է որակի ապահովման ցանցը՝ հիմքեր ստեղծելով որակի մշակույթի տարածման համար, ներքին և որոշակի շրջանակով արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, որակի ապահովման համակարգն ապահովում է իրականացվող

գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը շահակիցներին՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՊՀ-ն բավարարում է չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: ՇՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**



Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

15-ը օգոստոսի, 2024 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմեն Հարությունյան՝ 2000 թվականին ավարտել է Երևանի թատրոնի կինոյիպետական ինստիտուտի Թատերագիտության բաժինը: 2003 թվականին ստացել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2011 թթ. աշխատել է Թատրոնիև կինոյի ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2011-2013թթ. որպես ուսումնական մասի վարիչ: 2002 թ.-ից, դասախոս՝ Արվեստի սոցիոլոգիա, Թատրոնի պատմություն, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում: 2014-2023թթ . եղել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի դեկան: 2023թ.-ից նույն ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտորն է: Մի շարք հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Միչեսլավ Սոխա՝ մագիստրոսի կոչում է ստացել Լոձի համալսարանում և ստացել իր թեկնածուական դոկտորի աստիճանը տնտեսագիտության ոլորտում Վարշավայի համալսարանից: Որպես դասախոս աշխատել է Վարշավայի համալսարանում, որտեղ 9 տարի զբաղեցրել է նաև Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնը: Բացի այդ, նա աշխատել է Կոզմինսկու համալսարանում՝ որպես տնտեսագիտության ամբիոնի վարիչ և ԱՄՆ Հյուսիսային պետական համալսարանում: Միչիսլավ Վ. Սոխան ներգրավված է եղել տարբեր գիտահետազոտական ծրագրերում, որոնք ֆինանսավորվել են մի շարք կառավարական և միջազգային հաստատությունների կողմից, այդ թվում՝ տարբեր նախարարություններ, Լեհաստանի Ազգային բանկ, Կենտրոնական վիճակագրական գրասենյակ, ԱՄԿ, Համաշխարհային բանկ, Եվրոպական խորհրդարան, Եվրոպական հանձնաժողով (5-րդ շրջանակային ծրագիր), Ֆորդի հիմնադրամ, Գիտության խթանման ճապոնական միություն, PHARE, Բաց հասարակության ինստիտուտ և Ա. Սմիթ կենտրոն: Նրա հրապարակած աշխատությունները, ընդհանուր առմամբ շուրջ 140 աշխատություն, ներառում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են մակրոտնտեսությունը, աշխատաշուկան և բարձրագույն կրթության որակը լեհերենով, անգլերենով, ճապոներենով և գերմաներենով:
Իր կարիերայի ընթացքում նա մեծ փորձ է ձեռք բերել բարձրագույն կրթության որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում Լեհաստանի հավատարմագրման կոմիտեի, արտասահմանյան գործակալությունների և միջազգային հավատարմագրման ցանցերում իր աշխատանքի շնորհիվ: Նա գրեթե 20 տարի համագործակցել է PKA-ի հետ: Նա աշխատել է որպես դրա քարտուղար, և որպես նախագահության անդամ, փոխնախագահ: Նա նաև եղել է Խորհրդատվական խորհրդի և Ծրագրային խորհրդի անդամ և որպես փորձագետ աշխատել է հաստատությունում: Բացի այդ, նա ընտրվել է INQAAHE-ի, ECA-ի և CEENQA-ի խորհուրդների անդամ:

ENQA-ի, ECA-ի և ազգային գործակալությունների կողմից նա մասնակցել է բարձրագույն ուսումնական հաստատությունների և հավատարմագրման գործակալությունների ծրագրային և ինստիտուցիոնալ հավատարմագրումներին տարբեր երկրներում, այդ թվում՝ Ալբանիայում, Հայաստանում, Բուլղարիայում, Չեռնոգորիայում, Դանիայում, Լիտվայում, Ղազախստանում, Լեհաստանում, Պորտուգալիայում, Ռումինիայում, Սլովենիայում և Շվեդիայում:

Սամվել Կարաբեկյան՝ 1980 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը (Արարաբեն լեզու և գրականություն)։ 1984 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Արաբերեն խոսքի ռիթմային կառուցվածքը» թեմայով։ Բանասիրական գիտությունների թեկնածու է, դոցենտ։ 1984–1990թթ. եղել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբական և թուրքական բանասիրության ամբիոնի դասախոս, 1991–1992թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի դոցենտ, 1992–2008թթ.՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի վարիչ։ 1995–1997թթ. հանդիսացել է Հայաստանի Հանրապետության Նախագահի օգնական, 1997–1998թթ.՝ Եգիպտոսում ՀՀ դեսպանության խորհրդական, 2006–2008թթ.՝ ԵՊՀ համալսարանական կրթության զարգացման վարչության պետ։ Աշխատել է նաև որպես Հայաստանում ԵՄ կենտրոնի կրթության գծով ավագ փորձագետ, 2018 – 2021թթ. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական, 2021թ.-ից ՀՊՏՀ ռեկտորի գլխավոր խորհրդականն է։ Մի շարք հոդվածների և աշխատությունների հեղինակ է։

Նարինե Միրականյան՝ 2006թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկականպետական մանկավարժական համալսարանի «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» բաժինը (մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչի որակավորում)։ Մանկավարժականգիտությունների թեկնածու է /2016թ./։ 2006-2014 թթ. աշխատել է Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Գանձայի թիվ 1 հանրային դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցչուհի։ 2014-2016թթ. աշխատել է ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Մանկավարժության գիտահետազոտական բաժնում՝ որպես մասնագետ, ապա՝ գլխավոր մասնագետ։ 2019-2020 թթ. Աշխատել է Հյուսիսային համալսարանի Որակի ապահովմանվարչության պետ։ 2020թ.-2021թթ. եղել է ՀՀ Կրթության տեսչական մարմնի «iԳործ» ծրագրի մասնակից է։ 2021-2022թթ. ՀՀ կրթության տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչությունը (ՌԳՍՊՎԳ) վարչության փորձագետ է։ 2023-2024թթ. ՀՀ էկոնոմիկային նախարարություն «Նորամուծությունների և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ծրագրերի ղեկավար։ Ներկայումս Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի Ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի պետն է։ 18 և ավելի գիտամեթոդական հոդվածների հեղինակ է։

Արփինե Հակոբյան՝ 2023 թ. ավարտել է Վանաձորի պետական համալսարանի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժինը՝ ստանալով բակալավրի աստիճան։ Ներկայումս նույն բաժնի մագիստրանտ է։ Որպես ուսանող փորձագետ հանդես է ելել Erasmus+ SMARTI ծրագրերի շրջանակում ձևավորված EMI կենտրոնների արտաքին գնահատման գործընթացում։ Տպագրել է հոդված Մարիբորում՝ PROMOEU ծրագրի շրջանակներում՝ «Մշակութային բազմազանության պահպանում. Մշակույթների փոխազդեցությունը Հայաստանի և ԵՄ-ի միջև» վերնագրով։ Փորձագիտական խմբի ուսանող անդամն է։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	26.05.2024 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Մեկնում Երևանից Գյումրի	12:00	14:00	120 րոպե
2	ՇՊՀ ռեսուրսների և ենթակառուցվածքների դիտարկում	15:00	16:30	90 րոպե

	27.05.2024 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:40	11:30	50 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:40	12:30	50 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5	Հանդիպում համալսարանի Հոգաբարձուների խորհրդի հետ	13:50	14:50	60 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ	15:00	15:50	50 րոպե
7	Հանդիպում գործատուների հետ	16:00	17:00	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	18:30	80 րոպե

	28.05.2024 թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում «Կենսաբանություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Սերվիս» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում «Կենսաբանություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Սերվիս» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Հանդիպում «Կենսաբանություն» կրթական ծրագրի	Հանդիպում «Սերվիս» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական	12:00	13:00	60 րոպե

	ուսանողների հետ		ծրագրի ուսանողների հետ			
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում ստորաբաժանումների (Արտաքին համագործակցության, Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոններ, Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման, Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման, Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության, Տնտեսական գործունեության և ենթակառուցվածքների սպասարկման, Մինչբուհական կրթության կազմակերպման բաժիններ, Գրադարան) ղեկավարների հետ			14:20	15:30	70 րոպե
6	Հանդիպում ՈւԽ և ՈւԳԸ ներկայացուցիչների հետ			15:50	16:30	40 րոպե
7	Բաց հանդիպում			16:40	17:30	50 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:30	18:30	60 րոպե

	29.05.2024 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ֆակուլտետների դեկանների հետ	09:30	10:20	50 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	10:30	11:30	60 րոպե
3	Դասալսումներ և ավարտական աշխատանքների պաշտպանության մասնակցություն	11:40	12:50	70 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (8-10 հոգի) հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում ուսանողների (8-10 հոգի) հետ	15:20	16:20	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե

	30.05.2024 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում Որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե

2	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում համալսարանի ղեկավար կազմի հետ	15:30	16:00	60 րոպե
7	Վերադարձ Գյումրիից Երևան	17:00	19:00	120 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Աշխատաշուկայի ուսումնասիրության հիմքեր	1
2.	ՇՊՀ ռեկտորի 06.09.2022թ.-ի N325 և N325/1 հրամանները	1
3.	ՌԾ գնահատման և վերլուծության հիմքեր	1
4.	ՇՊՀ կայքէջում նախագծերի քննարկման առաջարկներ	1
5.	ՌԾ մշակման համար ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերլուծություն	1
6.	2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց	1
7.	Էթիկայի սկզբունքներն արտացոլող փաստաթղթեր	2
8.	Հիմնադրամի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության հիմքեր	2
9.	Ստորաբաժանումների տարեկան պլաններ և հաշվետվություններ	2
10.	Պաշտոնների նկարագրեր	2
11.	Հիմնադրամի ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն, ռիսկերի և ֆինանսական հնարավորությունների գնահատում	2
12.	Թեմատիկ օրացուցային պլաններ Դասի պլաններ	3
13.	Համաղեկավարմամբ և ոչ համաղեկավարմամբ թեզեր	3
14.	Դիպլոմային աշխատանքներ՝ բարձր և ցածր միավորի արժանացած	3
15.	ՀՀ և գործընկեր այլ բուհերի ՄԿԾ-ների հետ համեմատական ուսումնասիրություն (բենչմարքինգ) և ՄԿԾ-ների SWOT վերլուծություն	3
16.	Ամփոփիչ ատեստավորման նախագահների հաշվետվությունները վերջին երեք տարիների համար՝ ըստ ներկայացված 3 ՄԿԾ-ների	3
17.	Ըստ կրթական ծրագրերի՝ 2022թ. և 2023թ. ընդունելության, նախատեսված անվճար և վճարովի տեղերի, դիմորդների, ընդունվածների տվյալներ	4
18.	Ուսանող/ ՈՒՀ կազմ հարաբերակցություն	4

19.	Վարչական աշխատակիցների ցանկ	4
20.	Մատյաններ /ընտրված ծրագրերի համար՝ յուրաքանչյուր կուրսից մեկական/	5
21.	Մագիստրոսական թեզեր /վերջին երեք տարվա համար յուրաքանչյուր կրթական ծրագրի համար երկուական/	5
22.	Դասալսումների մատյաններ /ամբիոններից՝ մեկական/	5
23.	Դասախոսների պորտֆոլիոներ /յուրաքանչյուր ամբիոնից՝ հնգական/	5
24.	Դասախոսների պլաններ	5
25.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	5
26.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը	5
27.	Ամբիոնների հաստիքացուցակը՝ աշխատավարձերով	5
28.	Ուսումնական ծանրաբեռնվածության նորմատիվները	5
29.	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույց	5
30.	Վերապատրաստման փաթեթներ	5
31.	Դասալսումների հիմքեր և վերլուծություններ	5
32.	Ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն	7
33.	ՇՊՀ բյուջե, նախահաշիվ և կատարողական վերջին երեք տարիների համար	7
34.	Ֆինանսական աուդիտի եզրակացություն	7
35.	Կայքի դիտելիության տվյալներ	8
36.	Պրակտիկայի պայմանագրեր	9
37.	Տեղացի և միջազգային գործընկերների հետ համագործակցության գործող պայմանագրեր	9
38.	Կարիքների վերհանման հարցաթերթեր և լրացված օրինակներ	10
39.	2022-2024թթ. հարցումների վերլուծություն	10
40.	ՈՒԱԲԳՀ բաժնի պլաններ և հաշվետվություններ վերջին երեք տարիների համար	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. համակարգչային լսարաններ,
3. լաբորատորիաներ,
4. ստորաբաժանումներ,
5. գրադարան-ընթերցասրահ,
6. մարզադահլիճներ,
7. հյուրատուն։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱԱՑ- գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ

ԳԽ-Գիտական խորհուրդ

ԹՕՊ-թեմատիկ օրացուցային պլան

ԿԽ- Կառավարման խորհուրդ

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՇՊՀ-Շիրակի պետական համալսարան

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱԿ- Որակի ապահովման կենտրոն

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՊԴ կազմ-պրոֆեսորադասախոսական կազմ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ